

全国百佳图书出版单位  
 时代出版传媒股份有限公司  
时代出版 安徽人民出版社

Հրատարկությունն իրագործվել է  
Անհույի Ժողովրդական հրատարակչատան/ՉԺՀ/  
թույլտվությամբ և աջակցությամբ:



Ոգի-Նաիրի  
Vogi-Nairi

中国民俗文化丛书——婚嫁卷；董强 编著

DONG QIANG  
**MARRIAGE**

Translator - Lilit GHAZARYAN

Stepanakert 2017

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

# ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Թարգմանիչ՝  
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆ

Ստեփանակերտ 2017

ՀՏԴ 391/398(=581)  
ԳՄԴ 63.5(5Չ)  
Ք 530

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

Ք 530 **Ամուսնություն:** Թարգմ. անգլերենից՝ Լ. Ղազարյան:  
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 100 էջ:

Չինական ֆոլկլորին նվիրված հնգհատորյա շարքի «Ամուսնություն» գրքում ներկայացված են չինացիների ամուսնական սովորույթները, դրանց առաջացման պատմությունը եւ առանձնահատկությունները՝ կապված կրոնական հավատալիքների, միստոկացի եւ ազգային այլ երեւույթների հետ: Գիրքը կհետաքրքրի պատմաբաններին, բանահյուսությամբ և ազգագրությամբ զբաղվող մասնագետներին, ընթերցող լայն հասարակայնությանը:

ISBN 978-9939-1-0523-9

ՀՏԴ 391/398(=581)  
ԳՄԴ 63.5(5Չ)

© Anhui People's Publishing House  
Գրքի հեղինակային իրավունքը պատկանում է  
Անհույի ժողովրդական հրատարակչատանը (ՉԺՀ)

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2017/

## ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՆԱԽԵՐԳԱՆՔ. ԿՈՒՅՐ ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

#### ԳԼՈՒԽ ՄԵԿ

#### ԿԱՏԱՐՅԱԼ ՄԻՈՒԹՅՈՒՆ

##### 1. Ծնողների հետ համաձայնեցում

Մենցիոն, պատերազմող երկրների ժամանակաշրջանի գրականության մեջ հիշատակվում է այն փաստը, որ պսակադրությունները պետք է կայանային ամուսնարարի միջնորդությամբ եւ ծնողների հետ համաձայնեցմամբ:



Ծիսական գաղափարները՝ «ծնողների նկատմամբ որդիական բարեպաշտություն» եւ «արական ու իգական սեռերի տարբերակում», որ տարածված էին արեւմտյան ժառ դինաստիայում, ավելի ամրապնդվեցին Գարնան եւ Աշնան ժամանակաշրջանում: Ասել է թե՛ որդին պարտավոր է օգնել ու ենթարկվել իր ծնողներին: Երբ այս ամենը կապեցին պսակադրության ծեսերի հետ, նման ամուսնություններն ըստ այդմ կանոնավորվեցին ասյպես՝ «պսակադրվելիս պարտադիր է ծնողների կարծիքը եւ ամուսնարարի օգնությունը»:

Անտիկ ժամանակներում իրենց երեխաների ամուսնության գործում վերջնական խոսքի իրավունքը տրված էր ծնողներին, քանի որ նրանք էին

համարվում իրենց երեխաների ճակատագրի խոսնակները: Փաստորեն, քանի որ ճակատագիրն աներեւույթ մի բան է եւ այն գոյություն ունի միայն մարդկանց մտքում, ուստի անհրաժեշտ էր մի մարդ, որը կխոսեր նրա համար: Եվ այս պարագայում երկու կողմի ծնողները հարսանիք էին կազմակերպում ճակատագրի անունից: Քանի որ ամուսնության պատմական նախադրյալներ էին համարվում պատրիարքության ստեղծումը, ընտանիքի մոդելը եւ մասնավոր սեփականությունը, նրանք ոչ միայն ուստրեր ու դուստրեր էին, այլ նաեւ իրենց ընտանիքների մի մասն էին, կամ՝ ընտանիքի մասնավոր սեփականությունը: Ավելին՝ նրանց ամուսնությունն ավելի կարելուր նշանակություն ուներ, քան զուտ սեռական հարաբերությունները: Ամուսնական դաշինք կապելը համարվում էր ընտանիքի պահպանման եւ նեցուկ լինելու միջոց, կամ՝ այդ ընտանիքի շահը. այս պարագայում ամուսնության հաստատման իրավունքը, անտարակույս, գտնվում էր ծնողների ձեռքերում: Այսպիսով, ընդհանուր առմամբ, պարզում է, որ ծնողների կարծիքներն էին տնօրինում ճակատագրերը:

Պսակադրությունը համարվում էր սուրբ գործ, քանի որ հավատում էին, որ այն «Երկնային օրենքի» մարմնացումն է, որը միավորում է Յինն ու Յանը (Չինական տեսության համաձայն՝ Յինը եւ Յանը համարվում են տիեզերքի երկու ուժերը. Յինը պասիվ, բացասական ուժն է՝ իզական, Յանը՝ ակտիվ, դրական՝ արական, եւ ծնուն է այն ամենն երկրի վրա, ինչը հիմքն է հանդիսանում մարդկային ամեն տեսակ հարաբերությունների: Անկախ կնոջ եւ տղամարդու միջեւ ամուսնական ձեւ հանդիսացող կապից, այդ ամենն անտեսանելի կերպով կարգավորվում է «Աստծո կամոք», ինչը նաեւ անվանում են «կատարյալ միություն» կամ «ճակատագրական կապ»: Նման գաղափարների կանոնավորման ներքո այն միտքը, որ Աստված է դասավորում ամուսնությունները, դարձան ամենագլխավորն ամուսնություններ վարելիս, եւ ծնողները, այսպիսով, դարձան ճակատագիր-Աստծո համար խոսնակներ:

## 2. Ամուսնարար բառը /սաբաբ/

Հնագույն ժամանակներում, ֆեոդալական ծեսերի սահմանափակման ներքո, մարդիկ անվերապահորեն հավատում էին ձեւավորված որոշ կարծիքների, թե իբր «կնոջ արժանիքը տգիտությունն է», «տղամարդն ու կինը չեն կարող մտերիմ լինել» եւ այլն: Այդ պատճառով նրանց հարաբերությունները խզված էին. հետո ի հայտ եկավ ամուսնարարը եւ շատ կարելուր դերակատարություն ունեցավ: «Երեք միջնորդ ու վեց վկա» եւ «ծննդյան տարեթվերի համապատասխանեցումը» համարվում է ամուսնության

համապատասխանեցման չափօրինակը: Սովորաբար տղաներն ու աղջիկները միմյանց հետ ծանոթանում են ամուսնարարի՝ իրար հանդիպեցնելու միջնորդությամբ, այնուհետև նրանք կարող են «միահյուսվել իրար՝ ինչպես ծառի արմատներ», եւ «երկու ընտանիքներ միավորել»: Այս տեսակ միջնորդավորվող աշխատանքը անվանում են «սաբաբություն»: Իսկ այն կանանց, ովքեր զբաղվում են սաբաբությամբ, անվանում են «լուսնային աստված»՝ որպես նրբագեղ անուն, կամ լայնատարած ասում են՝ «շպպանիկ /սաբաբ/»: Նրանց կոչում են նաեւ այլ անուններով, ինչպես, օրինակ՝ երկաթե կին:

ՉԺՅ-ի հիմնումից հետո բոլոր այդ անունները փոխարինվեցին «ներկայացնող» բառով:

Ամուսնական համակարգի սահմանումից հետո ամուսնարարի դերը արտացոլվեց երեք ձևով:

Նախ՝ չամուսնացած տղամարդկանց ու կանանց միջեւ կապերը զնալով ավելի ու ավելի սահմանափակվեցին. սոցիալական գաղափարախոսության մեջ աստիճանաբար ամրացան կոնֆուցիական ծիսական տեսակետները. հատկապես որոշ ընտանիքներում աղջիկները, ովքեր մեծ նշանակություն էին տալիս գեղեցկությանը, գրեթե մեկուսացած էին հասարակությունից: Այսպիսով, նրանց բնավորությունը, արտաքին տեսքը, ընտանեկան կարգավիճակը եւ այլ գործոններ, բացի իրենց ընտանիքի անդամներից, մյուսներին հայտնի չէին: Շպպանիկը հաճախ այցելում էր ընտանիքներին, եւ ամեն ընտանիքի մասին իր սեփական կարծիքն էր կազմում՝ ներառյալ նրանց կարգավիճակը, հարստությունն ու ուժը, սոցիալական հարաբերությունները, նրանց երեխաների բնավորությունն ու արտաքին տեսքը եւ այլն: Այսպիսով, եթե ծնողները ցանկանային ըստ նմանատիպ չափանիշների, ինչպիսիք են՝ կարգավիճակը, շնորհը, արտաքինը, հարստությունը եւ այլն, ամուսնացնել իրենց որդուն կամ դստերը, նրանք, անշուշտ, պետք է ընտրեին միջնորդին հանձնարարելու ձևը:

Երկրորդ, հնում մարդիկ ամուսնությանը վերաբերվում էին որպես կարեւորագույն գործի, ինչը հարաբերություններ կստեղծեր երկու ընտանիքների միջեւ եւ պատասխանատու կլիներ նախնիներին ու ժառանգներին: Ամուսնական գործընթացի իրականացումը, ասել է թե՛ ամուսնությունների հետ կապված քննարկումների բարդ գործընթացը, նշանադրությունն ու հարսանեկան արարողությունը, լոկ այդ մտքի դրսևորումն է: Եվ այդ գործընթացը պահանջում է մեկին՝ մի միջնորդի, ով այդ երկու ընտանիքների հետ կարող էր հաղորդակցվել: Յետեւաբար միջնորդի դերը անհրաժեշտ էր նախնական եզրակացություն անելու, թե արդյո՞ք այդ ամուսնությունը ծիսական է, թե՛ ոչ:

Երրորդ, չինական ֆեոդալական հասարակության հիմնական առանձնահատկությունն այն է, որ «ծեսերն» ու «օրենքները» նույնպես պետք է համընկնեն: Այն ամենն, ինչն օրինական է, պետք է համապատասխանեցվի ծեսերի հետ: Դեռեւս Ցին դինաստիայի օրոք շապանիկները դասվում էին պաշտոնական եւ անձնական: Պաշտոնական միջնորդի պարտականությունը նման է արդի քաղաքացիական գործերով հարսանյաց ակտերի գրանցման գրասենյակի աշխատակցի աշխատանքին, եւ նրանք առաջարկում են օրինական ամուսնության պաշտպանություն: Յետագայում մասնավոր միջնորդի դերը ավելի հայտնի դարձավ. նա ստանձնում էր այն նույն պարտականությունները, ինչ պաշտոնական միջնորդը:

Շապանիկների պարտականությունները ամրագրված էին Թան դինաստիայի օրենքներում: Այստեղ մեկնաբանվում է, որ ամուսնության հիմնական կանոնավորողը հանդիսանում է միջնորդը: Միեւնույն ժամանակ այն փաստում է, որ եթե ամուսնությունը խախտում է օրենքի դրույթները, միջնորդը պետք է որոշ պարտականություններ իր վրա վերցնի: Փաստում են, որ շապանիկները պաշտպանված են օրենքով, եւ, միեւնույն ժամանակ, նրանք պետք է իրավական պարտականություններ կրեն: Յետագայում Սուն, Յուան, Ցին դինաստիաների օրենքներում նույնպես, Թան դինաստիայի նման, որոշակի կանոնավորումներ մտցվեցին՝ կապված կարգավիճակի, գործառույթների եւ միջնորդի պարտականությունների հետ, ինչը միջնորդի դերը ամուսնությունների կայացման գործում էլ ավելի արժեւորեց:

### **3. Մետաքսե գնդակներ՝ ամուսնություն կարգավորելիս**

Ժամանակին տարբեր գույներով պատրաստված մետաքսե գնդակները պալատական խմբի համար պարելու գործիք էին հանդիսանում. այն նաեւ օգտագործվում էր որպես զարդարանք՝ կանանց ննջասենյակների կամ մահճակալների ձեւավորման համար: Դեռեւս հնում կար մի սովորույթ, ըստ որի՝ հարսնահասակ/հարս դառնալու հասակին հասած/աղջիկը պետք է (լուսնային օրացույցի հատուկ օրերին, սովորաբար հունվարի տասնհինգին կամ օգոստոսի 15-ին) մետաքսե գնդակ նետեր ներքելում հավաքված թեկնածուները կողմը, եւ նա, ուն կհաջողվեր բռնել գնդակը, կդառնար նրա ամուսինը: Անշուշտ, աղջիկը, նախ, պետք է համակրեր իր երկրպագուին եւ հետո գնդակը նրա կողմը նետեր, որպեսզի նա բռներ այն:

Սրա հետ կապված ամենահայտնի պատմությունը տեղի է ունեցել հյուսիսային Սուն դինաստիայում, թվագրված մոտավորապես 964 թվակա-

նին: Հենան նահանգի Լոյան քաղաքում Լյու անունով մի հարուստ մարդ էր ապրում: Նա ուներ Յույի անունով մի աղջիկ, որը պատրաստվում էր գնդակ նետել՝ իր սիրեցյալին գտնելու համար: Այդ լուրը տարածվում էր ամբողջ քաղաքում, եւ Լյուի տան մոտ բազմաթիվ երկրպագուներ են հայտնվում: Խեղճ Յույին առանց մտածելու վերցնում է գնդակը: Ներքեւում խմբված մարդկանց աղմուկ-աղաղակներից շփոթված, հույսը աստժովրա դրած, նա նետում է գնդակը: Այդ ժամանակ Լի Մենգը, որի հագին ցնցոտիներ էին, կարողանում է որսալ գնդակը: Մետաքսե գնդակը հայտնվում է նրա ձեռքերի մեջ, եւ Յույին հուզմունքից իրեն կորցնում է: Հարուստ Լյուն գնդակ որսացողին վերաբերվում էր որպես աղքատ մի տղայի, եւ նրան չէր հավանում, մինչդեռ Յույին, ով սուր աչք ուներ, որոշեց ամուսնանալ նրա հետ: Ըստ պատմական տեղեկությունների՝ Լի Մենգը ամուսնանալուց հետո, իր կնոջը ապացուցելու համար, որ իր որոշումը ճիշտ էր, գիշեր-ցերեկ սովորում ու սովորում էր եւ, ի վերջո, հասնում է իր բաղձալի նպատակին: Նա երեք անգամ դառնում է վարչապետ՝ Թայ կայսեր օրոք (990-994թթ.), ժեն կայսեր օրոք (998-1003թթ.) եւ Սուն դինաստիայի ժամանակաշրջանում:

Սա բացառիկ մի օրինակ է գնդակ նետելու այնքան շատ պատմություններից:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

### ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՈՒՆ ՀԱՐՑՆԵԼԸ

#### 1. Շպպանիկների միջնորդությունը



Յուան ժե-  
նը, ով ապրել է  
Թան դինաս-  
տիայի օրոք,  
իր «Ժինժինի  
լեգենդը» աշ-  
խատություն-  
նում պատկե-  
րել է խելացի  
ու աշխույժ մի  
շպպանիկի: Իր  
բանիմաց գա-

ղափարների շնորհիվ նա ի վերջո միավորում է պարոն ժանգին եւ օրիորդ Ջինջինին: Միջնորդների գործողությունները, որոնք ի սկզբանե միտված էին տղաների եւ աղջիկների համար էական նախադրյալներ ստեղծելուն, համընկնում էին ծնողների կարծիքների հետ: Եւ այս հին ամուսնական սովորույթը պահպանվում է մինչ օրս:

Շպպանիկ լինելու համար պետք է բավական պերճախոս լինել, իսկ հաճախակի այցելություններն այնքան էլ էական չեն: Աղջիկ ու տղա համապատասխանեցնելու հենց առաջին իսկ վայրկյանից նրանք այցելում են այդ երկու ընտանիքներին, որպեսզի նրանց հետ ինֆորմացիա փոխանակեն եւ միաժամանակ ներկայացնեն այդ երկու կողմերի հույսերն ու սպասելիքները, որպեսզի անսպասելի բաներ տեղի չունենան: Գյուղերում այսպիսի մի ասացվածք կար. «Հարյուր ու մի ուտելիք միջնորդի համար», ինչը ենթադրում էր շպպանիկի հաճախակի շրջայցերը: Համադրումը ճարավկություն պահանջող աշխատանք է: Միջնորդը ոչ միայն պետք է տիրապետի իրավիճակին եւ ծանոթ լինի այդ երկու կողմի ընտանիքների հետ, որպեսզի վստահ լինի, որ նրանք ամեն ձեւով համապատասխանում են իրար, այլ նաեւ պետք է ստույգ տեղեկություններ արձանագրի այդ երկու կողմի եւ նրանց ծնողների վերաբերյալ: Նա պետք է կենտրոնանա

նրանց առավելություններն ավելի շատ ներկայացնելու վրա, նրբորեն շրջանցելով թերությունները, եւ պատրաստական լինի հասնելու ամուսնական համաձայնագրին:

Եթե ամուսնարարը ամուսնությունը հաջող է համադրում, այդ դեպքում նա շնորհակալական նվերներ է ստանում: Սովորաբար այդ պատասխանատվությունն իր վրա է վերցնում փեսայի կողմը, եւ նրանք հարսանեկան ծեսից առաջ ամուսնարարին ուղարկում են ճտեր, կոշիկներ, գուլպաներ, հագուստ եւ նման պարագաներ: Երկրորդ օրը ամուսնարարը փեսացուին պետք է ուղեկցի իր հարսնացուի մոտ: Տանուտերը ամուսնարարին պետք է շնորհակալական գումար տրամադրի, գումարի չափը էական չէ: Անկախ գումարի չափից, այն պետք է փաթաթված լինի կարմիր փաթեթում, որի վրա գրված են հաճելի խոսքեր կամ անուններ:

## 2. Ծննդաժամանակի տեղեկության ստուգում

Հին Չինաստանում մարդիկ գերադասում էին օգտագործել «տասը երկնային մարմինը» եւ «երկրային ճյուղերը», որպեսզի մարդկանց ծննդյան մասին մանրամասն տեղեկություններ արձանագրեին: Տասը երկնային մարմինն ունի համարժեք տասը բառ՝ գյա, յի, բինգ, դին, վու, յի, ջեն, քսին, ռեն, գույ, իսկ երկրային ճյուղին համարժեք է տասներկու բառ՝ զի, չու, ին, մաո, չեն, սի, վու, վեյ, շեն, յու, սյու, հայ: Տասը երկնային մարմինների բառերն ու երկրային ճյուղերի բառերը իրար հետ համապատասխանեցնելիս մենք ստանում ենք վաթսուներկու սյունակ՝ առանց կրկնության, եւ ներառում ենք շրջանի մեջ: Հետեւաբար, ինչ որ մեկի ծննդյան ժամը, օրը, ամիսը, տարեթիվը արձանագրելու համար մեզ անհրաժեշտ է չորս սյուն եւ ութ միշ: Այսպիսով, մենք դա անվանում ենք «ութ միշ, կամ՝ ութ սիմվոլ»:

Հնում մարդիկ հիմնականում այս ձեւն էին կիրառում: Երկու կողմերն առաջին հերթին ամուսնարարին ներկայացնում էին իրենց մտադրությունները, եւ եթե նրանք ցանկանում էին միմյանց մասին ավելի շատ բան իմանալ, աղջիկը իր ծննդյան մասին տեղեկատվությունը փոխանցում էր տղային: Տղան այն դնում էր մի սուրբ տեղ կամ ուրիշ մի այլ տեղ: Եթե երեք օրվա ընթացքում երկու ընտանիքներից ոչ մեկում դժբախտ պատահար կամ անհաջողություն չէր արձանագրվում, ապա հրավիրում էին մոզի՝ այդ երկու կողմերի ծննդյան տեղեկությունը ճշտելու, որպեսզի պարզեն՝ նրանք ներդաշնակ են, թե՛ ոչ: Անրաժեշտ էր ստուգել կանանց աստղագուշակ աղյուսակը (ութ միշը), որպեսզի կանխագուշակեին, թե նա իր ապագա կեսուրի կամ կեսրայրի հետ տարաձայնություններ կունենա՞,

թե՛ ոչ: Եթե ամեն ինչ կարգին էր, ապա դրանից հետո կարող էին պատրաստվել ու ամուսնանալ:

### 3. Թեյահրավեր



Ինչու՞ են թեյի հրավիրում: Այդ հարցին մարդիկ տարբեր կերպ են պատասխանում:

Մի պատմությունում ասվում էր, որ Դեղին լեռների տարածքում, որը հայտնի էր իր թեյով, շատ տարիներ առաջ կանայք ու տղամարդիկ այնտեղ աշխատելիս, սովորության համաձայն, երգում էին: Եվ ամեն տարի՝ մարտի 3-ին, նրանք երգում

էին անտիֆոնալ (անտիկ երգ, հիմնականում՝ զուգերգ) երգեր: Եթե այդ զուգերգը ներդաշնակ հնչեր, ապա աղջկա թույլտվությամբ տղան կարող էր նրա հետ մի գիշեր անցկացնել: Հաջորդ տարի, ճիշտ այդ նույն օրը, եթե աղջիկը երեխա ունենար, կարող էր իր երեխայի հետ գնալ տղայի մոտ եւ ամուսնանալ: Եթե երեխա չուներ, նրանք պետք է մի ուրիշ զուգերգ կատարեին: Իսկ եթե այս անգամ էլ բախտը նրան չժպտար, ապա աղջիկը այլևս երբեք չպետք է ամուսնանար: Մի տարի՝ մարտի 3-ին, թեյի դաշտում աշխատող մի գեղանի աղջիկ փորձում էր զուգերգել մի պատանու հետ, սակայն նա մտավախություն ուներ, որ երեխա չի ունենալու: Որպեսզի իրենց ավելի անկաշկանդ զգան, նրանց մեջ մի միտք է հղանում... Գարնան բերքի տոնին թեյի դաշտում աշխատող աղջիկը մի ուրիշ աղջկա հետ թեյի տերեւներ էր հավաքում: Երբ աշխատանքն ավարտեցին, նրանք հոգնածություն ու ծարավ զգացին: Այդ ժամանակ աղջիկն իր ընկերուհուն ասաց. «Երանի այստեղ մի բաժակ թեյ լիներ»: Ընկերուհին ասաց. «Եթե աստված կամենա»: Աղջիկը ուշադիր նայեց չորս կողմը եւ ի վերջո թեյի ծառի տակ մի թեյնիկ տեսավ: Աղջիկները շտապեցին թեյը խմելու: Հենց այդ ժամանակ տղան դուրս եկավ ու բղավեց. «Էս ո՞վ է խմել իմ թեյը»: Հավաքված մարդիկ սկսեցին ծիծաղել ու ասել, որ այդ թեյը իրոք աստված էր պատրաստել, որպեսզի այդ երկու երիտասարդների բախտն իրար հետ կապի: Գյուղում ծերերն այդ լուրն իմանալով մտածե-

ցին, որ դա աստծո կամքն է եւ թույլ տվեցին նրանց ամուսնանալ: Այդ ժամանակից ի վեր թեյ հյուրասիրելը այնտեղ դարձավ ամուսնական սովորույթ: Ամեն տարի, թեյի տերեւներ հավաքելու շրջանում, երիտասարդ տղաները թեյամանում թեյ են պատրաստում եւ ուղարկում թեյի պլանտացիա՝ աղջիկներին առաջարկություն անելու նպատակով: Եթե աղջիկը թեյից օգտվի, դա կնշանակի, որ նա ընդունում է տղայի սերը:

Ի դեպ, թեյով դյուրեւելը խոսում է նաեւ թեյի անփոխարինելի հատկությունների մասին: Չնուն մարդիկ այն կարծիքին էին, որ թեյն իր անփոխարինելի հատկանիշներով հավասարազոր է նշանադրության նվերներին: Չենց որ աղջիկն այն ընդունի, նա պետք է մինչեւ մահ հավատարիմ մնա իր ամուսնուն եւ «նրան ուրիշի հետ փոխարինելու» ոչ մի տարբերակ չունի, ինչը նշանակում է, որ նա ոչ մի դեպքում չի կարող հեռանալ նրանից: Չետագայում «թեյ խմելը» կամ «թեյ առաջարկելը» դարձան հրավիրելու հոմանիշներ:

## ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

### ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՔՈՒՄ

#### 1. Բարեպատեհ առիթի ընտրում



Թեյի ծեսին հաջորդում է ամուսնության օր նշանակելու գործընթացը: Դեռևս անհիշելի ժամանակներից, Չինաստանում զոյություն է ունեցել «տարեգիրք», եւ ամուսնությունների ժամանակ մարդիկ սովորաբար օգտվում էին այդ տարեգրքերից եւ ընտրում էին համապատասխան ժամանակ, որպեսզի տեսնեն, թե ում հերթն է՝ «օրինության աստծո՞», թե՛ «չարիքի աստծո»: Նրանք երկու կերպար

ունեն. մեկը օրհնաբեր աստվածն է, մյուսը՝ աղետաբեր: Որպեսզի ճշտենք, թե այդ տարին, ամիսը եւ օրը ամուսնության համար բարեպատեհ են, թե ոչ, մենք, նախեւառաջ, պետք է ճշտենք ժամանակը եւ հերթափոխի մեջ գտնվող պահապան աստծուն, եւ ապա որոշ աշխատանքներ տանենք այդ ուղղությամբ, որպեսզի փնտրենք բարուն եւ խուսափենք չարից: Չինացիների համար ամուսնության օր ընտրելը շատ լուրջ հարց է: Մասնավորապես, նրանք մեծ ուշադրություն են դարձնում նահանջ տարուն ու նահանջ ամսին: Երկու կամ երեք տարին մեկ նահանջ տարի է լինում, այսինքն՝ այդ տարուն մենք ունենալու ենք երկու «գարնան սկզբի օրեր» եւ մեկ նահանջ ամիս: Ամուսնության համար լավագույն ժամանակը նահանջ տարին է: Լուսնային օրացույցի մարտ, հուլիս եւ սեպտեմբեր ամիսներին պետք է խուսափել պսակադրվելուց, քանի որ այդ ամիսներին նշում են «գերեզման մաքրելու օր», «անդրերկրային հոգիների փառատոն», եւ «կրկնակի իններորդ փառատոն» հիշատակի արարողությունները, որոնք բոլորը ավանդական ուրվականների փառատոներ են, ուստի հարմար չէ ուրախ միջոցառումներ կազմակերպել: Ըստ լուսնային օրացույցի՝ ամենահարմար ամիսն օգոստոսն է, երբ լուսինը գնդաձեւ է: Ի հավելումն,


որոշ առակներ են պատմում Սանիանգի (Երեք չարքերի տիրուհին) լեգենդի մասին: Ասում են, որ միջնորդ-աստվածը Սանիանգի համար հարսանիք չնախատեսեց, եւ Սանիանգը, որպես վրեժ, սիրում էր նրան ընդդիմանալ: Նա հաճախ էր խափանում մարդկանց հարսանիքները: Եվ ամեն ամսվա մեջ մի քանի օրեր կան, որոնք ամուսնության համար բարեպատեհ չեն. դրանք են՝ Երրորդ, յոթերորդ, տասներեքերորդ, տասնութերորդ, քսաներկուերորդ եւ քսանյոթերորդ օրերը, քանի որ այդ օրերին Սանիանգը միջամտում է: Գոյություն ունեն մաեւ որոշ համաձայնագրեր՝ ծնողների ծննդյան օրերին հարսանիք չտոնելու վերաբերյալ:

Այնուամենայնիվ, ամուսնության համար բարեպատեհ օր ընտրելու սկզբունքը կախված է լինում հիմնականում հարսնացուի ծննդից: Որոշ հանգամանքներից ելնելով՝ ամուսնության համար նախատեսված հարմար օրը կարող է փոխվել: Օրինակ, եթե կողմերից մեկի հետ դժբախտ դեպք է պատահել՝ ծնողի կորուստ, այդ դեպքում ամուսնությունը պետք է ստիպված հետաձգվի, քանի որ ոչ ոք չի կամենա սգի մեջ ամուսնանալ: Պատճառներից մեկն այն է, որ դրանով նրանք ցանկանում են իրենց հարգանքի տուրքը մատուցել հանգուցյալին, մյուս պատճառն էլ այն է, որ նրանք վախենում են, որ վատ դեպքը չար բախտ կծգի բարի գործի վրա: Ի հակադրություն, լինում են մաեւ դեպքեր, երբ ամուսնությունն արագացնում են այն հույսով, որ լավ առիթը կվանի անհաջողությունները:

## 2. Ամուսնական համաձայնագիր

Ամուսնական պայմանագիրն այն համաձայնագիրն է, որն անձամբ կազմված է հարսի ու փեսայի ընտանիքների կողմից՝ ամուսնալուծությունները կանխելու նպատակով: Պայմանագիրն ունի իրավական ուժ, թեեւ այն նման չէ այսօրվա կառավարության կողմից տրվող ամուսնության վկայականին:

Մարդկանց մոտ գոյություն ունեն ամուսնական պայմանագիր գրելու մի շատ հետաքրքիր ձեւ, որը գրվում էր աղջկա կողմից տղայի կողմին: Այն գրում էր հարսի հայրը. կրթության աստիճանը եական չէր, կարելի էր ազնվությունն էր, ուստի պայմանագիրը նույնպես շատ անմիջական էր: Նախ, մա տղայի ծնող-



ներին հարցնում էր, թե արդյո՞ք նրանք կարդացել են Չորս Գրքերը (չինական դասական նյութեր, որոնցում ներկայացված են կոնֆուցիական հիմնական արժեքներն ու հավատքի համակարգը), ապա նա ազնվորեն հաստատում էր, որ ինքը դեռ չի կարդացել: Իսկ հետո նա ասում էր, որ դա պարտադիր չէ, քանի որ նա գիտի, որ ճշմարիտն այն է, որ երբ աղջիկն ու տղան հասնում են որոշակի տարիքի, նրանք պետք է ամուսնանան: Այնուհետև նա շարունակում էր, ասելով, որ ինքն ունի մի փոքր դուստր, որը տասնվեց տարեկան է, եւ ով բազում թերություններ ունի, քանի որ նրանք նրա հետ խիստ չեն վարվել: Եվ որքան երախտապարտ նա կլիներ, եթե նրա աղջկա հանդեպ համբերատար լինեին: Եթե նրա աղջիկը ամուսնությունից հետո որեւէ սխալ գործի, նա հույս ուներ, որ նրան կներեն: Վերջում նա գրում էր իր դստեր ծննդյան մասին տեղեկությունը, ինչը նշանակում էր, որ նա իր համաձայնությունն է տալիս այդ ամուսնությանը: Այս ամուսնական համաձայնագրից ենթադրվում է, որ չինական ամուսնահամակարգում տղամարդիկ կանացից ավելի բարձր կարգավիճակ են վայելում: Ավելին, այն խորապես արտացոլում է չին ժողովրդի համեստ ոգին: Այս կարճ համաձայնագրով մեր մեջ ուրվագծվում է հարսնացուի ընտանիքի մասին ընդհանուր պատկերը եւ գրողի բնավորությունը:

### 3. Հարսանեկան նվերների պատրաստում

Հարսանյաց նվերները կարելի է սահմանել որպես՝ փեսայի կողմից հարսի կողմին ուղարկվող ընծաներ: Ընծառաքման աշխատանքը հաճախ ստանձնում է հարսի ընտանիքի կողմից վստահված ամուսնարարը, սակայն լինում են նաեւ դեպքեր, երբ փեսացուի մայրը



անձամբ ինքն է գնում հարսնացուին նվերներ փոխանցելու: Երբ նվերները հասնում են հարսնացուին, նա պետք է հարգալից վերաբերմունք ցուցաբերի եւ որոշ պատրաստություն տեսնի, որպեսզի ցույց տա իրենց լուրջ վերաբերմունքը: Հարսանեկան նվերները հիմնականում լինում են զարդեր: Սովորաբար այն իր մեջ ներառում է չորս իր՝ վզնոց, ականջի

օղեր, ապարանջան եւ մատանի: Ենթադրվում է, որ նվերներ ուղարկողը պետք է հարսնացուին օգնի, որպեսզի նա կրի դրանք: Լինում են նաեւ այլ նվերներ, ինչպես, օրինակ՝ սանրն ունի մագերն իրար կապելու նշանակությունը: Հին ժամանակներում, երբ հարսնացուն իր հարսանիքի օրը դիմահարդարվում էր, նա պետք է իր վարսերը սանրեր ու միաժամանակ երգեր իր ցանկությունները, որ նրանք պետք է իրար սիրեն եւ մի ողջ կյանք միասին ապրեն:

Ասեղնագործ կոշիկներ. չինարենում կոշիկ բառի արտասանությունը շատ նման է միասին լինելու արտասանությանը, ուստի դրանք խորհրդանշում են օրհնանք, որ զույգերը միմյանց կսիրեն ու միասին կծերանան: Կոշիկների վրա կարող են պատկերված լինել զանազան պատկերներ, ինչպես, օրինակ՝ լոտոս, ինչը խորհրդանշում է փոքրիկի լույս աշխարհի գալը, երկու թիթեռներ՝ ծաղիկների վրա, պարող վիշապներ եւ այլն:

#### 4. Ռուկի

Ռուկին փայտիկ է, որ փեսացուն օգտագործում էր ավանդական հարսանեկան ծեսերի ժամանակ՝ հարսնացուի գլխի կարմիր քողը բացելու համար: Մեր օրերում այն դարձել է հարսանեկան նվեր, որ ծնողներն ուղարկում են իրենց ամուսնացող դստերը, բարեմաղթելով, որ նա ունենա երջանիկ կյանք եւ զույգը լինի ներդաշնակ:



Հայելի. այն խորհրդանշում է կատարելություն, հաջողություն, նորահարսի հմայք եւ մաղթում է, որ հարսնացուն լինի միշտ երիտասարդ ու գեղեցիկ:

Չափման գործիք. հնում դրանով բրինձ էին չափում: Հարսանիքի ժամանակ այն կիրառվում է՝ ի նշան փեսացուի կարողության ու հարստության: Եթե ձեր դուստրն ամուսնանա դրա օգտատիրոջ հետ, ապա նա ամբողջ կյանքում ոսկու մեջ կապրի:

Մկրատ. այն ավանդական «վեց վկայություններից» մեկն է: Այն ցույց է տալիս, որ պսակադրությունից հետո հարսնացուն կունենա բարեկեցիկ ապագա:

Փայտե հաշվիչ. այն խորհրդանշում է նորապսակների խաղաղ ու հարուստ հետագա կյանքի գաղափարներն ու պլանները, բարեմաղթելով, որ իրենց ֆինանսական միջոցները նպատակային կտնօրինեն եւ ընտանիքի համար մեծ եկամուտ կապահովեն:

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

### ԳԼՈՒԽ ՄԵԿ

#### ՀԱՐՍՆԱՑՈՒՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՄՈՐ ՏՆԻՑ

##### 1. Օժիտ առաքելը



Պիտոյատուփը, հայելիով եւ դիմահարդարման պարագաներով, փայտե մի արկղիկ է, սակայն այստեղ մենք օգտագործում ենք այն որպես հարսանիքի օժիտ: Առհասարակ հարսնացուի ծնողները աղջկա համար օժիտ են պատրաստում, որպեսզի իրենցից հեռանալուց հետո նրա կյանքն ավելի բարելավվի, կամ նրա ամուսնու ընտանիքին առաջարկում են որոշ ֆինանսական օժանդակություն, կամ՝ այլ կարիքները հոգալու համար որոշակի գումար: Հարուստ օժիտը կարող է օգնել, որ աղջիկն իր ամուսնու ընտանիքում ավելի լավ դիրք զբաղեցնի: Բացի այդ, օժիտը հանդիսանում է նաեւ հարսնացուի ընտանիքի ֆինանսական կարգավիճակի ինդիկատորը:

Վերոնշյալ հանգամանքից ելնելով՝ հարսնացուի ծնողները սովորա-

բար երկար ժամանակ են հատկացնում դատեր օժիտը պատրաստելու համար: Բայց օժիտը փեսացուին պետք է հասնի ոչ ուշ քան հարսանիքի օրը: Գուանտոն նահանգում մարդիկ օգտագործում էին կամֆորափայտե արկղեր՝ օժիտ տեղափոխելու համար. քանի որ կամֆորափայտը ամուր է եւ դիմացկուն, այն խորհրդանշում է նորապսակների ամուր մշտնջենական սերը, եւ որ նրանց սերը կապրի առհավետ: Օժիտի գումարի հետ կապված մի այլ սովորույթ կար, որը չափվում էր «փոխադրում» միավորով. օժիտի մի սեղանը մի «փոխադրում» էր: Ունեւոր ընտանիքը սովորաբար պատրաստում էր տասից քսան «փոխադրում»: Մեծահարուստ ընտանիքը պատրաստում էր տասնյակ եւ նույնիսկ հարյուր քսան «փոխադրում»:

Մարդիկ երթերով ուրախ-զվարթ քայլում են քաղաքի փողոցներով՝ տեղափոխելով իրենց օժիտը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ փոխադրումների թիվը պետք է զույգ թվով լինի, եւ նրանք օժիտի ամեն կտորի վրա ամրացնում են թղթից կտրած օրհնության խոսքեր՝ մթնոլորտն ավելի երջանկացնելու համար: Սեղանի վրայի բոլոր ափսեները պետք է լիքը լինեն: Դրանք առատորեն պետք է լցված լինեն արմավներով, գետնանուշերով, շագանակներով, նռներով, լիչիներով ու այլ տարատեսակ մրգերով: Այդ ամենն անվանում են «հարսանեկան մրգեր», քանի որ այդ մրգերի անունների արտասանությունը համանման է այն օրհնյալ բառերին, որ հնչում է այսպես. «Որքան հնարավոր է՝ շուտ բալիկ ծնվի»:

Օժիտ հանձնելը բաղկացած է երկու փուլից. մեկը առաքումն է, մյուսը՝ ողջունումը: Առաքումն այն է, որ նորահարսը ուղարկում է օժիտն իր փեսացուին: Օժիտ փոխադրող մարդկանցից բացի հարսնացուն հրավիրում է իր հարազատներից մի քանիսին, որպեսզի նրանց հետ զնան եւ հետեւեն այդ ամենին: Ինչքան շատ մարդ է ներգրավված լինում օժիտ-առաքման գործընթացին, այնքան հարսնացուի ընտանիքը հարուստ է երեւում: Երբ օժիտը հասցնում են փեսային, նա հրավիրում է իր ազգականներին ու ընկերներին, որպեսզի վերջիններս դիմավորեն օժիտը, որը կոչվում է օժիտ-ընդունում:

Չնում օժիտը համարվում էր հարսի մասնավոր սեփականությունը: Այն պատկանում էր հարսին, ուստի փեսայի ընտանիքը իրավունք չունեւր այն օգտագործել կամ խառնվել: Եթե նրանք ցանկանային այն օգտագործել, ապա առաջին հերթին պետք է հարսից թույլտվություն խնդրեին: Անտանելի վարքագիծ կհամարվեր, եթե փեսայի մայրը տիրեր հարսի օժիտին: Ամուսնալուծվելու դեպքում հարսը իր օժիտը կարող էր իր հետ տանել: Չարսի մահանալու դեպքում նրա օժիտը ժառանգում էին նրա զավակները: Երեխաներ չունենալու դեպքում նրա ամուսնու ընտանիքը կրկին իրա-

վազուրկ էր տնօրինելու նրա օժիտը. այն պետք է վերադարձվեր հարսի ծնողներին:

## 2. Հարսանիքին արտասվելը



Հարսանիքին արտասվելը նշանակում է, որ հարսնացուն լալիս է, որպեսզի արտահայտի իր թախիծն ու անգամ տխրությունը՝ իր ընտանիքից հեռանալու համար: Մի այլ ասացվածքում այսպես է մեկնաբանվում. քանի որ հնագույն ժամանակներում կանայք ամուսնությունից հետո զրկվում էին ազատությունից, ուստի

հարսանիքի օրը նրանք արտասվում էին, որպեսզի դատապարտեն այդ անարդար ամուսնական համակարգը: Այսօր մեզ համար շատ դժվար է հասկանալ հարսանիքներում արտասվելը, սակայն ակնհայտ է, որ այն ժամանակներում այսօրվա պես հարմարավետ փոխադրամիջոցներ չկային, եւ հարսնացուի համար իրոք շատ դժվար էր ամուսնանալուց հետո այցելել իր ծնողներին: Ավելին, իրականում այն ժամանակ հարսնացուները այսօրվա ազատությունը չունեին՝ հարսանիքից հետո այցելել իրենց ծնողներին, քանի որ դրա համար նրանք ամուսնուց թույլտվություն պետք է ստանային: Հարսանիքին արտասվելը բավականին առանձնահատուկ ամուսնական սովորություն է՝ «արտասվելու», «երգելու», «տխրության» տարբերակիչ գծերով, բնորոշ բացառապես կանանց, որոնք խուճբ կազմած տարերայնորեն արտասվում են: Սա ավանդական սովորություն է, որը լայն տարածում է գտել ողջ Չինաստանում, եւ մասնավորապես էթնիկ խմբերում:

Հարսանիքի համար արտասվելու ժամանակը սովորաբար հարսանիքից մի օր առաջ է լինում, սակայն Թուջա ազգության համար հարսանիքից առաջ արտասվելը սկսվում է պսակադրությունից երեք կամ յոթ օր առաջ: Հարսնացուն անգամ կարող է արտասվել մի քանի շաբաթ, ամիս կամ նույնիսկ երեք ամիս առաջ: Նա կարող է լաց լինել ընդմիջումներով

Եւ այդ ժամանակահատվածում նա պետք է իրեն ազատ զգա եւ արտասովի այնքան, որքան ցանկանա: Հարեւաններն ու հարազատները կարող են զալ ու հրաժեշտ տալ նրան: Այդ ժամանակ ընտանիքի անդամները պետք է նրանցից ինչ-որ մեկի համար լաց լինեն, որը համարվում է ողջույն, դրանով իսկ արտահայտելով իրենց երախտագիտությունը: Հարսանեկան լացի գազաթնակետը սկսվում է հարսանիքից մի գիշեր առաջ, այն ժամանակ, երբ նա բարձրանում է ամուսնական սեղան /պատգարակ/ աթոռին: Այդ ժամանակ արտասվելը պետք է ընթանա ավանդական կարգով. «արտասվել ծնողների համար», «արտասվել ավագ եղբոր համար», «քույրերի համար», «մորեղբոր, հորեղբոր համար», «ուղեկցող հյուրերի համար», «միջնորդի համար», «նախնիների համար», «հարսանեկան սեղան աթոռ բարձրանալու համար»:

Եթե ինչ-որ մի հարս չլացի, նրան ողջ գյուղում ծաղր ու ծանակի կենթարկեն: Անգամ եղել է ծայրահեղ մի դեպք, երբ մայրը ծեծել է իր աղջկան՝ հարսանիքին չարտասվելու համար: Հավանաբար աղջիկը շատ երջանիկ էր մորից ազատվելու համար:

Արտասվելու երգերի քնարերգությունը հիմնականում մեզ են փոխանցվել սերնդե սերունդ, բայցեւայնպես կան նաեւ որոշ իմպրովիզացված կոմպոզիցիաներ: Այդ երգերը հիմնականում ծնողներից նրանց փոխանցված սիրո մասին են, իրենց քույրերի ու եղբայրների հոգատար վերաբերմունքի մասին, նրանց տխրության, որ կորցնելու են իրենց օրիորդությունը, եւ գալիք նոր կյանքի հանդեպ նրանց շփոթության ու անհանգստության մասին: Կան նաեւ որոշ երգեր իրենց ամուսնությունից դժգոհելու մասին, միջնորդից դժգոհ լինելու մասին, որ իր համար անհամապատասխան փեսացու է ընտրել:

### 3. Հարդարում-դիմահարդարում

Հարդարում-դիմահարդարումը բաղկացած է երկու մասից՝ ծածկել գլուխը եւ երեսը դիմահարդարել: Գլուխը ծածկել՝ նշանակում է տղայի գլուխը թագանման զարդարանքով ծածկել, իսկ աղջկա վարսերը ետեւից կեղծամով հավաքել, ինչը վկայում է, որ նրանք արդեն հասունացել են: Կեղծամը օգտագործում են, որպեսզի ցույց տան, որ հարսնացուն այլեւս երեխա չէ, այնպես որ նրանք պետք է նրա վարսերի հետ որոշ փոփոխություններ անեն: Սովորաբար կեղծամը անձամբ պատրաստում են հարսի իգական սեռի հարազատները, ինչպես օրինակ՝ նրա մորաքույրը: Նրանք հարսի մազերը հավաքում են կեղծամով, օգտագործելով ցանց՝ կեղծամը



քողարկելու համար, վարսերի ձողիկ, որն անցնում է կեղծամի միջով, հետո զարդարում են ծաղիկներով, մեֆրիտե ուլունքներով եւ այլ զարդարանքներով: Դրան հաջորդում է դիմահարդարման գործընթացը, կամ «դեմքի բացումը», ինչը նույնպես հարսանեկան սովորույթ է: Այս ետապում հիմնականում հարսի դեմքի վրայից թելի միջոցով հեռացնում են նուրբ մազերը, շտկում են հոնքերը, բացում են ճակատը: Աղջիկը կարող է այսպես դեմքը բացել միայն մեկ անգամ՝ ի նշան ամուսնության:

Չետագայում, եթե նա ամուսնալուծվի կամ կրկին ամուսնանա, նա այլեւս երեսը բացելու կարիք չի ունենա: Որոշ վայրերում ընտանիքը պատրաստում է «երեսբացման խնորագնդիկներ» եւ բաժանում է իրենց հարազատներին ու հարեւաններին, որպեսզի վերջիններս օրհնանք հղեն: Որոշ վայրերում դիմահարդարվելիս պետք է երգեն «դեմքը բացելու երգը»՝ հուսալով, որ հարսը շուտով երեխա կունենա:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

### ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ԴԵՊՒ ՓԵՍԱՑՈՒԻ ՏՈՒՆ

#### 1. Ճոխ հարսանեկան զգեստ



Շքեղ հարսանեկան զգեստը դասվում է այն հագուստների շարքին, որը հարսնացուն կրում է հարսանիքի օրը. հին ժամանակներում այն մեծամասամբ հայտնվում էր հարուստ ընտանիքներում: Ձգեստը իր մեջ ներառում է՝ փյունիկապատկեր թագ եւ անպանման թիկնոց: Փյունիկա-

պատկեր թագը բազմերանգ գլխարկ է, որը հնագույն ժամանակներում կրում էին ազնվական ծագումով կանայք: Անպանման թիկնոցը բազապան հագուստի մի տեսակ է, որը ծածկում է ուսերը: Հնագույն ժամանակներում կանանց համար մեծ պատիվ էր համարվում կրել փյունիկապատկեր թագն ու անպանման թիկնոցը: Այս ավանդական սովորույթն ունի ավելի քան ութ հարյուր տարվա պատմություն: Ինչու՞ նրանց դատրերը արժանացան նման նրբագեղ հագուստ կրելու բարձրակարգ պատվին: Ասում են, որ հարավային Սուն դինաստիայում Ջին Կուն՝ Ջին թագավորության գեներալը, զավթել էր Լինան /այսօրվա Հանչժոու/՝ հարավային Սուն դինաստիայի մայրաքաղաքը: Ժառ Գուն, Սուն դինաստիայի կայսրը, հետապնդվում էր Ջինի գործի կողմից: Այդ ժամանակ փախուստի ոչ մի ելք չկար: Բայց բարեբախտաբար հին տաճարի դիմաց մի աղջիկ գետնին իր հացահատիկն էր չորացնում: Նա թաքցնում է թագավորին հացահատիկի զամբյուղի մեջ եւ նստում է դրա վրա: Այսպես էլ թագավորը փրկվում է: Իր երախտագիտությունը հայտնելով՝ թագավորը աղջկան պատմում է իր ով լինելը եւ խոստանում, որ գահը ետ վերցնելու դեպքում նա, իր երախտագիտությունը հայտնելու համար, նրան իր հետ պալատ կտանի: Թագավոր-

րին հաջողվում է փրկվել եւ նա պալատ է վերադառնում: Նա կատարում է իր խոստումը եւ աղջկան իր հետ պալատ է տանում՝ որպես իր կայսերական հարձերից մեկը /երկրորդ կինը/: Աղջկան իրոք դուր է գալիս այդ առաջարկությունը, եւ նա մեծ հաճությամբ կրում է փյունիկապատկեր թագն ու ամպանման թիկնոցը:

Հետագայում Չզեցյան շրջանում աղջիկները սկսեցին հետեւել այդ օրինակին: Ամուսնանալիս նրանք նույնպես կրում էին փյունիկապատկեր թագ եւ ամպանման թիկնոց: Շուտով այս սովորույթը տարածվեց Չզեցյան շրջանում, եւ մարդիկ այդ պատմությունը տվեցին «Չզեցյան աղջիկներ՝ թագուհիների նման» անվանումը:

## 2. ԴՊՆԵՐԸ ԿՈՂԱԵԼԻ ՈՒ ԽՈՂՆԴՈՒՄԵՆԸ

Հարսին դիմավորելու գնացող մարդկանց հոծ բազմությունը, սեղան հարսնաթոռը բարձրացրած, երգելով ու պարելով մոտենում էր հարսի տանը: Ըստ ավանդույթի, հարսի կողմը պետք է փակեր դուռը եւ սեղան հարսնաթոռը ներս չթողներ: Սա կոչվում է դՊները կողպել ու ներս չթողնել:

Ասում են, որ սեղան հարսնաթոռի համար խոչընդոտներ ստեղծելու նպատակը խոսքերով ու դատողություններով իրար հետ բանավիճելն էր. այսպես նրանք ժամանակ էին անցկացնում, մինչեւ որ վրա հասներ ճիշտ պահը: Երբեմն սեղան հարսնաթոռը ժամանում էր կեսօրվա ժամը մեկին կամ երկուսին, սակայն նրանք ստիպված պետք է սպասեին մինչեւ ժամը հինգը կամ յոթը՝ մայրամուտին: Այդ ընթացքում հարսնացուի ընտանիքը պետք է իրենց տուն հրավիրեր տեղի կիրթ, բանիմաց մարդկանց, որպեսզի վերջիններս հետեւեին դռանն ու խրթին հարցադրումներ անեին փեսայի կողմին: Նրանց ուղղված հարցերը կամայական էին, աշխարհագրությունից մինչեւ աստղագիտություն՝ չհիմնավորված ու անսահման: Փեսացուի կողմը նույնպես պատրաստված էր ներկայանում: Նրանք հարսնառների մեջ ընդգրկում էին այնպիսի մարդկանց, ովքեր ունեն սուր միտք եւ ճարտար լեզու: Այսպես երկու կողմի ուժերը իրար հավասար էին, այնպես որ լեզվակռիվ անելն անխուսափելի էր:

Երբ հարսնաձուները հարսի տուն էին մտնում, նրանք հերթով նստում էին ընպելիքների սեղանի առջեւ: Հետո, երբ նրանց ոչ ոք չէր տեսնում, նրանք աննկատ իրենց լայն թեւքերի մեջ թաքցնում էին երկու թեյի բաժակ, ինչը նշանակում էր, որ նրանք գողանում են նրանց ժառանգին: Սակայն այդ թեյի բաժակները չպետք է իրենց հետ տանեին. մինչ հավաքվածները կհեռանային, նրանք պետք է այդ բաժակները նորից իրենց տե-

ղը դնեին:

Երբ սեղան հարսնաթոռը ետ հասցնում էին փեսայի տուն, երջանիկ երկու հարսնաքույրերը օգնում էին, որպեսզի հարսը իջնի աթոռից: Այդ ընթացքում ուրիշ երկու մանկահասակ աղջիկներ օգնում էին, որպեսզի ճանապարհի վրա կարմիր ծածկոցներ փռեն. դրանք գցում էին հերթով, մեկը մյուսին փոխարինելով, անկյուն առ անկյուն, ծայր առ ծայր, որպեսզի նոր կոշիկներ հագած նորահարսի ոտքը գետնին չդիպչի: Կարմիր քողը գլխին, կարմիր ծածկոցը ոտքերի տակ, հարսնացուն չէր կարող տեսնել երկինքը եւ չէր կարող զգալ գետնին իր ոտքերի տակ:

### 3. Սեղան հարսնաթոռը

Սեղան հարսնաթոռը, կամ ամուսնական սեղանը, յուրատեսակ աթոռ է, որը օգտագործում են Չինաստանում՝ ավանդական հարսանիքների ժամանակ: Սովորաբար այն զարդարում են վառ կարմիր գույներով՝ ի նշան առաքինության եւ երջանկության, ուստի այն նաեւ անվանում են «կարմիր սեղան»: Սեղան հարսնաթոռը լինում է երկու տեսակ, մեկը «կոպիտ ոճն է», իսկ մյուսը՝ «նուրբ»: Կոպիտ ոճի աթոռի բոլոր չորս կողմերը փայտյա են, որի մոդելավորումը նման է պոզողայի գագաթին, որն ունի չորս վեր խոյացող եւ չորս սուր անկյուն: Այս ոճի աթոռի գործածումը տարածված է Չինաստանի հարավային շրջանում: Մինչդեռ նրբաոճը կիրառվում է Չինաստանի հյուսիսային հատվածում: Սեղան աթոռը չորս կողմից փաթաթված է կարմիր մետաքսով: Այդ կարմիր մետաքսներին անվանում են սեղան-վարագույր:



Երբ փեսան ժամանում է հարսի տուն, նրան թույլ չեն տալիս, որ նա

անմիջապես հանդիպի նորահարսին: Մինչ սպասված ժամանակը գա, թեժ սակարկում պետք է ընթանա: Երբ վրա է հասնում սպասված պահը, ուղեկցորդուհին նորահարսին դուրս է բերում իր ներքնասենյակից եւ փակում է դուռը: Նախ, նրանք իրենց հարգանքի տուրքը պետք է մատուցեն իրենց նախնիներին, հետո թեյ մատուցեն եւ հրաժեշտ տան սրահի կենտրոնում նստած իրենց ծնողներին: Հրաժեշտից հետո ուղեկցորդուհին հարսի գլխին դնում է փյունիկ-թագը եւ դեմքը ծածկում է կարմիր մետաքսե քողով, որը հնում դիմաքող էին անվանում: Այնուհետեւ նա հարսին իր մեջքին դրած տանում է դեպի սեղան աթոռը: Երբ հարսը տեղավորվում է, նրա ոտքերի տակ դնում են պղնձե լագանը, որի մեջ լցված է մաքուր ջուր եւ երկու պղնձե մետաղադրամ: Այնուհետեւ հարսին տալիս են պղնձե մի հայելի: Այդ բոլոր արարողություններն ավարտելուց հետո սեղան աթոռի դուռը փակում են ու կողպում պղնձե կողպեքով: Դրանից հետո հրավառություն են անում, բարձրացնում են սեղան հարսնաթոռն ու ճամպա ընկնում դեպի փեսայի տուն: Ներսում նստած նորահարսը արտասվում ու կաղենցիայով երգում է՝ դրսում հնչող երաժշտությանը համահունչ, որը անվանում են «սեղան հարսնաթոռին արտասվելը»: Միեւնույն ժամանակ սեղանի ուղեկցորդուհին հարսի ականջին ինչ-որ բաներ է շշնջում՝ կյանքի փորձից: Երթը պետք է անցնի բանուկ փողոցների միջով, ինչը նշանակում է, որ «նորապսակների բախտը կբացվի»:

Երբ ամբոխը մոտենում է փեսայի տանը, պատվո պահակախումբը երաժշտության ներքո հրավառություն է անում: Փեսացուն իջնում է ծիուց, բացում է կապարակնիքը, վերցնում է բրնձով լցրած բամբուկե արկղը, ապա, մի բուռ բրինձ վերցնելով, նետում է սեղան հարսնաթոռի կողմը: Դրանից հետո նա ոտքով երեք անգամ հարվածում է սեղանի դռանը, իմաց տալով հարսին, որ արդեն ժամանակն է:

Այնուհետեւ նա բացում է դուռը, եւ ուղեկցորդուհին հարսին իր մեջքին առած լայն քայլքով անցնում է փեսայի սենյակի դիմաց դրած հրե ափսեյի վրայով, ապա հասնում է հարսնասենյակ եւ նորահարսին նստեցնում է իր նոր անկողնու ծայրին: Մի քիչ շունչ առնելուց հետո ուղեկցորդուհին նրան ուղեկցում է դեպի նախասրահ, որտեղ հասնացուն, նախ, խոնարհվում է դռան աստծո առաջ, ինչից հետո փեսան նրա դեմքից հեռացնում է կարմիր քողը, եւ նրանք ծնկի եկած երկրպագում են երկիրն ու երկինքը: Այնուհետեւ նրանք պետք է մոտենան նախասրահի ամպիոկանուն եւ ծնկի գալով իրենց հարգանքի տուրքը մատուցեն նախնիներին: Հաջորդիվ, նրանք պետք է ծնկաչոք խոնարհվեն ամուսնու ծնողների առաջ եւ նրանց թարմ արմավենու եւ լոտոսի տերեւներից պատրաստած թեյ մատուցեն: Փեսայի ծնողները վերցնում ու խմում են թեյը, հետո փոխարենը նրանց են

հանձնում կարմիր մի փաթեթ, որի մեջ գումար կամ ոսկեղեն է դրված լինում: Այնուհետև փեսայի ծնողները իրենց հարսին ուղեկցում են եւ մեկ առ մեկ ծանոթացնում իրենց հարազատների ու ընկերների հետ՝ հեռու եւ մոտիկ, ահել ու ջահել: Հարսը հերթով ծանոթանում է նրանց հետ, ապա իր պատրաստած համեղ թեյով հյուրասիրում է նրանց բարեկամներին: Ի նշան հարգանքի՝ հարսնացուն թեյը նրանց է մատուցում նոր սրբիչով: Ակնկալվում է, որ հարազատները կարմիր փաթեթով նրան կփոխանցեն գումար կամ ոսկեղեն:




հանձնում կարմիր մի փաթեթ, որի մեջ գումար կամ ոսկեղեն է դրված լինում: Այնուհետև փեսայի ծնողները իրենց հարսին ուղեկցում են եւ մեկ առ մեկ ծանոթացնում իրենց հարազատների ու ընկերների հետ՝ հեռու եւ մոտիկ, ահել ու ջահել: Հարսը հերթով ծանոթանում է նրանց հետ, ապա իր պատրաստած համեղ թեյով հյուրասիրում է նրանց բարեկամներին: Ի նշան հարգանքի՝ հարսնացուն թեյը նրանց է մատուցում նոր սրբիչով: Ակնկալվում է, որ հարազատները կարմիր փաթեթով նրան կփոխանցեն գումար կամ ոսկեղեն:

## ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

### ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

#### 1. Երկրի ու երկնքի երկրպագում



Երկրի ու երկնքի պաշտանմունքը համարվում է հնագույն ժամանակների ծեսերից մեկը: Ասում են, որ այս ծեսը սկիզբ է առել Ֆուքսիի եւ Նյուվայի՝ քույր ու եղբայր, ամուսնությունից: Այն ժամանակ ամուսնարարներ չկային, որպեսզի նրանց պսակեին: Միակ վկաները երկիրն ու երկինքն էին: Այդ ժամանակից սկիզբ առան պսակադրություններն ու մարդկային էակների վերար-

տադրությունը: Այսպիսով, հետագայում, երբ զույգերը պատրաստվում էին ամուսնանալ, նրանք պետք է երկրպագեին երկիրն ու երկինքը, ցույց տալու, որ իրենց ամուսնությանը վկա են երկիրն ու երկինքը, եւ նաեւ հուսալով, որ երկիրն ու երկինքը կարող են հաստատել իրենց ամուսնությունը:

Պսակադրության արարողակարգը այսպես է կատարվում. հարսանյաց սրահի դիմաց դրված է մի սեղան, որպեսզի երկրպագեն բոլոր աստվածներին: Սեղանի վրա, երկրի ու երկնքի հուշատախտակներից, նախնիների հոգիների հուշատախտակից եւ ձեւավորված մոմերից բացի դրված է նաեւ բրնձով լի մի ափսե՝ աղեղով, նետով, քանոնով, կշեռքով ու նման պարագաներով, որ սովորաբար անվանում են «երեք միջնորդ ու վեց վկա», ցույց տալու, որ այս ամուսնությունը կայանում է՝ համաձայն քաղաքավարության, նիստուկացի եւ սովորույթների:

Շնորհավորական գալարակները կախված են նախասրահի սեղանի ետեւի երկու կողմերում. այնտեղ փեսայի ծնողների համար դրված են նա-

եւ երկու փայտե բազկաթռմներ, որպեսզի նրանք նստեն, այն ժամանակ, երբ նորապսակները սկսում են իրենց երկրպագել:

Երբ գալիս է ժամանակը, նրանք վառում են սեղանի վրա դրված մոմերն ու խունկը: Այդ արարողությունը սկսում են երաժշտության ներքո: Հարսանիքի պատարագիչն ասում է. «Ծուխը աղոտ է տեսանելի, եւ լույսն ու մոմերը չքնաղ են: Եկեք նորապսակներն հրավիրենք, որ ներս մտնեն հարսանյաց սրահ»: Երբ հայտնվում է զույգը՝ ձախ կողմում փեսան իսկ աջ կողմում հարսը, հարսանիքի պատարագիչն ասում է. «Առաջինը երկրպագում ենք երկիրն ու երկինքը: Երկրորդը՝ ծնողներին, այժմ զույգը երկրպագում է միմյանց, եւ նորապսակներին ուղարկում են հարսնասենյակ»: Երբ նրանք երկրպագում են երկինքն ու երկիրը, իրականում նրանք նաեւ երկրպագում են իրենց նախնիներին:

## 2. Ծիսական կկզում

Հետաքրքիր է, որ որոշ շրջաններում հարսնացուն հարսանեկան արարողությունից հետո պետք է անցնի կկզածեսի միջով: Այսինքն, հարսնացուն իր զգեստը կապում է աթոռից, նստում ու վեր է կենում հարսնաքույրի օգնությամբ: Այդ ժամանակ որոշ չարաճճի մարդիկ կարող են աթոռը հեռացնել: Եթե հարսնաքույրն անուշադիր լինի, հարսը գետնին կհայտնվի, եւ ողջ սրահը ծիծաղից կպայթի: Եվ ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «հիմա պպզի, որ մյուս տարի երեխա ունենաս»: Այսպես, հարսնացուի կկզումից հետո ինչ-որ մեկը այդ աթոռը պետք է փոխանցի փեսայի մորը, որպեսզի նա գրկի այն, այն հույսով, որ շուտով նա թռմնիկ է ունենալու:

## 3. Ներդաշնակություն

Փյունիկը թռչունի այն տեսակն է, որը բարություն է սփռում, մինչդեռ գոյություն ունի նաեւ առասպելական մեկ այլ թռչուն՝ լուան՝ նման հին հեքիաթների փյունիկին: Ասում են, որ այդ երկու թռչունների միությունը՝ արու եւ էգ, միշտ նմանեցրել են հարսին ու փեսային: Այս երկու թռչունները քայլում են ուս-ուսի տված, երգում ու արձագանքում են միասին, միշտ իրար հետ են, ինչը մատնացույց է անում այն հիասքանչ տեսարանը, որ զույգերը իրար սիրում են եւ իրարից երբեք չեն հեռանում: Հետագայում մարդիկ դա օգտագործեցին հարսանեկան արարողությունների ժամանակ՝ միմյանց շնորհավորելու համար:

Ասում են, որ մթա. 672թ.-ին, Չեն նահանգում հեղաշրջում է լինում, եւ

Չեն Յուանհոնգը սպանում է իր որդուն՝ արքայազն Գու Յոկոյին: Չեն Վանը, ով այդ ժամանակ նրա օգնականն էր, մտավախություն ուներ, որ իրեն այդ գործի մեջ կներգրավեն, եւ նա փախչում է



Յի նահանգ, որպեսզի պաշտպանի իրեն: Յի Յուանգոնգը ընդունում է նրան եւ անգամ մտադրվում է նրան ազնվական տիտղոսի արժանացնել: Չենը իր խորին երախտագիտությունն է հայտնում Յուանգոնգին իր համար ջերմ ընդունելություն կազմակերպելու ու պատվաբեր տիտղոսին արժանացնելու համար: Այս ամենը լսելով՝ Յի Յուանգոնգը նրան նշանակում է տաճարների կառուցման եւ հանգուցյալների համար հուշակոթողներ կառուցելու պաշտոնին: Յի նահանգում մի խորհրդական կար՝ Գո Իյիչոնգ անունով: Նա ցանկանում էր, որ իր աղջիկը դառնա Չեն Վանի կինը, որովհետեւ գիտեր, որ կայսրը նրան շատ է գնահատում: Այդ ժամանակ բարձրաշխարհիկ ազնվականների մոտ ընդունված էր ամուսնությունից առաջ գուշակություններ անել: Գո Իյիչոնգի կինը մոգական սիմվոլների միջոցով ծածուկ գուշակություն արեց, որպեսզի կանխատեսի նրանց ամուսնությունը: Արդյունքը գոհացնող էր, եւ գուշակության նշանները նրան ասում էին, որ այդ երկուսը չինական հեքիաթների այն երկու թռչունների նման գեղեցիկ ու համապատասխան զույգ են: Նրանց սերունդները կբազմանան ու բարձր պաշտոններ կզբաղեցնեն: Այսինքն, եթե նրանք ամուսնանան, նրանք շատ ներդաշնակ կլինեն եւ միասին կծերանան: Եվ նրանց բոլոր ժառանգները հաջողակ ու երջանիկ կլինեն: Նրանք հարուստ կլինեն, մեծ պաշտոններ կզբաղեցնեն: Նրանց ժառանգներից մեկը, ութերորդ սերնդից հետո, կայսեր տիտղոսին է արժանանալու: Այս բախտագուշակությունից հետո Գո Իյիչոնգը ձեռնամուխ եղավ, որ կարճ ժամանակ անց իր դուստրն ու Չեն Վանը ամուսնանան: Եվ ճիշտ այնպես, ինչպես գուշակությունում էր ասվում, հետագայում Չեն Վանը Ջիյանգի փոխարեն դարձավ Յի նահանգի կայսրը:

Այդ ժամանակից ի վեր այս երկու թռչունները միշտ մատնանշում են՝

սիրահար զույգ, ներդաշնակ ամուսնություն ու բարեկեցիկ ապագա ունեցող սերունդ, եւ ամուսնությունների ժամանակ մշտապես առկա են այս բարենաղթանք արտահայտող շնորհավորական բառերը: Պարզվում է, որ այս համատեղ թռչող թռչունների նկարը նույնպես շատ բախտաբեր է: Մենք օգտագործում ենք այս նկարը ի նշան զույգերի սիրո, ընտանիքի ներդաշնակության եւ բարեկեցիկ ապագայի ակնկալման, ի նշան այն բանի, որ հետագա սերունդները հաջողակ ու բախտավոր կլինեն:

## ԳԼՈՒԽ ԶՈՐՍ

### ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳԻՇԵՐ

#### 1. Հարսանիքի գիշերը հարսնացուի հոգու հետ խաղալը

Հարսնասենյակում ծաղրելը /նեղելը/, որպես չինական ավանդական ամուսնության մի մաս, երկար պատմություն ունի: Հարսնասենյակում ծաղրելը սկսվում է նրանից, որ երիտասարդ մորաքույրը սկզբում մի ճրագ է ուղարկում, այնուհետև բոլոր մարդիկ՝ ծեր ու ջահել, միասին հավաքվում են հարսի սենյակում, շնորհավորում են նորապսակներին եւ սկսում են ծաղրել: Հիմնականում սահմանափակումներ չկան: Անկախ նրանից, թե ինչքան են աղմկում, զույգը չպետք է բարկանա: Ինչքան շատ աղմուկ, այնքան ավելի լավ: Այնուհետ, որ դա ավելի կերջանկացնի նրա ընտանիքը:



Քանի որ այս սովորույթի հիմնական թիրախը հարսնացուն է համարվում, ապա դա կարելի է որակել որպես «հարսնացուին ծաղրել» կամ «հարսնացուի հետ կատակել»: Հին ժամանակներում գոյություն ուներ ծաղրի երկու տեսակ. մեկը գրական նեղելն էր, մյուսը՝ ռազմական:

Նման անվանումից եզրակացնում ենք, որ գրական նեղը զցելը հիմնականում որդեգրվել է գրագետ մարդկանց կողմից: Գինարբուքի ժամանակ նրանք դիմում էին հարս ու փեսային, որպեսզի տպավորիչ բանաստեղծություններ կամ քառատողեր արտասանեն, երաժշտական գործիքներով նվագեն եւ հանրության առաջ երգեն, ինչը հուզիչ էր ու հոյակապ: Ռազմականը՝ միանգամայն տարբեր է: Ցանկացած ոք, անկախ նրանից, թե ով ես դու՝ կին, թե տղամարդ, ահել թե ջահել, կարող ես ցանկացածիդ պես զվարճանալ, անգամ կարող ես հանել հարսնացուի կարմիր կոշիկները,

կամ այլ պարագաներ եւ թաքցնել դրանք, կամ ուրիշ կոպիտ ինտրիգներ անել:

Չին ժողովրդի մոտ այս ավանդույթի ծագման հետ կապված երկու ասացվածք կա: Մի ասացվածում ասվում է, որ դրանով դուրս են շարտում չար ոգիներին եւ խուսափում են դժբախտություններից: Մյուսում ասվում է, որ հունից հանելու /ծաղրելու/ սովորույթը առաջին անգամ կիրառել են հյուսիսային Չինաստանում: Հյուսիսում մարդիկ քոչվորական կյանք էին վարում եւ հիմնականում զբաղվում էին որսորդությամբ: Նրանք վայրենի եւ ուժեղ էին, եւ նա, ով պատրաստվում էր ամուսնանալ, պետք է անցներ փորձությունների միջով, որպեսզի ապացուցեր, որ համարվում է արժանի ամուսին: Ջղայնացնելով չարքերին դուրս հանելու սովորույթը տարածված է թե հյուսիսային, թե հարավային շրջաններում: Յանգզի գետի ցածրադիր հատվածներում մարդիկ փեսացուից պահանջում են, որպեսզի նա հարսանիքի նախորդ գիշերը քնի հարսնասենյակում: Իսկ մինչ այդ նրանք երկու աղջիկ են հրավիրում, որպեսզի կարմիր մոմերով ամեն կողմից լուսավորեն սենյակը: Թիանջինում մարդիկ հրավիրում են երաժիշտների, որպեսզի հարսնասենյակում երաժշտություն նվագելով հաջողություն աղերսեն: Որոշ փոքրամասնություններում փեսան հարսնասենյակի բոլոր չորս անկյուններին պետք է աղեղով նետ արձակի, կամ սուրը ձեռքին բոլոր անկյուններին ուժգին հարվածի, միաժամանակ հետեյալը երգելով. «Առաջինը՝ սատանային կտոր-կտոր անել, երկրորդը՝ հրեշին մասնատել, երրորդը՝ չարքերին գլխատել, չորրորդը՝ չարաբաստիկ չարիքին սպանել, հետո մենք կըմբռնվենք մեր ուրախությունը, տեսնելով, որ կայլին (առասպելական չորքոտանի կենդանի) մեզ համար այստեղ երեխա է ուղարկում»: Ըստ էության, այս բոլոր սովորույթները պաշտպանիչ միջոց են հանդիսանում, որպեսզի չարիքները կանխեն, որ հարսնասենյակ չներխուժեն:

## 2. Ցաք ու ցրիվ անել

Ցաք ու ցրիվ անելուն նաեւ ասում են անկողինն ավելել: Նորապսակները միմյանց գլուխ տալուց հետո դեմ առ դեմ մտնում են հարսնասենյակ՝ ձեռքներին կարմիր մետաքս բռնած եւ կողք-կողքի մտնում են իրենց մահճակալի եզրին: Այնուհետեւ մարդիկ վերցնում են բազմազան հարսանեկան կոնֆետներ, հարսանեկան մետաղադրամներ ու ցաք ու ցրիվ են անում չորս բոլորը, ուր որ կաննան՝ մահճակալի վրա ստեղծելով իսկական խառնաշփոթ: Սա է «ցաք ու ցրիվ անելը»:

Ցաք ու ցրիվ անելու սովորույթը գալիս է դեռ վաղ անցյալից. ասում են,

որ այն առաջացել է Հան դինաստիայի կայսեր Վուի օրոք: Այն ժամանակ մի երաժիշտ՝ Լի Յանին անունով, իր կրտսեր գեղեցկուհի քրոջը առաջարկեց Հան դինաստիայի կայսր Վուին: Հան դինաստիայի կայսր Վուին հանդիպեց աղջկա հետ եւ շատ շուտով որոշեց ամուսնանալ: Ամուսնության գիշերը Լի Յանինը իր քրոջն ու կայսր Վուին հրավիրեց կողք-կողքի նստել գունավոր մահճակալին, ապա ուրախ-ուրախ երգելով՝ ձեռքն առավ մի մեծ սկահակ՝ լի արմավներով, շագանակներով, գետնանուշներով, լոնգանով ու այլ տարատեսակ քաղցրավենիքներով եւ զվարթ մեղեդու ներքո այդ ամենը շաղ տվեց դեպի նորապսակների կողմը: Միաժամանակ նա երգում ու պարում էր, իսկ նրա շուրջը մարդիկ երջանիկ աղաղակում էին. «Արմավ ու շագանակ, որդիներ շուտ կունենաք», քանի որ արմավ ու շագանակ բառերի արտասանությունը չինարենում համահունչ է որդիներ շուտ ունենալուն: Եվ նրանք նետում են արմավներ, շագանակներ, լոտոսներ, գետնանուշներ, բրինձ, ցորեն եւ այլն եւ հղում են մաղթանքներ, ցանկանալով, որ նրանք շուտով որդի ունենան: Բացի արմավից ու շագանակից, «լոտոսի» համանման արտասանությունն ունի «ժառանգորդ ունենալու» իմաստը:


Որոշ շրջաններում ընդունված է, որ նրանք առաջին հերթին նստեն եւ ապա այդ ամենը շաղ տան, որից հետո հեռացնեն կարմիր քողը, որը կոչվում է «դենքի ցուցադրում»: Փեսացուն որոշ ընկերների ու հարազատների ներկայությամբ կարմիր քողը հանելուց հետո դնում է հատակին՝ իր ոտքերի տակ, այն ցանկությամբ, որ հաջորդ կյանքում կհասնի նրա ետելից, եւ եթե հարսնացուն ճարպիկ լինի եւ սուր աչք ունենա, նա ժամանակին այն ետ կխլի, ինչը կստիպի ողջ սենյակին ծիծաղել: Այնուհետեւ փեսան հարսնացուի վարսերից կպոկի մի բրոյա ծաղիկ եւ այն կխրի ցանկացած մի տեղ: Այս վարքագիծն անվանում են սքանչելի երջանկություն: Ասում են, եթե նա ծաղիկը խրում է վերին մասում, հետագայում նրանք տղա են ունենում, եթե ներքեւի մասում՝ աղջիկ: Սակայն որոշ վայրերում հակառակն են պնդում:

### 3. Կարմիր քող հեռացնելը

Դեռեւս վաղ անցյալում ամուսնանալիս հարսնացուն իր գլխին կրում էր կարմիր մետաքսե շալ: Դրան անվանում են կարմիր շղարշ, որը հարսի գլխից կարող էր հանել միայն փեսացուն, երբ նրանք իրենց սենյակն էին մտնում: Ժողովրդի շրջանում սա նաեւ հարսանեկան սովորույթի ծիսակատարություն է:

Առաջին անգամ կարմիր շղարշը ի հայտ եկավ Ցի պետությունում՝ հյու-


սիսային եւ հարավային դիմաստիաների ժամանակաշրջանում: Այն ժամանակ այդ կարմիր շղարշը օգտագործում էին գեղեցիկ սեռի ներկայացուցիչները՝ ցրտից ու քամուց պաշտպանվելու համար, ծածկելով գլխի միայն վերին հատվածը: Թան դիմաստիայի օրոք այն փոխարինվեց երկար քողով, ինչը ծածկում էր գլխից մինչ ուսերը՝ դժվար կացությունից խուսափելու համար: Ասում են, թե Թան դիմաստիայի կայսր Լի Լոնջին հակված էր խախտել հին ավանդույթները եւ ինչոր նոր բան ստեղծել: Այսպիսով նա հրամայում է, որպեսզի պալատում բո-



լոր օրիորդները, ուղղակի որպես զարդարանք, իրենց ճակատը սքողեն մետաքսե շղարշով: Հետագայում Ջին դիմաստիայից մինչեւ Յուան դիմաստիա, այդ շղարշը ժողովրդի մեջ ավելի լայն տարածում ստացավ եւ դարձավ հարսնացուի անզուգական տեսքի անխուսափելի տոնական զարդարանքը: Եվ որպեսզի բերկրանք նվիրեն, հարսի քողը կարմիր ընտրվեց: Մինչ արդի ժամանակները, հասարակության էվոյուցիայի եւ սովորույթների փոփոխման հետ միասին, իրար հաջորդում էին այնպիսի սովորույթներ, ինչպիսիք են՝ «նշան դնել դեռեւս մոր արգանդում եղած ժամանակ», «նշանվել անչափահաս տարիքում»: Եվ մինչ ամուսնությունն ու նորապսակների հարսնասենյակ մտնելը, հարսն ու փեսան իրավունք չունեին իրար պարզ տեսնել: Այսպիսով, կարմիր շղարշի սիմվոլիկ չափսը դեռ կարելու է համարվում: Հետագայում երեւան եկան քողազարդ մեքենաներն ու սեղան հարսնաթոռը: Միակը, ով իրավունք ունի հեռացնել այդ ծածկոցը, փեսացուն է, ով հանդիսանում է հարսնացուի օրինական ամուսինը:

#### 4. Խաչ-բաժակ գինըմպում

Ամուսնական սովորույթների ծեսում ասվում է. «Ուտել նույն սենյակում ու երկու շերեփ բերել, որպեսզի միասին խմեն»: Մի շերեփը լազենու /դդմի տեսակ/ կեսն է: Հին հարսանեկան սովորույթներում հարսն ու փեսան մի շերեփ գինի էին խմում՝ բերանները լվանալու համար: Այս ծեսն ի հայտ եկավ ժոռ դիմաստիայի օրոք եւ հետագայում մարդիկ այն գործածեցին հարսանիքների ժամանակ՝ մինչեւ Սուն դիմաստիան, երբ մարդիկ դա



անվանում էին՝ «խաչ-բաժակ գինի խմել»։ դա արվում է մինչ օրս։ Սակայն այն ժամանակներում կային որոշ սովորույթներ, ինչպես օրինակ՝ վարսեր արձակելը կամ վարսեր ուլորելը եւ այլն, որոնք ապագա սերունդները ավելի քիչ գործածեցին, սակայն որոշ գեղարվեստական ստեղծագործություններում դեռեւս անդրադառնում են այդ սովորույթներին, ինչպես, օրինակ՝ դրամաներում, ժողովրդական արվեստներում եւ այլն. նաեւ տարեցներն են հաճախ շոշա-

փում այդ թեմաները։ Իսկ ի՞նչ է նշանակում՝ վարսեր արձակել։ Սկզբնապես դա նշանակում է, որ նորահարսը վարսերը բարձրացնում է գլխին ու կեղծամի մեջ դնում, իսկ փեսացուն հարսանիքի գիշերը արձակում է այն։ Թերեւս դա է պատճառը, որ մարդիկ նորապսակ զույգին անվանում են նաեւ՝ մագ-արձակող զույգեր։

Վարսեր ուլորելը Թան եւ Սուն դինաստիաների հարսանեկան ոճն է։ Մինչ նորապսակները խաչածեռք գինի կըմպեն, նրանցից յուրաքանչյուրը պետք է մի փունջ մագ կտրի, եւ դրանք միասին ուլորեն։

## ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

# ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ. ՀԱՐՍՆԱՑՈՒԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՄՈՒՄՆՈՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՆ ԻՐ ՄՈՐ ՄՈՏ

## ԳԼՈՒԽ ՄԵԿ

### ՀԱՐՍՆԱՑՈՒԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՄՈՒՄՆՈՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

#### 1. Հանդիպում փեսայի ծնողների հետ

Ավանդական հասարակության մեջ ամուսնությունը ոչ միայն համարվում է հարսի ու փեսայի խնդիրը, այլ նաեւ նրանում ներքաշվում է փեսայի ողջ ընտանիքը: Շատերը կարող են կարծել, որ վեց ծիսակարգերի ավարտից հետո ամուսնությունը մոտենում է իր տրամաբանական ավարտին, բայց դա այդպես չէ: Կա եւս մի ծիսակատարություն, երբ նորահարսը հանդիպում է իր ամուսնու ընտանիքին: Ֆեոդալական ժամանակների նահապետական կլանային համակարգում այս ծիսակատարությունը բաղկացած էր երկու մասից՝ հանդիպում ամուսնու ծնողների հետ եւ նախնիների հետ հանդիպում՝ տաճարում: Այնպես որ, երբ հարսը հանդիպում է իր ամուսնու ծնողներին, դա նշանակում է, որ նա իր ամուսնու ընտանիքում պատրաստվում է հարս դառնալ, ինչպես նաեւ պաշտոնապես դառնալու է իր ամուսնու կիցը:



Հարսանիքի հաջորդ օրը հարսնացուն առավոտյան վաղ է արթնանում,

լոգանք է ընդունում, պատշաճ զգեստ հագնում, այնուհետև գնում է իր ամուսնու ծնողների հետ հանդիպման: Մենք գիտենք, որ կեսուրն ու կեսրայրը հենց փեսայի ծնողներն են: Հնագույն ժամանակներում հարսի եւ նրա կեսուր, կեսրայրի հետ առաջին հանդիպումը շատ կարելոր էր: Եթե նա այդ հանդիպման ժամանակ իր ամուսնու ծնողների վրա վատ տպավորություն էր թողնում, հետագայում դա կարող էր բացասական անդրադառնալ նրա ամուսնու ծնողների հետ հարաբերություններում: Հարսնացուն այցելում էր իր ամուսնու ծնողներին ինչ-որ մեկի ուղեկցությամբ, եւ նա պետք է նրանց պատվեր թելով, իսկ փոխարենը նրա կեսուրն ու կեսրայրը նրան տալիս էին մի կարմիր կապոց:

Թեյով պատվելու հետ կապված այլ սովորույթներ էլ կան: Հարսը պետք է երկու ձեռքով վերցնի թելի սպասքը, ծնկի գա ու տա այն իր ամուսնու ծնողներին: Երբ նրանք թել խմելը վերջացնեն, նա պետք է կրկին երկու ձեռքով վերցնի գավաթները: Այդ ժամանակ նրա կեսուրն ու կեսրայրը նրան տալիս են կարմիր կապոցներ: Նա վերցնում է դրանք ու իր երախտագիտությունն է հայտնում, հետո նա կարող է ոտքի կանգնել: Այդ ամենից հետո սկեսուրը հարսին ծանոթացնում է ընտանիքի մյուս բոլոր անդամների հետ, եւ հարսը պետք է թել մատուցի ընտանիքի ավագներին եւ մյուս բարեկամներին: Սա պատրվակ է, որպեսզի հարսը ճանաչի իր ամուսնու բարեկամներին ու ընկերներին: Թեյով պատվելուց հետո հարսնացուն պետք է խոհանոց գնա ու պատրաստի առաջին կերակուրն իր ամուսնու տանը, որպեսզի ցույց տա իր խոհարարական հմտությունները: Բացի այդ, նա պետք է կերակրի խոզերին ու հավերին, որպեսզի ցույց տա իր հմտությունն ու աշխատասիրությունը: Սա միջոց է՝ իր որդիական բարեպաշտությունն արտահայտելու, միջոց՝ որքան հնարավոր է շուտ գոհացնել իր ամուսնու ծնողներին:

## 2. Տաճարում երկրպագելը

Հին ժամանակներում արարողությունները միշտ եղել են բարդ ու բազմաբնույթ, հարսանեկան արարողությունների ժամանակ նույնպես այդպես էր: Հարսանեկան ծեսերը առանց տաճարում իրենց նախնիներին երկրպագելու չէին կարող ավարտվել: Պատմության մեջ նախնիներին պաշտելու վերաբերյալ երկու մեկնաբանություն կա. մեկում ասվում է, որ նորաստեղծ զույգը գնում էր տաճար նախնիներին երկրպագելու համար, մյուսում մեկնաբանվում էր, որ եթե փեսայի ծնողները մինչ նրանց ամուսնանալը մահացել էին, ապա ամուսնությունից հետո, երեք ամսվա ընթացքում, նորապսակները պետք է այցելեին տաճար՝ աղոթելու նրա ծնողնե-

րի համար: Այս հին սովորույթը շատ հազվադեպ է հանդիպում մեր օրերում ու այլևս ժողովրդականություն չի վայելում: Սակայն շատ քչերը դեռ հետեւում են դրան: Տաճարում նախնիներին երկրպագելը առաջին պաշտամունքային արարողությունն է, երբ հարսնացուն հանդիպում է իր ամուսնու ընտանիքին: Նրանց հարսանիքից երեք ամիս անց, ամուսնու ընտանիքի անդամները համարում են, որ հարսը իր վարվելաձևով համապատասխանում է իրենց պահանջներին, եւ եզրակացություններ են անում, թե արդյոք հարսը կարո՞ղ է իր ամուսնուն լավ ծառայել, թե՛ ոչ, եւ թե արդյո՞ք նա կարող է ընտանիքի մյուս անդամների հետ լեզու գտնել: Այդ ժամանակ փեսայի ընտանիքը մի հարմար օր է ընտրում եւ նորահարսին ուղեկցում է տաճար՝ նախնիներին պատվելու համար, որպեսզի ցույց տան, որ հարսնացուն պաշտոնապես դարձել է ընտանիքի անդամը, եւ նրանց ամուսնությունը ընդունվում է ամբողջ ընտանիքի կողմից: Դրանից հետո, հարսը դառնում է իր ամուսնու տոհմի իսկական անդամը՝ եւ իրավունք է ստանում մասնակցելու երկրպագման արարողություններին ու անձամբ երկրպագվել: Եթե հարսը մահանում է տաճարի երկրպագման արարողությունից առաջ, այդ դեպքում նրան չեն կարող թաղել իր ամուսնու տոհմական գերեզմանոցում, այլ նրան տանելու են ետ՝ թաղելու իր մայրական գերեզմանոցում, իսկ փեսայի ընտանիքը նրան չի համարի որպես իրենց ընտանիքի անդամը: Եվ երբ նրան տանեն թաղելու, նրա ամուսինը չի կարող գնալ ու վերջին հրաժեշտը տալ նրան:

Իսկ ինչո՞ւ են հարսին երեք ամիս անց ուղեկցում նախնիներին երկրպագելու: Ասում են՝ այդպես են անում, որպեսզի կռահեն հարսի՝ հարսանիքից առաջ սեռական կապ ունենալու վարքագիծը: Փեսայի ընտանիքից երեք ամիս է պահանջվում, որպեսզի հասկանան, թե արդյո՞ք հարսը կույս է, թե՛ ոչ: Ավելին, նրանց ժամանակ է պետք, որպեսզի ճշտեն, թե արդյո՞ք հարսը ուրիշ տղամարդուց երեխա է սպասում, որպեսզի վստահ լինեն, որ նրա երեխան իր ամուսնու ժառանգն է:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

### ԵՐՐՈՐԴ ՕՐԸ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ

#### 1. Հարսի ընտանիքին այցելելը փեսացուին դարձնում է նրանց փեսան

Սովորաբար հարսանիքից հետո՝ երրորդ օրը, հարսնացուն պետք է վերադառնա իր հայրական տունը եւ որոշ ծեսեր կատարի իր ծնողների, քույրերի, եղբայրների եւ հարազատների համար:

Հին ժամանակներում փեսան պետք է գնար իր կնոջ ծնողների մոտ վավերացնելու, որ դարձել է նրանց փեսան: Հարսանիքից հետո երրորդ օրը առավոտյան հարսնացուն, նախ, պետք է այցելեր իր ամուսնու ծնողներին, իսկ հետո հարսնաքրոջ եւ մի քանի հարսանիք սպասարկողների ուղեկցությամբ, որոնք նվերներ ու միրգ էին իրենց հետ տեղափոխում, վերադառնար իր ծնողների մոտ: Այնուհետեւ սեղան աթոռով ժամանում էր փեսան եւ, նվերների տուփերով, այցելում իր կնոջ ծնողներին: Տեղ հասնելուն պես նա կանգ էր առնում դարպասի կամ դռան մուտքի մոտ, հետո նրա սպասավորները հարսի ծնողներին էին հանձնում նվերների տուփերն ու ազդարարում, որ իրենց նոր փեսան դրսում է: Հարսի ընտանիքը ընդունում էր նվերները, ապա փեսայի սպասավորին հանձնում հրավերը, որում ասվում էր. «Համեցեք»: Սպասավորը հրավերը ձեռքին շտապում էր փեսայի սեղան աթոռի մոտ, հետո հրավերը բարձրացնում էր իր գլխի վերեւն ու ասում. «Համեցեք»: Եթե փեսան չէր շարժվում, սպասավորը վազում էր ետ հարսի ծնողների մոտ եւ նրանց ասում. «Ահա պատասխանը, նորափեսան չի արձագանքում»: Հարսի ծնողներն ուղարկում էին մի այլ հրավեր, ասելով. «Կրկին համեցեք». սովորաբար այսպես արվում էր երեք անգամ, հետո փեսան իջնում էր սեղան աթոռից եւ հրավերը ձեռքին հետեւում էր իր սպասավորին: Երբ հարսի ընտանիքը փոքրիկ հրավառությամբ էր անում, նա դանդաղ մոտենում էր մուտքին: Ընտանիքի անդամները կանգնում էին ճանապարհի երկու կողմում՝ դիմավորելու իրենց նոր փեսային: Դարպասից ներս մտնելուց հետո նրանք առաջին հերթին հարսի նախնիների ոգիների հուշատախտակի առաջ պետք է դնեին ոսկե խոզեր, մրգեր, նվերների տուփեր եւ այլն, որպեսզի փեսան ծնկի գար ու երկրպագեր: Այս ամենն ավարտելուց հետո փեսան մտնում էր բակ եւ իր կնոջ եղբայրներին, քույրերին, մորաքույրներին եւ մյուս բարեկամներին

հանձնում էր նվերներ, որոնք հիմնականում լինում էին մետաքսե հագուստներ, կոշիկներ, գուլպաներ: Այնուհետև նրանք միասին տոնում էին այդ միջոցառումը:

Փեսացուին նյարդայնացնելու հետ կապված հետաքրքիր ավանդույթներ կան գյուղերում: Երբ փեսան այցելում է իր կնոջ հարազատներին, երեխաները իրենց գյուղում, մուտքի մոտ կանգնած, սպասում են նրան: Տեսնելով, որ փեսան մոտենում է, բոլոր երեխաները մոտենում են ու փեսային խնդրում, որ իրենց տա կարմիր տուփեր կամ նվերներ: Մի քանի երիտասարդ հարսեր փեսայի երեսը ներկում են նախօրոք պատրաստած գունավոր դիմափոշիներով եւ ներկում են այնքան ժամանակ, մինչև փեսայի դեմքը գունավորվում է: Այս ամենը նորմալ է, քանի որ դա լոկ մի փոքրիկ կատակ է՝ առանց էական վնասի: Նոր ամուսնացած հարսը չի կարող նստել նույն սեղանի շուրջ կամ ուտել միասին, այնպես որ, նա պետք է նստի իր մորաքրոջ կամ հարսնաքրոջ հետ ու հարցերին պատասխանի:

Տուն վերադառնալը պարզապես հնարավորություն է ընծեռում ամուսնացած կնոջը վերադառնալ ծնողների մոտ եւ նրանց այցելել իր ամուսնու հետ: Նմանատիպ վերադարձի հետ կապված ուրիշ շատ անուններ էլ կան, եւ դրանք բոլորը կապված են հարսանեկան գիշերն անցկացրած սեռական կյանքի հետ: Դուստրը պետք է ետ վերադառնա եւ պատմի իր ծնողներին իրենց սեռական կյանքի մասին, որպեսզի նրանց ազատի մտահոգությունից:

Երբ հարսը վերադառնում է իր մայրական ընտանիք, ծնողները նրան նվերներ են տալիս՝ հագուստ, քաղցր կաչուն բրինձ, որի վրա նշան ծաղիկներ են, կարմիր թղթի մեջ փաթաթած արմատներով ու տերեւներով շաքարեղեգ, երկու հատ փոքրիկ հավի ճուտ՝ ոտներին կարմիր մահուդ կապած: Որոշ վայրերում տալիս են նաեւ երկու խոզուկ: Գյուղացիներից ոմանք հարսի եղբորը հորդորում են, որպեսզի նա հարսին մի շիշ գետնանուշի յուղ տա եւ ուղարկի իր ամուսնու մոտ: Քանի որ գետնանուշի յուղը թեթեւ յուղ է, այն իր մեջ խորհուրդ է պարունակում, որ նրանք շատ շուտով երեխա ունենան:

## 2. Նորապսակներին գինովցնելը Ցիան ազգության մոտ

Ցիան ազգությունը հիմնականում ապրում է Սիչուան նահանգի արեւմտյան մասում: Այսօրվա Ցիան ժողովուրդը անցյալի Ցիան ժողովրդի մի ճյուղն է: Ցիան ժողովրդի մեջ հիմնականում ընդունված է ամուսնության մոնոգամիա /մենամուսնություն/ ձևը: Կան նաեւ շապանիկներ, որոնք հա-

մապատասխան զույգ են ընտրում նրանց համար, եւ մի քանի փուլերով, օրինակ՝ առաջին գինի, նախանշանի գինի, նշանադրության գինի եւ այլն: Նրանց ամուսնությունից հետո երրորդ օրը ակնկալվում է, որ փեսան միս ու գինի վերցրած իր եղբայրների հետ միասին կայցելի իր կնոջ ծնողներին, եւ հարսի ծնողները պետք է նրա այցելության համար գինի պատրաստեն: Նրանց ազգականները պետք է այդ զույգին նվերներ տան եւ բարեմաղթանքներ հղեն: Ցիան ազգի որոշ մարդիկ դեռեւս շարունակում են պահպանել փեսային նեղելու/ ծաղրելու/ սովորությունը: Այդ ժամանակ, հարսի համագյուղացի հարեւան աղջիկները խնջույք են կազմակերպում եւ պատրաստում են մեկ ֆուտ երկարությամբ բամբուկե ձողեր՝ որպես ուտելիս օգտագործվող ձողիկի զույգ, եւ դնում են փեսայի ուսերին: Ձողիկների ծայրերին ամրացնում են կարտոֆիլներ: Թասերի մեջ դնում են նավթի լամպեր, որոնց կմախքը պատրաստված է ալյուրից, իսկ ներսի պատրույզը՝ յուղոտ բամբակից: Փեսան պետք է օգտագործի այդ ձողիկները եւ մի քանի նավթե լամպերի վրայով վերցնի ուտելիքները, որոնք պատրաստված են խորանարդիկաձեւ կտրտված մսից ու բակլայից: Եթե ձողիկների երկար լինելու պատճառով նրան չհաջողվի վերցնել ուտելիքը, կամ եթե նավթի լամպն այրի այն, նա կպատժվի, եւ նրան գինի կխմեցնեն: Սա խրախճանքային ճաշկերույթ է, ինչպես նաեւ՝ ժամանցային:

### 3. Ծես փեսացուի համար՝ կորեական էթնիկ խմբում

Արարողությունը, որը տեղի է ունենում հարսի ընտանիքում, վերադառնալու հանդիսավոր արարողությունն է, երբ հարսը իր ամուսնու հետ միասին գնում է ծնողներին այցելության: Ամուսնությունից հետո երկրորդ օրը հարսը դեղին գինիով եւ իր ամուսնու տանը իր ձեռքով պատրաստած անուշեղեններով պետք է ծնողների տուն վերադառնա, որպեսզի ցույց տա նրանց, որ ինքն արդեն մեծացել է: Երրորդ օրը հարսը կրկին այցելում է իր ամուսնու հետ՝ բերելով ճոխ ուտելիքներ: Դա անվանում են «կրկնակի վերադարձ»: Այդ օրը կորեացի երիտասարդները որոշ ծրագրեր են կազմակերպում: Հրավիրված չափահասներից ոմանք փեսային բարեւելուց հետո սկսում են նրան նեղել/ծաղրել/: Նրանք ձերբակալում են փեսային «որպես ոճրագործ, որը գողացել է աղջկան» եւ կապում են փեսայի ոտքերն ու ձեռքերը, որպեսզի նրան դատապարտեն: Եթե փեսան իր մեղքը չընդունի, նրանք կսկսեն նրա ոտքերին հարվածել: Նրանք կանգ չեն առնի, մինչեւ փեսան չընդունի, որ ինքը գող է: Նրան նաեւ կհարցնեն նրա կնոջ ծնողների անունները, եւ փեսացուն պետք է մեկ առ մեկ պատասխանի նրանց բոլոր հարցերին: Եթե փեսան օգնություն խնդրի, այդ չա-

փահասները պետք է դիմեն հարսի ծնողներին կամ հարսնաքրոջը՝ ճշտելու, թե արդյո՞ք նրանք ցանկանում են օգնել նրան: Եւ հնարավոր է, որ նրանք դիտմամբ չօգնեն նրան, որպեսզի փեսան էլ ավելի վատ դրության մեջ հայտնվի: Մի լավ բարկացնելուց հետո նրանք սկսում են ուտել ու խմել եւ զվարճալի ծրագրերում խաղալ: Մեկ-երկու օր անց զույգը հարսի ընտանիքի կողմից ստացած նվերներով վերադառնում է ամուսնու ընտանիք:

## 2. Չառչան շրջանի հետհարսանեկան արարողությունը

Չառչան տարածաշրջանում մարդիկ լուրջ են վերաբերում հարսանեկան սովորույթներին: Անցյալում նրանք մեծ ուշադրություն էին դարձնում, որպեսզի պսակադրությունները պատշաճ կերպով կազմակերպեն: Տարբեր վայրերում սովորույթները տարբեր են լինում, որոշ տեղերում՝ պարզ, որոշներում՝ բարդ: Այնուամենայնիվ, կան որոշ համընդհանուր սովորույթներ՝ առաջարկության, ծննդյան ամսաթվերի, նշանադրության նվերների հանձնման, հարսանեկան նվերների ընծայման, հարսանիքների եւ հարսանեկան ծիսակատարությունների կազմակերպման, այսպես կոչված «վեց էտիկետի» հետ կապված, որը կարելի է նաեւ ընդհանրացնել որպես «չորս բարքեր»՝ նշանդրեքի նվերների հանձնում, հարսանիքի կազմակերպում, նվերների առաքում եւ պսակադրության արարողություն: Բացի վերը նշված էտիկետներից, որոշ վայրերում հարսանիքից հետո երրորդ օրը տեղի են ունենում նաեւ այլ արարողություններ:

Հարսանիքից հետո տասներկուերորդ օրը կամ չորս ամիս անց նրանք պետք է կազմակերպեն վերադարձի արարողություն: Չառչան շրջանում նրանք պետք է երեք անգամ նման արարողություն անցկացնեն. այսպես՝ «առաջին դարձ», «երկրորդ դարձ» եւ «երրորդ դարձ»: Սակայն որոշ դեպքերում առաջին վերադարձի ժամանակ նրանք չեն կարող գիշերն անցկացնել հարսի տանը: Նրանք ճաշից հետո հարկադրված են վերադառնալ փեսայի տուն: Երկրորդ վերադարձին նրանք կարող են մեկ կամ երկու գիշեր անցկացնել հարսի տանը, սակայն գերադասելի է, որպեսզի նրանք ետ վերադառնան փեսայի տուն: Երրորդ վերադարձի ժամանակ նրանք կարող են հարսի տանը մնալ տասից տասնհինգ օր, եթե նրանք քննարկել են փեսայի ծնողների հետ, եւ վերջիններս դեմ չեն եղել: Ընդհանրապես, ըստ պայմանավորվածության, առաջին երկու վերադարձի ժամանակ հարսին պետք է ուղեկցի իր եղբայրը: Երրորդ դարձի ժամանակ հարսը կարող է մենակ վերադառնալ, կամ՝ ամուսնու հետ:

Չառչան շրջանում փեսան առաջին անգամ իր զոքանչին եւ աներոջը



այցելելիս պետք է երեք մեծ նվեր պատրաստի: Այնուհետև նրա կնոջ ծնողները նրա պատվին խնջույք են կազմակերպում, մատուցվում են նաև ձվեր: Գաշից հետո փեսան պետք է ետ վերադառնա իր տուն՝ թողնելով իր կնոջը իր մոր մոտ, եւ ապա ետ տանի նրան նշանակաված օրը, կամ դիմի հարսի եղբայրներին, որպեսզի հարսին ետ ուղարկեն: Սակայն արդի ժամանակներում այս սովորույթները պարզեցված են: Ամուսնություն-


նից հետո, երբ փեսան իր կնոջը տուն է տանում, նրանք կարող են հենց առաջին դարձի ժամանակ միասին գնալ հարսի մոր տուն: Այնուհետև նրանք հեռանում են եւ դրսում մնում, օրինակ՝ զբոսնում են եւ վերադառնում՝ որպես երկրորդ այցելություն: Հետո նրանք կարող են որպես սովորական այցելություն հարսի տուն այցելել:

# ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԳԼՈՒԽ ՄԵԿ

## ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 1. Ամուսնալուծման յոթ օրենքները

«Յոթ օրենքները» հնագույն ժամանակների տիպային ամուսնալուծման համակարգն է: Եթե փեսան գտնում է, որ հարսը ամուսնալուծման օրենքի սահմանված կարգով խախտել է յոթ դրույթներից մեկը, նա կարող է դուրս



հանել կնոջը եւ իր հոժար կամքով ամուսնալուծվել: Դատարանում մեղադրանք ներկայացնելու կարիք չկա: Միայն երկու կողմի ծնողների ստորագրությամբ ու վկայությամբ կազմած պայմանագիրը բավարար հիմք է հանդիսանում, որպեսզի նրանք ամուսնալուծվեն: Այսպիսով, կարող ենք տեսնել, որ «յոթ օրենքները» իրավական կանոնադրություն էր, որը իրավունք էր վերապահում ամուսնուն իր իսկ ցանկության դեպքում բաժանվել կնոջից: Սա հիմնականում բխում է ամուսնու եւ ամուսնու ընտանիքի պաշտպանության շահերից: Այսպիսով, «յոթ օրենքները» համարվում են որպես կնոջ իրավունքները ճնշելու միջոց:

Առաջինը ամուսնու ծնողների հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսևորելն է. կինը հնազանդորեն չի ծառայում իր ամուսնու ծնողներին: Ավանդաբար Չինաստանում, երբ կինը ամուսնանում է, նա պարտավոր է իր ամուսնու ծնողներին ավելի լուրջ վերաբերել, քան իր ծնողներին, եւ եթե կինը չհնազանդվի, դա ուղղակի անպատկառություն կհամարվի:

Երկրորդը արու զավակ չունենալն է: Ժողովուրդն այն կարծիքին է, որ տղան է ընտանիքի շարունակությունը եւ արու զավակ չունենալու դեպքում օջախի ծուխը կմարի: Ավանդական Չինաստանում տոհմի շարունակությունը շատ կարեւոր է, եւ եթե կնոջը չի հաջողվում որդի ունենալ, դրանից նրանց ամուսնությունը իմաստազուրկ է դառնում:

Երրորդ պատճառը անբարոյականությունն է: Ասել է թե, կինը դավաճանում է իր ամուսնուն: Սա կարող է պղծել տոհմը, եւ ամուսինը, կամ անգամ ամբողջ ընտանիքը, կարող է համարել, որ կինը կարող է մի ուրիշից երեխա ունենալ, որը ոչ մի արյունակցական կապ չունի այդ գերդաստանի հետ:

Չինաստանում ֆեոդալական հասարակությունը հիմնված է ընտանեկան միության վրա: Ընտանիքը ոչ միայն հասարակության տնտեսական միավորն է համարվում, այլև հանդիսանում է որպես սոցիալական ընկերություն: Միեւնույն ժամանակ այն մի միություն է, որը կապված է արյունակցական հարաբերություններով: Ահա սրանք են այն ծանրակշիռ փաստարկները, որ ընտանիքը ընտանիքի ներսում թույլ չի տալիս արյունակցական հարաբերությունների պղծում:

Չորրորդ պատճառը կնոջ նախանձախնդրությունն է: Այսինքն կինը հակված է ուրիշներին նախանձել, ինչի հետեւանքով ընտանիքի կայունությունը խաթարվում է: Կնոջ կատաղությունն ու նախանձը ընտանեկան աններդաշնակության պատճառ կարող են հանդիսանալ եւ կարող են խաթարել իդեալական ամուսնական հարաբերությունները, ինչը կարող է հանգեցնել քաոսի, քանի որ «ամուսինը կնոջ սկզբունքներով է առաջնորդվում»:

Հինգերորդ պատճառը ծանր հիվանդություն ունենալն է: Դրա պատճառով կինը չի կարող նրանց հետ միասին զոհաբերության ծեսերին մասնակցել: Ավանդական Չինաստանում ընտանիքի յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունն է մասնակցել նախնիների պատվին մատուցվող զոհաբերություններին: Թեեւ անհարմարությունը միայն զոհաբերությանը չի սահմանափակվում: Եթե կինը հիվանդ է, ապա դա բազում դժվարություններ է առաջացնում, եւ սա լուրջ պատրվակ է, որպեսզի ամուսինը նրանից բաժանվի: Մարդիկ մինչ օրս էլ այն կարծիքին են, որ սա լուրջ պատճառ է հանդիսանում:

Վեցերորդ պատճառը շատախոսությունն է: Այսինքն՝ կինը չափից շատ է խոսում, կամ սիրում է բամբասել մյուսների մասին, ինչը ընտանեկան միությանը չի նպաստում: Չինական ավանդական ընտանիքում կինը, մասնավորապես ցածր դասի պատկանող, չի կարող ազատ արտահայտվել, քանի որ նա դրսից եկած ընտանիքի անդամ է: Եթե նա փորձի ազատ

արտահայտվել, ընտանիքի անդամների միջև կարող են տարածայնություններ առաջանալ:


Յոթերորդ պատճառը գողությունն է: Դա նշանակում է, որ կինն անձամբ տնօրինում է իր կարողությունները, կամ այսպես կոչված՝ սեփական խնայողությունները: Սա ընտանեկան կանոնին դեմ է եւ խստիվ արգելվում է: Սա արտացոլում է նահապետական ընտանիքների կանանց սահմանափակումները, ինչը միտված է պահպանել ընտանիքի ունեցվածքի իրավունքները:

Ամուսնալուծման հայտարարությունները սկիզբ են առել Թան դինաստիայի օրոք եւ լայնորեն կիրառվել են մինչ Սուն դինաստիայի ժամանակաշրջանը: Այդ ժամանակ ամուսնալուծման հայտարարություններ անելու համար հիմնավոր պատճառներ պետք է ներկայացվեին: Սակայն երբ խոսք է գնում Յուան դինաստիայի մասին, ամուսնալուծման կարգավորումը ավելի խիստ էր, եւ ամուսնալուծման մասին հայտարարությունը պետք է քննվեր կառավարության պաշտոնյաների կողմից: Այդ կանոնակարգը շարունակվեց մինչեւ Մին եւ Ցին դինաստիաների ժամանակաշրջանը: Յոթ պատրվակների հետ կապված բազմաթիվ տարածայնություններ կային, օրինակ, կարծում էին, որ այդ կանոնները շատ անարդար են, հատկապես կանանց նկատմամբ: Դրա ընդդիմադիր ներկայացուցիչներն էին Սոն Լինը՝ Մին դինաստիայից, Յու ժենգչին՝ Ցին դինաստիայից եւ այլոք: Ցին դինաստիայից հետո եւ Չինական Հանրապետության կազմավորման վաղ շրջանում ամուսնալուծման յոթ օրենքների համակարգը, ինչպես նաեւ ավանդական ամուսնության համակարգը, բազմաթիվ մտավորականների կողմից լայնորեն քննադատվեց: Փաստորեն, այդ յոթ սկզբունքները՝ մինչև 1930 թվականի Չինաստանի կառավարության կողմից քաղաքացիական օրենքի ընդունումը, դեռ ուժի մեջ էին:

## 2. Ամուսնալուծություն Յուչոյով

Դեռեւս Հան դինաստիայի ժամանակ գոյություն ունեին Յուչոյով ամուսնալուծման կարգավորումները: Հնում մարդիկ համարում էին, որ երեք պատրվակ գոյություն ունի. ամենազլխավոր պատճառը որդի չունենալն էր: Եթե կինը որդի լույս աշխարհ չբերեր, ամուսինը արդարացիորեն կարող էր ապօրինի կին ունենալ, կամ ողջամտորեն հրաժարվել իր կնոջից:

Ամուսնալուծման համակարգը կարգավորելու եւ այն գրի առնելու համար, ժողովրդական ավանդույթներից վերցված ու օրենքի ուժ ստացած Յուչոն՝ Թան դինաստիայի օրենքների մեկնաբանման բացատրություններ



րում, այսպես է հատկորոշվում. «Ամուսինը հարվածում է իր կնոջ ծնողներին, տատիկին, պապիկին, մորաքրոջը, հորաքրոջը, եղբայրներին, քույրերին եւ անզամ սպանում է նրանց, կամ կինն է հարվածում իր ամուսնու ծնողներին, տատիկ, պապիկին, մորաքրոջը, հորաքրոջը, քույրերին ու

եղբայրներին եւ այլն: Սրանք են Յուչո-ամուսնության բոլոր տիպերը»:

Չին ժողովրդի ավանդական սովորությունների մեջ ամուսնության խնդրո առարկան ոչ թե հարսն ու փեսան էին, այլ՝ փեսայի ընտանիքն ու տոհմերը: Ամուսնությունը տոհմի վարքագիծն էր, ուստի պասկադությունները պետք է համապատասխանեին ծեսերին եւ օրինականացվեին: Միայն այս դեպքում ամուսնությունը կհաստատվեր մյուսների կողմից եւ օրենքով կճանաչվեր: Իսկ ամուսնական հարաբերությունները պետք է ամրապնդվեին միայն ծնողությունից հետո: Կինը ընտանիքի համար ինչ-որ չափով որպես գործիք էր ծառայում՝ երեխա ունենալու համար: Եվ բնավ էական չէր՝ զույգերը իրար սիրու՞մ էին, թե՛ ոչ: Նրանց անձնական կարծիքը չէր կարող ինչ-որ կերպ փոխել նրանց ճակատագիրը: Այն ամենը, ինչ նրանք կարող էին անել, լոկ ենթարկվելն էր ու ընտանիքի կարեւորագույն առաքելությունն ավարտին հասցնելը:

Յուչոյով ամուսնալուծվելը հին ժամանակներում համարվում էր անենահզոր բաժանարար համակարգը: Յուչո՝ նշանակում է, որ նրանց հարաբերություններում դրսևորվել էր որոշակի վիրավորական վարքագիծ, օրենքով նախատեսված կարգով, ինչի հետեւանքով զույգերը խզել էին իրենց հարաբերությունները: Այդ դեպքում զույգերը պետք է բաժանվեին կամ օրենքով պատժվեին: Եվ եթե նրանք բաժանվում էին օրենքով, նրանք այլեւս երբեք չէին կարող ամուսնանալ: Նրանց ամուսնությունը լուծելուց հետո պաշտոնյան ուշադիր քննում էր այդ հանցավոր դեպքը: Սա ծիսակատարությունների եւ օրենքի խառնուրդ է համարվում հին չինական ընտանիքներում: Առաջին անգամ այն ի հայտ եկավ Չան դինաստիայի օրոք, պաշտոնապես օրենքի ուժ ստացավ Թան դինաստիայի ժամանակաշրջանում եւ Ցին դինաստիայից հետո այն վերացվեց:

Փոփոխվող հասարակարգը աստիճանաբար Յուչո ամուսնալուծման համակարգում բարեփոխումներ նտցրեց. կենտրոնանալով ընտանեկան խնդիրների շուրջ՝ ժամանակի ընթացքում գնահատվեցին անձնական շահերը, ինչն իր արտացոլումը գտավ հնագույն ամուսնական համակարգի ներքին զարգացման օրենքներում: Դա բացահայտում է այն հանգամանքը, որ հին Չինաստանում ամուսնությունը միավորվում էր հարաբերությամբ: Իր բովանդակությամբ Յուչո ամուսնալուծման համակարգը ենթադրում է ավարտված հարաբերությունների վարքագծի սահմանում, ամուսնալուծման դատավճիռ եւ պատիժ, եթե վերջիններս չեն ենթարկվում ամուսնալուծող դատավորի հրահանգներին կամ ամուսնալուծությանը «մատների արանքով են մայում»:

Հին ժամանակներում մարդիկ գտնում էին, որ հոր եւ որդու, եղբայրների միությունը միավորված է աստծո կողմից, քանի որ նրանք միմյանց հետ կապված են արյունակցական հարաբերություններով, մինչդեռ զույգերը միավորվում են անհատի միջոցով, զույգերի կապը ազգակցական չէ, այլ՝ մարդկային:

### 3. Ապահարզան՝ համաձայնությամբ

Հնագույն ժամանակներում զույգերի ամուսնությունը խիստ էր, սակայն այն նաեւ ընդգծում էր երկու սիրահարների ներդաշնակությունը: Եթե զույգը իրար հետ լավ հարաբերությունների մեջ չէր, նրանք կարող էին բաժանվելու որոշում կայացնել: Համաձայնեցված ապահարզանը թույլատրվում է օրենքով:

Համաձայնեցված ապահարզանը խաղաղ ճանապարհով բաժանվելու մի տեսակ է: Այսինքն երկու կողմերը համաձայնվում են ամուսնալուծվել, եւ օրենքը երկու կողմերին իրավունք է վերապահում միասին որոշելու՝ երկու կողմերին հավասար իրավունքներ ընձեռելով: Նրանցից ոչ մեկին իրավունք չի վերապահվում անձնական կամքը մյուսին հարկադրել: Այդ երկու կողմերը գրում են «կնարձակման հայտարարություն», որում նշվում է բաժանման պատճառը, ամուսնալուծվելու վերաբերյալ նրանց կամքը, եւ կրկին ամուսնանալու նրանց փոխադարձ ցանկությունը: Ներկա գտնվող երկու կողմի ազգականների վկայությունների եւ ստորագրությունների հետ մեկտեղ նրանք ստորագրում եւ իրենց խաչածեւ դրոշմն են դնում: Այս ամենն ավարտելուց հետո ապահարզանի հայտարարությունը ուժի մեջ է մտնում: Այլ կերպ այդ հայտարարությունն իրավական ուժ չի ստանա: Ավելին, ապահարզանի հայտարարությունը պետք է լինի երկու օրինակով, որը շատ մոտ է ժամանակակից ապահարզանի պայմանագրին:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

### ՀԱՏՈՒԿ ԱՍՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 1. Կրկնամուսնություն կնոջ մահից հետո



Հնագույն ժամանակներում մարդիկ օգտագործում էին Քին եւ Սին՝ լարային գործիքների մի զույգ՝ որպես նմանակ զույգերի: Եթե կինը մահանում էր, ասում էին՝ «լարը կտրվեց»: Կնոջ մահվանից հետո նորից ամուսնանալուն կոչում էին «նոր լարով փոխարինել»: Գարնան եւ Աշնան ժամանակաշրջանում այդ մասին մի լեգենդ էին պատմում:

Գարնան եւ Աշնան ժամանակաշրջանում Յու Բոյա անունով

մի տղամարդ լավ ցիտրա էր նվագում, եւ նրա կինը հաճախ ունկնդրում էր նրա երաժշտությունն ու ընթռչխնում: Բայց օրերից մի օր նրա կինը ծանր հիվանդացավ, եւ նա իրենց տուն հրավիրեց լավագույն բժիշկներին: Նա շատ մտահոգ էր, եւ այլեւս ցիտրա նվագելու տրամադրություն չուներ: Նրա կնոջ վիճակը գնալով ավելի էր վատթարանում: Մի օր նա իրեն մի փոքր ավելի լավ զգաց եւ խնդրեց, որ ամուսինն իր համար երաժշտություն նվագի: Յու Բոյան եռանդով բերեց իր ցիտրան եւ սկսեց նվագել, նա նվագում ու նվագում էր: Երբ նա հասավ գագաթնակետին, լարը հանկարծ բաժանվեց երկու մասի: Հենց այդ ժամանակ նրա կինը մահացավ: Յու Բոյան այնքան տխրեց, որ որոշեց այլեւս երբեք երաժշտություն չնվագել: Մի տարի անց նրա ազգականներից մեկը նրան ծանոթացրեց մի հեռեկ կնոջ հետ: Առաջին հանդիպումից հետո կինը համաձայնեց, սակայն պնդեց, որ Յուն նշանադրությունից առաջ ցիտրա նվագի: Կնոջը կորցնելուց հետո ամբողջ ժամանակ տխուր Յուն հանկարծ համաձայնվեց եւ ձեռքն առավ իր ցիտրան, որին ավելի քան մեկ տարի չէր դիպչել: Փոխարինելով այն մի նոր լարով, նա բոլոր մարդկանց առաջ նվագեց ցիտրան: Երաժշտությունը չափազանց նրբագեղ էր, բարեհունչ ու մեղեդային: Այն բարձ-

րանում եւ իջնում էր՝ սեզ լեռների պես, հոսող գետակների նման: Երկար ժամանակ բոլորն արբեցել էին երաժշտությամբ, մինչեւ որ այն ավարտվեց: Նույնիսկ կանայք, որ առօրյա կյանքում շատ զուսպ էին ու կաշկանդված, ազատություն էին տվել իրենց ձեռքերին: Շատ շուտով հաստատվեց նաեւ հարսանիքի օրը: Եվ այս պատմությունը տարածում գտավ մարդկանց մեջ, եւ այդ ժամանակից ի վեր, մարդիկ օգտագործում էին «լարը փոխել» կապակցությունը՝ ակնարկելով կրկնամուսնություն՝ կնոջ մահից հետո:

Երբ կինն էր կրկին պատրաստվում ամուսնանալ, հարսանեկան գործընթացը համեմատաբար ավելի պարզ էր ընթանում: Հարսանիքի օրը կինը պետք է պատրաստեր զոհաբերության համար ուտելիք եւ որոշ գումար թղթի մեջ դներ ու թաղեր իր մեռած ամուսնու կողքին, այսպես հրաժեշտ տալով նրա հոգուն: Այնուհետեւ ամուսնարարի ուղեկցությամբ կես ճանապարհից նրան պետք է սեւ սեղան աթոռով գետնից բարձրացնեին: Որպեսզի կինը կրկին ամուսնանար, որոշ դեպքերում նա պետք է նոր ամուսնու տուն մտնելիս ինքնուրույն տակառ բարձրացներ, որը կոչվում էր «տակառ սեղան աթոռ»: Տուն մտնելուց հետո նա չպետք է մասնակցեր երկրի ու երկնքի պաշտամունքի արարողությանը, հարսնախցում ծաղրելու արարողությանը, կամ խաչածեւ գինի խմելու ու նման արարողություններին: Նորապսակները մի պնակ լապչա էին ուտում, այնուհետեւ հարազատներին հյուրասիրելու համար հացկերույթ էին կազմակերպում, որը կոչվում էր «ծանոթացում»: Երկրորդ անգամ ամուսնացող հարսին ներկայացնում էին ամուսնու ընտանիքի անդամներին, եւ ամուսնարարը ծանոթացնում էր նրա նախկին կնոջ երեխաների հետ: Կնոջ մահվանից հետո էլ ամուսինը դեռ շարունակում էր կապի մեջ լինել իր նախկին կնոջ ծնողների հետ:

Ավելի բարդ է այն իրավիճակը, երբ ամուրին ամուսնանում է բաժանված կնոջ հետ, կամ կույսն ամուսնանում է բաժանված տղամարդու հետ: Առաջին իրավիճակում կինը չի անցնի այն ամենի միջով, ինչի միջով անցել էր առաջին անգամ ամուսնանալիս, մինչդեռ տղամարդը կարող է ընտրել, կամ՝ պարզեցնել, կամ անել այն նույն քայլերը, **ինչը** առաջին անգամ ամուսնանալիս, սակայն նա չի կարող կարմիր հարսանեկան սեղան աթոռով ողջունել իր հարսնացուին: Հին ժամանակներում նման իրավիճակ շատ հազվադեպ էր պատահում. պատահում էր միայն որոշ քաղաքներում՝ որպես անձնական օրինակներ: Երկրորդ իրավիճակում, այն է, երբ նախկինում ամուսնացած տղամարդը ամուսնանում է օրիորդի հետ, որը նախկինում ամուսնացած չի եղել, նրանց ամուսնությունն ընթանում է այնպես, ինչպես առաջին անգամ ամուսնանալիս:

## 2. Ամուսնություն բարեկամների հետ

Բարեկամական ամուսնություն, այլ կերպ ասած՝ «ժառանգելի ամուսնություն», «ազգական փոխող ամուսնություն», «քենի կամ տեգրամուսնություն» եւ այլն: Բարեկամական ամուսնությունն այն ամուսնական իրավիճակն է, երբ որդին հոր մահից հետո ամուսնանում է իր խորթ մոր հետ, կամ կրտսեր եղբայրը ավագ եղբոր մահից հետո ամուսնանում է նրա կնոջ հետ, կամ ավագ եղբայրը կրտսեր եղբոր մահվանից հետո ամուսնանում էր նրա կնոջ հետ:

Վաղ ժամանակներում շրջամուսնությունը շատ տարածված էր Հան ազգության եւ հարակից մի քանի փոքրամասնությունների մեջ: Մինչ Սուն դինաստիայի կազմավորումը, նեոկոնֆուցիականության համաձայն, կայսերական կառավարությունը սկսեց լրջորեն արգելել բարեկամական պսակադրությունները՝ կիրառելով որոշ պատժամիջոցներ: Սուն դինաստիայի գաղափարախոսները համարում էին, որ բարեկամական ամուսնությունը դեմ է նեոկոնֆուցիականության ֆեոդալական բարոյական սկզբունքներին: Արյունակցական հարաբերությամբ դա կոչվում էր արյունապղծություն: Սակայն եթե դիտարկելու լինենք իրական արյունակցական հարաբերությունը, ապա կտեսնենք, որ ոչ մի իրական արյունակցական կապ չկա որդու եւ խորթ մոր, կրտսեր եւ ավագ եղբոր կնոջ կամ ավագ եղբոր ու նրա կրտսեր եղբոր կնոջ միջեւ: Այսպիսով, հիրավի, այստեղ ոչ մի պղծություն չկա:

Արդի հասարակության մեջ մենք շատ ու շատ ազատ ենք: Ջուլյգերը կարող են սիրել միմյանց, անկախ նրանից՝ ինչպիսի սեր է դա՝ «սեր տղամարդու եւ կնոջ միջեւ, որը նրանից տարիքով ավելի մեծ է», կամ՝ «մայիս-դեկտեմբեր ռոմանս», երբ երկու կողմերը միմյանց հետ համաձայնության են գալիս:

Գյուղերում, որտեղ մարդիկ ավելի զուսպ են, գյուղացիների շրջանում շրջամուսնությունները դեռեւս ավելի ընդունված են:

Ամուսնական ձեւերից մեկն էլ քենամուսնական պսակադրությունն է, երբ ավագ քրոջ մահվանից հետո նրա կրտսեր քույրը ստանձնում է իր ավագ քրոջ դերը՝ ամուսնանալով նրա ամուսնու հետ: Եվ նման ամուսնությունը պիղծ չէ, քանի որ պատճառը նրա ավագ քրոջ մահն է:

## 3. Կնակեցական ամուսնություն

Գուանչի նահանգի էթնիկ փոքրամասնություն կազմող խմբերում, հասարակական զարգացման երկար պատմական գործընթացում, պահ-

պանվել էր այն ավանդույթը, որ ընտանիքում հատկապես գերակա է մայրիշխանությունը: Նույնիսկ մինչ այժմ, արդի հասարակության մեջ այն տարբեր աստիճաններով շարունակում է գոյատևել: Մայրիշխանական ամուսնությունն ինքնատիպ ամուսնության




հետակեցական նախատիպն է, որը մայրիշխանության համակարգից փոխանցվել է հայրիշխանության համակարգ: Անտիկ ժամանակներում այն լայնորեն տարածված էր Ջուա էթնիկ խմբավորման համայնքային շրջաններում: Մատրիլոկալ ամուսնություն է համարվում այն ամուսնությունը, երբ հարսնացուի ծնողները նորապսակների համար նոր տուն են կառուցում, որպեսզի վերջիններս այնտեղ բնակվեն: Որոշ ժամանականց հարսը իր ամուսնու հետ միասին այդ տնից հեռանում ու գնում է ամուսնու ընտանիքի հետ ապրելու:

#### 4. Ստորերկրյա ամուսնություն

Ստորերկրյա ամուսնությունն այն է, երբ որոշ սնահավատ մարդիկ իրենց մահացած երեխաների համար հարսանիք են կազմակերպում: Դա նաեւ կոչվում է «դժոխային հարսանիք» կամ «դիվային ամուսնություն»:

Անտիկ ժամանակներում կային հարուստ ընտանիքներ, որոնք գնահատում եւ անսահման հոգ էին տանում իրենց երեխաների համար, որոնք մինչ չափահաս դառնալը կամ ամուսնանալը կյանքից հեռացել էին: Այդ ընտանիքները շատ էին վշտանում եւ ամեն ինչ անում էին, որպեսզի նրանց համար ամուսնական զույգ գտնեն: Երկու կողմի ընտանիքները կազմակերպում էին այն նույն արարողությունները, ինչ կենդանի մարդկանց համար էին կազմակերպում: Եթե երկու կողմը գտնում էր, որ հասել է իր նպատակին, նրանք ընտրում էին օրը՝ արարողությունն անցկացնելու համար: «Ուրվական-ուրվական ամուսնության» ծիսակատարությունից հետո նրանք մահացած զույգի հուշատախտակը դնում էին շիրիմի վրա եւ օրհնում էին անեն տարի: Ունեւոր որոշ ընտանիքներ կարող էին անգամ մահացած զույգի համար իրենց տոհմից երեխաներ ընտրել: Դրա-

նից հետո, այդ երկու ընտանիքները միմյանց համարում էին խնամիներ եւ իրար հետ սերտ կապի մեջ էին լինում: Այս սովորույթը գերիշխում էր Մին եւ Ցին դինաստիաների օրոք, եւ աստիճանաբար անհետացավ 1911 թվականի հեղափոխությունից հետո:



Ամուսնության մի այլ տեսակ՝ «ամուսնություն ուրվական տղամարդու հետ», հիմնականում վերաբերում է աղքատ ընտանիքների անգրագետ աղջիկներին: Հին հասարակարգում ծնողների կարգադրությունից, ամուսնարարի աշխատանքի ավարտից եւ երկու կողմի նշանադրությունից հետո, եթե տղան հիվանդության պատճառով մահանում էր, կամ ինչ-որ դժբախտ պատահարի զոհ էր դառնում, նրա ընտանիքը աղջկա ետելից մարդ էր ուղարկում, որպեսզի նա շտապեր ու մասնակցեր իր փեսացուի հուղարկավորությանը: Երբ աղջիկը ժամանում էր, նա պետք է երկրպագեր երկիրն

ու երկինքը, եւ նախնիներին՝ նախապես, այնուհետեւ թեյ մատուցեր տղայի ծնողներին ու հարազատներին, ինչը ցույց էր տալիս, որ այդ երկուսը ամուսնացել են, եւ աղջիկը դարձել է տղայի ծնողների հարսը: Պսակադրությունից հետո կինը պետք է իր ամբողջ կյանքում այրի մնար: Ոմանք չդիմանալով այս ամենին՝ սիրահարվում էին ու երկրորդ անգամ ամուսնանում: Սակայն շատ հազվադեպ էր այդպես լինում: Նրանցից շատերը իրենց մեջ ուժ չէին գտնում պայքարելու ֆեոդալական եւ սնտիապաշտական ճնշման դեմ եւ մինչեւ իրենց կյանքի վերջը այրի էին մնում:

Նույնը վերաբերում էր հարսին, եթե նա մահանում էր հարսանիքից առաջ: Երբ զալիս էր ամուսնանալու ժամանակը, փեսայի ընտանիքը պատրաստում էր նվերներ եւ հարսնացուի համար թղթի մեջ գումար էր պատրաստում եւ մահացած հարսի հոգեւոր հուշատախտակը տանում էին տուն ու սովորական ամուսնություն կազմակերպում: Ի տարբերություն մահացած փեսայի դեպքի, տղամարդը ամուսնությունից հետո կարող էր կրկին ամուսնանալ, սակայն նրա կինը համարվում էր միայն նրա երկրորդ կինը: Մահացած կինը, քանի որ նրանք նշանադրվել էին, ամեն դեպքում նրա առաջին կինն էր համարվում: Հետագայում, ուրիշ կնոջ հետ ամուսնանալիս, այդ կնոջը կոչում էին՝ «երկրորդ կին», «փոխարինող» եւ այլն:

## ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ ԳԼՈՒԽ ՄԵԿ

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՐԳԵԼՔՆԵՐ

Հին ժամանակներում գոյություն ունեին ամուսնական վեց էփիկետներ: Ըստ ծեսերի եւ ծիսական արարողությունների մասին գրքի արձանագրությունների՝ վեց էփիկետ են համարվում՝ առաջարկություն անելը, ծննդյան տարեթիվը, նշանադրության նվերներ նվիրելը, հարսանեկան նվերներ նվիրելը, հարսանիք կազմակերպելը, հարսանեկան արարողակարգը, որում ներառված են դրանց ծագման մասին տեղեկություններն ու ծիսակատարությունները՝ ամուսնության վերաբերյալ քննարկումից մինչեւ ամուսնանալը:



Սակայն ընդհանուր առմամբ այս բոլոր վեց ձեւերը գործադրվում էին ազնվական կամ հարուստ ընտանիքներում: Ժողովուրդը չէր կարող հետեւել էփիկետի այդ բոլոր վեց ձեւերին եւ միշտ պարզառում էր դրանք աղքատության պատճառով: Այդ գործընթացներից շատերը պարզեցվել են:

Առաջարկությունն այն է, երբ փեսայի ընտանիքի հրավերով ամուսնարարը գնում է հարսի տուն՝ ամուսնության համար առաջարկ անելու: Հին ժամանակներում ամուսնության առաջարկ անելիս՝ որպես ընծա իրենց հետ տանում էին կենդանի վայրի սագ: Կան տարբեր մեկնաբանություններ վայրի սագը որպես նվեր տանելու վերաբերյալ: Առաջին ավանդությունը համաձայնեցված է Յինին ու Յանին (տիեզերքում ամեն ինչ բաղկացած է երկու ուժից, որոնք իրար հակադիր են, բայց փոխլրացնում են միմյանց): Ասում են, որ վայրի սագը նման է չվող թռչուններին: Երբ ծառերի տերեւները թափվում են, նրանք թռչում են դեպի հարավ, երբ սառույ-

ցը հալվում է, նրանք թռչում են դեպի հյուսիս: Յինի եւ Յանի սեւ ու սպիտակ կողմը իր ուրույն ձեւն ունի, ինչը շատ նման է չվելիս թռչունի բացած թւերին: Սա շատ հին ասացվածք է: Երկրորդ ավանդությունում ասվում է, որ նրանք այլեւս երբեք չեն ամուսնանում: Ասում են, որ վայրի սագը իր ամբողջ կյանքում միայն մեկ անգամ է ամուսնանում: Երբ նրանք կորցնում են իրենց ընկերակցին, նրանք այլեւս երբեք չեն ամուսնանում: Մարդիկ ընդունում են այս իմաստը եւ օգտագործում են վայրի սագերին արտահայտելու իրենց միտքն այն մասին, որ նրանք միշտ հավատարիմ կլինեն իրենց ամուսնությանը: Երրորդ ավանդությունում, ըստ չինական ամուսնությունների փոփոխությունների վերաբերյալ փորձագետների եզրակացության, դրանից շահ ստանալն է: Դիտարկելով այն տեսակետը, որ նրանք որպես ընծա աքաղաղ էին տանում, կարող ենք ասել, որ դա որսորդական ժամանակներից եկած հին սովորություն է: Մեր օրերում սակավադեպ ենք հանդիպում մարդկանց, որոնք վայրի սագ են նվիրում: Այժմ դրան փոխարինել են հավերն ու ընտանի սագերը:

Սատկած հավերն ու սագերը որպես տաբու արգելված են առաջարկի էթիկետում, քանի որ մահվանը վերաբերող ամեն բան համարվում է չարագուշակ: Այնպես որ, սա խիստ արգելված է:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

### ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՎԵՐՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔՆԵՐ

Ամուսնության քննարկման ընթացքում առաջարկություն անելուց, ծննդյան օրերի ճշգրտումից հետո հանձնում են նշանադրության նվերները: Ամուսնական հատկանիշների ստուգումը հարսի ու փեսայի անունների եւ ծննդյան օրերի համապատասխանեցման ճշգրտումից



հետո արդյունքների փոխանակման մի ծես է: Եթե արդյունքը նպաստավոր է, փեսան պետք է որոշ նվերներ պատրաստի եւ կրկին հարսին տեսակցի, ինչը հանդիսանում է հանձնառման փուլի կարեւորագույն պահը: Հին ժամանակներում սագն օգտագործում էին, ցույց տալու համար, որ իրենց ամուսնությունն արդեն որոշված է: Այնուհետեւ ամուսնական գործընթացի զարգացման ու էվոլյուցիային զուգընթաց, ի վերջո այն վերածվեց նշանադրության դրամի ու նվերների, ինչպիսիք են՝ մատանիներ, ոսկեղեն, մետաղադրամներ, գունավոր մետաքս, տորթեր, տոնական մոմեր եւ այլն:

Դեռեւս Մին եւ Ցին դինաստիաների օրոք թեյը հայտնի էր Հան էթնիկ խմբի եւ Չինաստանի հարավարեւմտյան մի շարք փոքրամասնությունների մեջ: Նորապսակներին տրվելիք կանխիկ գումարի չափը պետք է զույգ թվով լինի. այն փաթաթում են կարմիր թղթի մեջ, սովորաբար այն անվանում են «կարմիր փաթեթ», «երջանկության դրամ» կամ «հարսանեկան գումար»: Վաղօրոք տրվող նվերները նույնպես պետք է զույգ լինեն: Հարսանեկան ցանկն ու հրավիրատոմսերը նույնպես պետք է զույգ թվով լինեն. դրանք փաթաթում են կարմիր թղթով (սպիտակ թղթով փաթաթելն արգելված է), կենտ թիվը արգելված է: Հատկանշականն այն է, որ որոշ ընտանիքներ գտնում են, որ նվերների անունները պետք է զույգ ոճով գրված լինի: Այսինքն, եթե նվերի անունը բաղկացած է երեք բառից, ապա

այն պետք է փոխարինել չորս բառով՝ ցույց տալու, որ զույգ-զույգ իրերը ապագայում իրենց հետ բերում են հաջողություններ, եւ որ նրանց ամուսնությունը կլինի բախտավոր ու երջանիկ: Եթե այն միառժ լինի, դա կնշանակի միայնություն: Այսպիսով՝ միօրինակ բաներն ու կենտ թվերը նշանադրությանը չեն թողնում:

Նշանադրության ժամանակ արգելված է նաեւ ասել «կրկին»: Օրինակ, երբ փեսան բերում է հարսանեկան նվերները, հարսի ընտանիքը սրբարանի վրա պետք է հարսանեկան տորթ, հարսանեկան մոմեր դնի, որպեսզի խոսեն իրենց հոգեւոր նախնիների հետ: Այդ ժամանակ նրանք պետք է վառեն խնկե ձողիկներ եւ խրեն դրանք այրիչների մեջ: Անգամ եթե խնկավետ գավազանը /կուռքի առջեւ վառելու/ դրվում է շեղ անկյունով, թույլ չի տրվում այն կրկին տեղադրել: Մի այլ օրինակ եւս. երբ փեսայի հարազատները պատրաստվում են ետ վերադառնալ, հարսի ընտանիքը պետք է նրանց ճանապարհի, սակայն նրանք երբեք չպետք է ասեն՝ «կրկին կտեսնվենք»: Քանի որ նման դեպքերում արգելված է լսել «կրկին» բառը: Ասում են, եթե ասեն «կրկին», դա կարող է պատճառ հանդիսանալ, որ հարսնացուն կրկին ամուսնանա, ինչը համարվում էր աղետաբեր:

Ծիսակատարությունների հետ կապված այլ արգելքներ եւս կան: Օրինակ, Թայվանի ժողովրդի մոտ ընդունված է, որ հարսի ընտանիքը չպետք է ընդունի փեսայի կողմից ուղարկած բոլոր նվերները: Սակայն մի շարք արգելքներ, որոնք ծեսի են նմանվում, ժողովրդական ավանդույթների խորքային ծագում ունեն: Օրինակ, մինչ ամուսնանալը հարսին չի թույլատրվում հարսանեկան տորթ ուտել: Ենթադրվում է, որ եթե նա համտեսի տորթը, նրան կվերաբերեն որպես ծույլ ու ազահ կնոջ, կամ՝ արժանապատվությունից զուրկ, եւ նման բաներ: Սակայն, իրոք, այդ ամենն արվում է հարսի սեփական ցանկությունները կանխելու նպատակով, ինչը կարող է անկանխատեսելի աղետալի հետեւանքների պատճառ հանդիսանալ:

## ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

### ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՆՎԵՐՆԵՐ ՏԱԼՆ ՈՒ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Ամուսնական նվերներ նվիրելը նաեւ վեց էթիկետի մի մասն է համարվում: Այն հաջորդում է նշանադրության նվերներ հանձնելու արարողությանը: Այսինքն, երբ նրանք նշանվում են, փեսայի ընտանիքը պետք է պաշտոնապես նշանադրության նվերներ ուղարկի հարսի ընտանիքին, որը հանդիսանում է ծիսակարգի կարեւորագույն բովանդակությունը: Հին ժամանակներում այս ծեսը շատ շքեղ էին նշում: Փեսայի ընտանիքն այս առիթն օգտագործում էր՝ ցույց տալու իրենց կարողությունն ու կարգավիճակը, եւ միշտ նվերների ցանկ էր կազմում: Նվերները հանձնելու համար նրանք արկղեր էին օգտագործում ու մարդկանց էին վարձում դրանք տեղափոխելու համար, կամ ձեռքներին բռնած քայլում էին փողոցներով: Միեւնույն ժամանակ, նրանք հրավառություն էին անում եւ երաժշտական տարբեր գործիքներով երաժշտություն նվագում: Ամուսնարարի եւ նվերների պատասխանատուի ուղեկցությամբ նրանք հարսի տուն էին գնում: Նշանադրության բոլոր նվերները պետք է ունենային գեղեցիկ անուններ եւ զույգ թվերով լինեին: Որպես նշանախոսության նվեր թույլ չի տրվում հարսին կոշիկներ ուղարկել, պատճառն այն է, որ նա կարող է դրանք հագնել ու փախչել: Շանդուն նահանգում նշանադրության նվերների ցուցակում բացառում են լցոնված միսը, քանի որ կարծում են, որ լցոնված միսը խորհրդանշում է, որ հարսը կլինի շատ ֆլեգմատիկ եւ աշխատանքում կթերանա: Երբ նշանադրության նվերները հասնում են



նվերների ցանկում չկան լցոնված միսը, քանի որ կարծում են, որ լցոնված միսը խորհրդանշում է, որ հարսը կլինի շատ ֆլեգմատիկ եւ աշխատանքում կթերանա: Երբ նշանադրության նվերները հասնում են

հարսի հարազատներին, նրանք չպետք է այդ ամենն ընդունեն: Նրանք պետք է դրանց մի մասը ետ ուղարկեն: Դրանից հետո նրանք պետք է օժիտի մասն ուղարկեն: Օժիտի մեջ պետք է վերմակ լինի: Ավելին, դեռեւս հնում Ջունյանչիում ընդունված էր, որ վերմակը չպետք է պատրաստված լինի սեպտեմբեր ամսին: Գերադասելի էր հոկտեմբերին պատրաստած վերմակը: Այդ մասին մի ասացվածք կա, որտեղ ասվում է. «Սպասիր հոկտեմբերին, այլ ոչ սեպտեմբերին»: Ինչու՞: Որովհետեւ, ասում են, «հոկտեմբերին պատրաստած վերմակով տասը որդի կունենաս, մինչդեռ փոխարենը սեպտեմբերին պատրաստը ինը դուստր կպարգեւի»: Դեռ ավելին, վերմակը պատրաստելիս սպիտակ թել չպետք է գործածեն. գերադասելի է կարմիրը:

Վերմակ պատրաստողը չպետք է այրի կին լինի, կամ՝ որդեկորույս մայր:

Այդ գործով զբաղվողը պետք է ունենա առողջ ուստրեր ու դուստրեր, ինչը ենթադրաբար հաջողության կրեթի նորապսակներին: Ժեցսյանում հարսնացուն պետք է նախապես հետնորդների տակառիկ պատրաստի, որում առկա են առաջին անհրաժեշտության մանկական պարագաներ՝ բոլորը կարմիր գույնի, հակառակ դեպքում դա նրա ժառանգների վրա վատ ազդեցություն կունենա: Այսպես կոչված հետնորդների տակառիկում դնում են նաեւ կարմիր ձվեր եւ հարսանեկան մրգեր, հուսալով, որ իրենց հետնորդները կծաղկեն:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՍ

### ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՀԱՐՍԻ՝ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Հարսի տուն վերադառնալ՝ նշանակում է, որ հարսանիքից հետո հարսը վերադառնում է իր մոր տունը: Թերեւս այդ առիթի հետ կապված կան որոշ տաբուներ, որոնց վրա հարսը պետք է ուշադրություն դարձնի:

Հարսի վերադարձի կանոնը հիմնականում վերաբերում է ժամանակին: Նա չպետք է սխալ ժամի վերադառնա, այլապես կարող են չարագուշակ բաներ պատահել: Ի հակադրություն, երբ գալիս է վերադառնալու ճիշտ ժամանակը, նա պետք է իսկույն ճանապարհ ընկնի, հակառակ դեպքում չար բախտը կժամանի: Ընդհանրապես, հարսանիքից երեք օր անց հարսն ու փեսան պետք է գնան հարսի ծնողներին տեսության, բայց նրանք պետք է իրենց սեփական տուն վերադառնան մայրամուտից առաջ, որպեսզի իրենց մոր սենյակը չդատարկվի: Հենան նահանգի Լին քաղաքում մարդիկ ասում են, որ նրանք պետք է անցնեն հարսի անցած մույն ճանապարհով, եւ ինչպես ասացվածքում է ասվում՝ «Երեք օրվա ընթացքում մենք չպետք է երկու տարբեր ճանապարհով գնանք»: Յի ազգության մոտ մոր զույգը չպետք է հարսի տուն գնալու ճանապարհին զրուցի, նրանք իրենց պետք է այնպես պահեն, ասես օտարականներ են: Հան էթնիկ խմբում զույգերը սովորաբար իրար հետ մտերմիկ զրույց են անում: Կա հայտնի մի մեղեդի՝ «Վերադարձ մայրական տուն», որը լայն տարածում է գտել այդ ժողովրդի մեջ: Եվ մոր զույգը հարսի տուն գնալիս իր հետ նվերներ պետք է տանի, անշուշտ՝ զույգ թվով: Իսկ հարսի ծնողները այդ ամենը չպետք է ընդունեն: Նրանք դրանց մի մասը պետք է զույգի հետ ետ ուղարկեն: Սովորաբար երկու կողմը կարող է միմյանց հետ ազատ շփվել իրենց հարսանիքից մեկ ամիս անց: Հետո, երբ հարսը վերադառնա իր մոր մոտ, կարող է այնտեղ մնալ: Սակայն հստակ սահմանված է, թե քանի օր հարսը պետք է այնտեղ ապրի: Հենան նահանգի որոշ վայրերում կարծում են, որ հարսի այնտեղ մնալու օրերի քանակը պետք է համապատասխանի այն օրվան, երբ նա վերադարձել է իր ծնողների տուն. Ասում են. «Արի ութերորդ օրը, ապրիր այստեղ ութ օր», եւ երկու կողմն էլ կծաղկեն: «Արի իններորդ օրը, ապրիր ինը օր»՝ երկու կողմն էլ կունենան ինչ-որ ցանկանում են: Իսկ առավելագույն տեսողությունը կես ամիս է: Սովորություններին հետեւելով՝ երկու կողմը երջանիկ կլինեն: Սակայն որոշ վայ-

րերում, այնուամենայնիվ, արգելքներ գոյություն ունեն՝ կապված «ութերորդ օրվա հետ», քանի որ, ըստ հին ասացվածքի, «յոթ օր մնալու փոխարեն ութ օր մնալը» կաղքատացնի հարսի ընտանիքին: Ընդհանրապես մարդիկ այն կարծիքին էին, որ ամուսնացած կնոջ համար անհարիր է իր մոր տանը շատ երկար ժամանակով մնալը, հաշվի առնելով էնոցիոնալ, բարոյական եւ տնտեսական ճնշումը, ինչպես նաեւ արտադրական պահանջարկը:

Երբ հարսն ու փեսան միասին հարսի տուն են գնում, այդ դեպքում եւս որոշ արգելքներ գոյություն ունեն՝ կապված նրանց գիշերելու տեղի հետ: Յան եւ Ման ազգերի մոտ նորաթուխ զույգը չի կարող միասին քնել, հակառակ դեպքում դա հարսի ընտանիքին կսնանկացնի: Այնուամենայնիվ, Յան էթնիկ խմբերի որոշ այլ վայրերում նման սահմանափակումներ չկան:

Հարսի ետ վերադառնալից հետո փոխվում է նրա ինքնությունը: Այդ պահից ի վեր նա պատկանում է իր ամուսնուն, եւ այլեւս իր մորը չի պատկանում: Էլունչեն ազգի ամուսնացած դուստրերին թույլ չեն տալիս մոր տուն վերադառնալուց լվանալ փոքր կաթսաները, քանի որ, ասում են, որ դրանով նա լվանում է իր մոր հարստանալու հաջողությունը: Նմանապես Յենան նահանգի Քսյուֆային քաղաքում մարդիկ իրենց ամուսնացած աղջկան թույլ չեն տալիս դիպչել կամ վերցնել իրենց գդալները, դանակները կամ մկրատը, որպեսզի նա իր մոր հետ հարաբերությունները չխզի: Ընդհանուր առմամբ նրանք հազար ու մի բան են մտածում, որպեսզի հարսը իր մոր տան իրերը չօգտագործի կամ մոր տնից իր հետ ոչինչ չտանի:

Մոր տուն վերադառնալիս գերադասելի է, որ հարսը լռի ու ոչինչ չպատմի իր մորը կամ ազգականներին իր ամուսնու տան հոգսերի մասին: Նմանապես նա չպետք է իր ամուսնուն կամ ամուսնու ընտանիքին պատմի իր ընտանիքի անհաջողությունների մասին: Եթե նա պատմի, դա վրդովմունք կառաջացնի եւ կազդի նրանց հարաբերությունների վրա: Հարսին կկոչեն բամբասկոտ:

## ԳԼՈՒԽ ԴԻՆԳ

### ՏԱԲՈՒՆԵՐ ԱՍՈՒՄՆԱՐԱՐԻ ԳՈՐԾՈՒՄ

Մարդիկ հաճախ շատ լուրջ են վերաբերվում կուսությանը, եւ սիրահար տղաներն ու աղջիկները շատ հաճախ իրար հետ շփվելիս մյուսների մոտ կասկած են հարուցում: Այսպես, Դան ազգային պատկանելության մարդիկ եւ մի շարք այլ փոքրամասնություններ մեծ հաշվով թույլ չէին



տալիս երիտասարդներին ազատ սիրել: Երկու կողմը պետք է միմյանց հետ կապվեր միջնորդ-ամուսնարարի միջոցով, ինչպես նաեւ նրա միջոցով պիտի քննարկեին իրենց ամուսնության հետ կապված բոլոր հարցերը: Ամուսնարարները անուններով, տարիքով, կենսագրական տվյալներով եւ այլ մանրամասնություններով փոխանակվում էին միմյանց հետ, ինչպես նաեւ իրենց տեսակետները երկու կողմի մասին հայտնելով, դրանք շատ կարեւոր դեր էին խաղում զույգերի հարսանիքների քննարկման փուլում: Անգամ հետագայում օրենք դարձավ, որ առանց ամուսնարարի նրանց պսակադրությունը որպես օրինական ամուսնություն չի ճանաչվի: Այն տարիներին, երբ դասավորած ամուսնությունը մեծ տարածում էր գտել, շատ ամուսնություններ կազմակերպվում էին երկու ընտանիքների ու ամուսնարարների միջոցով, մինչդեռ հարսն ու փեսան ոչ մի իրավունք չունեին իրենց կարծիքը հայտնելու: Ոմանք անգամ այդ բանակցությունների ընթացքից անտեղյակ էին: Այն, ինչ նրանք կարող էին անել՝ պայմանավորվածությանը հետեւելն էր: Մինչ հարսնասենյակի մեջ իրար հետ հանդիպելը նրանք իրար չէին ճանաչում: Ահա թե ինչպես են չինական ամուսնական սովորույթները շարունակվում հազարավոր տարիներ անց: Անցյալում՝ ժուռ դինաստիայի ժամանակաշրջանում, ամուսնարար-

ների համար աշխատանքային տիտղոս գոյություն ունեն: Այնուհետև հասարակության փոփոխման եւ դինաստիաների իրար հաջորդման հետ, ամուսնարարի աշխատանքը դարձավ քաղաքացիական աշխատանք: Ամուսնարարներից շատերը մեծահասակ կանայք էին, մարդիկ նրանց միշտ կոչում էին ծեր ամուսնարարներ:

Ամուսնարարների աշխատանքը հարգված է, սակայն կան մասեր որոշ տաբուներ: Ընդհանրապես, ամուսնարարները պետք է խուսափեն իրենց գործը հրապարակային անել: Նրանք հենց սկզբից հնարավոր ամեն բան պետք է անեն, որպեսզի աչքի չընկնեն: Հակառակ դեպքում ամուսնական զույգը կարող է բախվել, եւ նա անեծքի բաժին կդառնա: Ընտանիքը, որը վստահում է ամուսնարարին, հիմնականում հարսի կողմը, չի ընդունում շաղակրատ ամուսնարարին: Եթե ամուսնությունը ծախսողի եւ հանրությանը հայտնի դառնա, օրիորդի հեղինակությունը կանարգվի: Դա կկործանի հարսնացուի հեղինակությունը: Վերջապես, եթե դա չհաջողվի, հարսը կհամարի, որ կորցրել է իր հեղինակությունն ու անեղծությունը, եւ նույնիսկ դժբախտություն կամ ողբերգություն կարող է պատահել: Անգամ այսօր, միմյանց հետ ինքնուրույն կամ ամուսնարարի միջնորդությամբ ծանոթանալիս, ժամադրվելիս երիտասարդները գերադասում են աչքի չընկնել: Լինել աննկատ, մինչեւ իրենց հարաբերությունները կայունանան, եւ դրանից հետո միայն հանրությանը հայտնի կդարձնեն:

Ասում են, որ ամուսնարարները սուրբ առաքելություն ունեն: Նրանք միացնում են նրանց, ովքեր իրար համար են ստեղծված: Սա ցույց է տալիս, որ նրանք կապված են աստվածների հետ, եւ օժտված են ինչ-որ կախարդական ուժով: Մարդիկ նրանց հանդեպ խորը հարգանք են տածում եւ վախենում են վիրավորել նրանց: Ամենակարեւորն այն է, որ իրենց մասնագիտությունից ելնելով՝ նրանք քաջատեղյակ են ամուսնական սովորույթներին ու բանադրանքներին, եւ միեւնույն ժամանակ, նրանք այն մարդիկ են, ովքեր ամենայն մանրամասնությամբ ու ճշգրտությամբ արձանագրում են տաբուները: Հաջող ամուսնությունը նրանց տքնաջան աշխատանքի արդյունքն է, նրանց շնորհիվ են ծեսերն ու սովորույթները տարածում գտնում, նրանց են վստահում զույգերի մասին տեղեկատվության ապահովումը եւ հարսանեկան աշխատանքների համակարգումը: Ընդհանուր առմամբ, ամուսնարարի դերը ողջ բանակցային գործընթացում եւ պսակադրության ամբողջ ընթացքում ամենակենսունակն ու ամենահետաքրքիրն է:

## ԳԼՈՒԽ ՎԵՑ

### ՉԻՆԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԵՐԻ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Ծննդյան օրերի համապատասխանեցման ընթացքում, նրանց նկատառման մեջ, բացի ամուսնական տարիքի հետ կապված տաբուներից, գոյություն ունեն արգելքներ՝ կապված չինական կենդանակերպի հետ: Չինական կենդանակերպը, այլ կերպ ասած՝ ծնված կենդանիները, չինացիների ծննդյան տարեթվերը հիշելու համար արտակարգ միջոց են հանդիսանում: Դա արձանագրում է, որ մարդու ծննդյան տարին բոլորվում է տասներկու երկրային ճյուղերի միջով:



Այդ տասներկու երկրային ճյուղերն են՝ Ձի, Չոու, Ին, Մաո, Չեն, Սի, Վու, Վեյ, Շեն, Յու, Սյու, Յեյ: Քանի որ այս բառերը շատ անպաճույճ, վերացական եւ անմատչելի են, ժողովուրդը կազմեց ու օգտագործեց տասներկու կենդանի, որոնք իրենց հատկություններով համընկնում են դրանց հետ. մուկ՝ Ձի, ցուլ՝ Չոու, վագր՝ Ին, ճագար՝ Մաո, վիշապ՝ Չեն, օձ՝ Սի, ձի՝ Վու, խոյ՝ Վեյ, կապիկ՝ Շեն, աքլոր՝ Յու, շուն՝ Սյու, խոզ՝ Յեյ:

Ուսումնասիրելով այդ տասներկու կենդանակերպի ծագումը, կարող ենք տեսնել, որ այն սկզբում հայտնվել է երգերի գրքում: Հետագայում՝ արեւելյան Հան դինաստիայի ժամանակաշրջանում, Վան Չունը դրանք ամբողջովին արձանագրեց իր Լուինենգ աշխատությունում: Ընդհանուր առմամբ այնտեղ հիշատակվում էին տասնմեկ ծննդյան կենդանիներ: Վերջին տասներկուերորդը ի հայտ եկավ Վուի եւ Յուեյի «Գարնանն ու Աշնանը» աշխատությունում, որը ավարտին հասցրեց Չժաո Ե-ն՝ արեւելյան Հան դինաստիայից: Նա գրել էր. «Չենի համապատասխան կենդանին վիշապն է»: Դրանից հետո համալրվեցին այդ բոլոր ծննդյան կենդանիները: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարդիկ դեռեւս Արեւելյան Հան դինաստիայից առաջ օգտագործում էին այդ ծննդյան կենդանակերպերը:

Անկախ նրանից, թե ինչպես են ընտրվել ու դասավորվել այդ տասներկու կենդանիները, հենց դրանք սկսեցին կիրառել մարդկանց ծննդյան

տարեթվերը արձանագրելու համար, մարդիկ հաղորդակցություն սկսեցին կենդանիների եւ բնավորությունների միջեւ: Նրանք կարծում էին, որ մարդիկ շատ նման են այն կենդանուն, որի տարում ծնվել էին: Այսպիսով, դուք ունեք այդ կենդանու հատկանիշներից մի քանիսը, համեմայն դեպս, ինչ-որ առումով դուք այդ կենդանու հետ նմանություններ ունեք: Հին ժամանակներում այս հավատամքը օգտագործում էին բազմաթիվ պաշտոնական առիթներով, ինչպես օրինակ՝ հարսանիքներում: Նրանք պետք է ստուգեին, որպեսզի հասկանան, թե արդյո՞ք նրանց ծննդյան կենդանիները իրար հետ համապատասխանում են, թե՛ ոչ:

Ծննդյան օրերը համապատասխանեցնելիս լինում են շատ արգելքներ՝ կապված չինական կենդանակերպի հետ: Որոշ շրջաններում, ուր հին Հան ազգությունն է ապրում, մարդիկ չեն սիրում խոյ կենդանակերպով հարսներին, քանի որ կարծում են, որ ամուսնությունից հետո նա կարող է ամուսնու դժբախտության պատճառը լինել: Ինչո՞ւ: Ոչ թե նրա համար, որ նրա ծննդյան տարվա կենդանին շատ վայրագ կամ վտանգավոր է: Հնում մի ասացվածք կար, որում ասվում էր, որ եթե կնոջ աչքերում չորս սպիտակ մաս կա /աչքի սպիտակուց/, ապա նա իր ամուսնուն կթաղի եւ իր տանը մեռակ կմնա: Հետաքրքրական է, հաշվի են առնում, որ խոյի աչքերը չորս սպիտակ մաս ունեն: Հավանաբար այս հանգամանքը փեսայի մոտ սթրես էր առաջացնում: Նա վախենում էր ամուսնանալ այն հարսնացուի հետ, ով ծնվել էր խոյի տարում:

Ժողովրդական մշակութային ժառանգության առանձնահատկությունների համաձայն, ծննդյան կենդանիների փոխադարձ ազդեցության սկզբունքները միանգամայն տարբերվում են մախորդներից, եւ որոշ սկզբունքներ, որոնք կիրառվում էին ամուսնական հատկանիշները ստուգելիս, դուրս են եկել գործածությունից: Օրինակ, ամուսնական հատկանիշներ ստուգելիս, այն մարդիկ, որոնք ծնվել են վագրի տարում, գերադասելի է խուսափելն համապատասխանեցումից նրա հետ, ով ծնվել է շան, կատվի կամ խոյի տարում, կամ՝ հակառակը: Սակայն հետագայում, ուրիշ ավելի առաջադեմ գրքերում, վագրի համակցումը ցլի, խոյի եւ շան հետ այլեւս վատ չէր դիտվում, սակայն բացարձակ արգելված էր կապիկի եւ օձի հետ: Այստեղից կարելի է հետեւություն անել, որ ծննդյան կենդանիների հետագա փոխգործակցությունը ոչ թե ժառանգական բնույթ ունի, այլ այն տարատեսակ ժողովրդական մշակույթների համադրություն է արտացոլում:

## ԳԼՈՒԽ ՅՈԹ

### ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ

Խաչածեւ-էթնիկ ամուսնության ավանդույթները՝ տոհմերից դուրս՝ հնագույն ամուսնական համակարգի ընդլայնման ու զարգացման հետեւանքով են առաջացել, ինչպես նաեւ՝ տոհմի ներսում ներամուսնական արգելքների խստացման անխուսափելի արդյունքն են: Ինչպես հայտնի է, մոնղոլները ազնվականների շրջանում բախվել էին ցեղից դուրս ամուսնական մեծ դժվարությունների հետ: Մոնղոլ ազնվականները գրեթե մի



տոհմի սերունդ են, ուստի նրանք պետք է իրար հետ ներամուսնական դաշինք ստեղծեն անուղղակի՝ տասը սերունդ այն կողմ տոհմի շառավղի հետ: Մոնղոլ ազնվականների համար կարելուք նախադրյալ էր հանդիսանում ամուսիններ փնտրել նույն տոհմի նախնիների՝ ուղղակի կապ չունեցող մերձավորների մեջ: Այս նպատակով մոնղոլները ամուսնանում էին Ման, Դաուր, Էվենկի եւ Էլունչուն ազգային պատկանելությամբ մարդկանց հետ, ինչը դարձավ ցեղից դուրս շատ ողջամիտ ամուսնական համակարգ:

Այնուամենայնիվ, ամուսնական սահմանափակումների հետ կապված, դեռեւս առանձնակի եւ անբեկանելի խոչըր գոյություն ունեն՝ Ման եւ Խիբո, Դաուր եւ Էվենկի, Էլունչուն եւ Էվենկե ազգությունների, Դաուր եւ Էլունչուն ազգությունների միջեւ:

Վերոնշյալ բոլոր ազգություններն ունեն ավանդական տաբուներ: Միեւնույն ազգանվամբ ամուսնանալն արգելված է: Մոնղոլների մոտ միեւնույն Աբուկետան ազգանուն կրող մարդիկ միմյանց հետ չեն կարող ամուսնանալ: Ման, Դաուր, Էվենկի, Խիբո ազգություններում նույն Յալա տոհմական պատկանելություն ունեցողները չպետք է իրար հետ ամուսնանան:

Ինչեւէ, բացի մոնղոլներից, որոնք ուրիշ ազգերի հետ տոհմակից անձանց միջեւ ամուսնական տաբուներ չունեն, մյուս տոհմերի միջեւ քիչ թե

շատ որոշ հին արժեքներ գոյություն ունեն: Օրինակ՝ Ման եւ Խիբո ազգությունները ունեն երկար խաչ-էթնիկ պատմություն, եւ նրանց բոլորի մոտ առկա է միեւնույն Հալա ազգանվան պատմական էվոլյուցիան: Շենյանում Ման ազգության Մեծ ազգանուններն են՝ Գուերջիա Շի (Գուան), Յիերգենուելո Շի (Ժաո), Ֆուչա Շի (Ֆու), Նալա Շի (Նա), Յեշելի Շի (Կանգ), Վանյան Շի (Վանգ), Վուժելա Շի (Վու), Նիգուտա Շի (Լյու, Նինգ): Շենյանում Խիբո ազգության մեծ ազգանուններն են՝ Գուերջիա Շի (Գուան), Յիերգենուելո Շի (Ժաո), Ֆուչալա Շի (Գոնգ), Նալա Շի (Նա), Յեշելի Շի (Կանգ), Վանյան Շի (Վանգ), Վուժելա Շի (Վու) եւ Նիգուտա Շի (Լյու, Նինգ): Միեւնույն ազգանունը դիտվում է որպես նույն Հալա տոհմին պատկանող, եւ այդ ազգանունները կրող մարդիկ չեն կարող միմյանց հետ անուսնանալ: Նրանցից շատերն անգամ ծագումնաբանությունից ելնելով՝ իրենց ազգությունը վերագրեցին որպես Խիբո Մանժոու, ինչը դժվարացրեց այդ երկու ազգությունների տարբերակումը:

Բազմաթիվ ազգերի ներամուսնական պասկադրության սովորույթները, որ գոյություն ունեն Չինաստանի հյուսիսային մասում, անցել են ավելի քան հազար տարվա էվոլյուցիա: Մինչ օրս, բացառությամբ որոշ հեռավոր վայրերի, որտեղ դեռ գոյություն ունեն տաբուներ, ավելի ու ավելի մեծ թվով ազգություններ են խառը անուսնանում՝ հիմք ընդունելով տոհմից դուրս անուսնական համակարգը: Սա տարբեր ազգերի մեջ զարգացրել է գենետիկ հարաբերություններ, եւ հատկանշական է, որ այն բերել է դիվերսիֆիկացված հադորդակցումներ եւ տարբեր ազգությունների մշակույթների ու սովորույթների խառնուրդ, ինչը արդիականացման առաջընթացում նպաստել է հյուսիսային ազգությունների հաստատուն ադապտացիային:

## ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

# ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՏՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

## ԳԼՈՒԽ ՄԵԿ

### ՊԵԿԻՆ

#### 1. Զույգ համապատասխանեցնելը

Կույր ժամադրությունը մի գործընթաց է երկու կողմի ծնողների համար՝ մեկը մյուսի ընտանիքները ուսումնասիրելու եւ ամուսնության վերաբերյալ որոշում կայացնելու համար: Նախնական որոշում կայացնելիս նրանք հրավիրում են բախտագուշակի, որպեսզի վերջինս ճշտի նրանց ծննդյան տարեթվերի հետ կապված տեղեկությունները. սա մի գործընթաց է, որը կոչում են «համապատասխանեցում»:

#### 2. Մեծ նվերներ ընծայելը

Մեծ նվերներ ընծայել՝ նշանակում է պաշտոնական ամուսնություն ձեւավորել. կողմերից ոչ մեկը չի կարող ետ կանգնել, եւ այդ արարողությունները հիմնականում շքեղ են կազմակերպում: Փեսան պետք է մեկին հրավիրի, որպեսզի բոլոր մեծ նվերները հարսի տուն փոխադրի: Առաջին մասը դա



վիշապ եւ փյունիկ հրավերքն է՝ գրված բախտագուշակի կողմից, որի վրա նշված է հարսանիքի երջանիկ օրը, երկրորդ մասը՝ սագ ու գինին է, միեւնույն ժամանակ, սագը պետք է ներկված լինի կարմիր գույնով, իսկ գինու մեջ առկա լինեն դեղին ու սպիտակ գույները, որը կոչվում է «ոսկեգույն ու

արծաթագուն գինի», երրորդ մասը հարսին նվերներ հանձնելն է, որը կոչվում է «քառագույն նվերներ»:

### **3. Հարսին ողջունելը**

Երբ հարսնացուն ժամանում է փեսայի տան, դարբասի մոտ փեսան վերցնում է նետն ու աղեղը եւ դատարկ ճոճում հարսի ոտքերի տակ, որպեսզի չարը հեռացնի, ինչից հետո հարսնացուն մեծ քայլքով անցնում է հրե ամանի վրայով ու վերջապես դռնից ներս է մտնում:

### **4. Հարսանեկան սենյակում ծաղրելը**

Հարսանեկան սենյակում ծաղրելու սովորությամբ շատ հայտնի է Պեկինուն: Հին գաղափարների տեր մարդիկ կարծում են, որ վայրագության աստիճանի հասնող ծաղրը նրանց համար ավելի լավ կլինի, եւ եթե նրանց չնեղեն, նրանք կյանքում երջանիկ չեն լինի: Ծաղրելու բազմաթիվ ձևեր կան. ոմանք զույգի կողմը տորթեր ու մրգեր են շարտում, ոմանք առատ գինիով բազմաթիվ կենացներ են ասում, անգամ հարբեցնում են նրանց, ոմանք էլ թելով կապում են խնձորն ու զույգին հորդորում, որ հակառակ կողմերից դրանցից կծեն:

### **5. Ետ՝ հարսի տուն**

Հարսանիքից հետո երրորդ օրը հարսը պետք է ետ վերադառնա իր ծնողների մոտ, եւ հարեւանների, բարեկամների ու ընկերների հետ միասին որոշ արարողություններ կատարի: Ծնողների տուն ժամանելուց հետո զույգը առաջինը պետք է երկրպագի նախնիներին ու հոգիներին, ապա ծնկի գալով՝ ողջունի հարսի ծնողներին ու ավագներին:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

### ՇԱՆՀԱՅ

#### 1. Կույր ժամադրություն

Կույր ժամադրություն տերմինը օգտագործվում է այն դեպքում, երբ ինչ-որ մեկը հոգ է տանում այն մասին, որ տղան ու աղջիկը ժամադրված վայր ներկայանան միմյանց հետ ծանոթանալու համար:

Լինում են նաև այնպիսի իրավիճակներ, երբ կողմերն արդեն իրար ճանաչում են, նշանակում են օրը եւ երկու կողմը հրավիրում է իրենց ծնողներին՝ իրար հետ ծանոթանալու նպատակով, որը նույնպես կոչվում է կույր ժամադրություն:

#### 2. Նվերներ ընծայելը

Նախատեսվում է նվիրել առնվազն չորս կամ վեցից ութ թեյի սպասք: Ամենից կարելորդ համարվում է հարսի համար պատրաստած ոսկեղենը: Բացի թանկարժեք զարդերից, պետք է լինեն նաև ծաղիկներ, որոնց անվանում են երջանկաբեր ծաղիկներ, մշտադալար ծաղիկներ, թեյ եւ այլն, որպեսզի այդ երջանիկ գույգին մաղթեն հարատեւություն եւ ամուր միություն: Երբ այդ բոլոր նվերները հարսի տուն են բերվում, նա պետք է ընդունի այդ թանկարժեք զարդերն ու ծաղիկները, սակայն՝ մյուս նվերների միայն մի մասը: Մնացածը պետք է որոշ այլ նվերների՝ քաթանե գործվածքների, կոշիկների, գլխարկների եւ այլ նվերների հետ ետ վերադարձնի:

#### 3. Հարսին հրաժեշտ տալը

Հարսին հրաժեշտ տալու ժամանակ հարսի ընտանիքը հրավիրում է մի հասուն կնոջ, ով ունի առողջ ծնողներ, որդիներ ու դուստրեր, եւ շատ լավ հարաբերությունների մեջ է իր ամուսնու հետ կամ իգական սեռի մի օրիորդի, որպեսզի նա բացի կարմիր հովանոցը, ուղեկցի հարսնացուին եւ պաշտպանի նրան չարիքից: Մինչ հարսի դռնից դուրս գալը, այդ օրիորդը պետք է նախապես նրա համար ասեղնագործ կոշիկներ պատրաստած լինի: Երբ հարսը բարձրանա ամուսնական սեղան աթոռին, պետք է անմի-

ջապես փոխեն նրա կոշիկները, որպեսզի ցույց տան, որ աղջիկը հեռանում է տնից եւ պատրաստվում է կին դառնալ, եւ նա չպետք է իր ծնողների տան իրեղենը ամուսնու տուն տանի, ինչը նշանակում է, որ այդ պահից ի վեր նա իր ամբողջ կյանքը վստահում է իր ամուսնուն:

#### **4. Վերադարձ**

Հարսանիքից հետո երրորդ օրը փեսան պետք է հարսի հետ այցելության գնա իր գոքանչին ու աներոջը:

## ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

### ԹԱՅԲԵՅ

Թայվանի վաղ ամուսնական սովորույթներում մեծամասամբ առաջին տեղում ծնողների կարծիքն ու ամուսնարարի աջակցությունն էր: Առաջին քայլն այն է, որ տղամարդը հրավիրում է ամուսնարարին՝ նրանից աղջկա կարծիքն իմանալու, եւ նրա ծննդյան հետ կապված տեղեկությունն է ճշտում: Այնուհետեւ միջամտում է գուշակը, ով հաշվարկում է նրանց երկուսի ծննդյան հետ կապված տեղեկությունները, որպեսզի ասի՝ դա լա՞վ է, թե՛ վատ: Եթե ծննդյան մասին տեղեկությունները համապատասխանում են, ապա կարող են սկսել նշանադրության պատրաստություն տեսնել: Այս արարողության ժամանակ տղան աղջկա համար պետք է հարսանեկան տորթ եւ մատանի ուղարկի: Սովորաբար տղան նաեւ պետք է նշանադրության համար մեծ գումար պատրաստի եւ ճոխ հարսանեկան նվերներ՝ իր անկեղծությունը ցույց տալու համար: Հարսանեկան նվերների թիվը պետք է լինի վեց կամ տասներկու: Նշանդրեքի արարողության ավարտին հարսը հյուրերին պետք է հյուրասիրի մածուցիկ բրնձե գնդիկներ՝ սրտում փափագելով այն հույսը, որ այս ամուսնությունը երջանիկ եւ արգասաբեր կլինի:

Երբ գալիս է հարսանիքի օրը, տղան ու աղջիկը պետք է երկուսով երկրպագեն նախնիներին եւ հարսի ծնողներին՝ մինչ հարսի տնից հեռանալը: Այնուհետեւ դուրս գալիս հարսը պետք է թղթե հովհարը նետի, որը նշանակում է, որ նա իր վատ սովորույթները թողնում է տանը: Իր հետ բերելով վիշապակերպ եւ փյունիկապատկեր վերմակներ ու բարձեր՝ նրա գլխավորությամբ ուրախ բազմությունը շարժվում է դեպի փեսայի տուն: Երբ հարսը հարսնածուների հետ հասնում է փեսացուի տան դարպասների մոտ, նա, նախ, պետք է մեծ քայլով անցնի հրե ափսեի վրայով, հետո՝ սալիկների վրայով. այս արարողության նպատակն է սրբել, մաքրել դժբախտություններն ու նոր կյանք մտնել: Այնուհետ հարսն ու փեսան միասին երկրպագում են փեսայի նախնիներին ու նրանց ասում, որ տղան ամուսնանում է: Այդ ամենից հետո նրանք միասին գնում ու հյուրասիրում են բոլոր հյուրերին:

Իրենց հարսնասենյակում նրանք ուտում են իրենց քիմքին հաճելի բաներ, ներառյալ խնձոր, նարինջ, բանան. սա համապատասխանաբար

հատկանշում է ապահովություն, բարություն եւ բախտավորություն: Այնուհետեւ նրանք գավաթներ փոխանակելով խմում են գինի, որպեսզի այդ պահից սկսած նրանք օրհնվեն եւ իրենց կյանքը լինի կատարյալ երջանիկ ու բախտավոր: Նրանց աղմկոտ հարսանիքից հետո, փեսացուն հարսի հետ միասին կրկին վերադառնում է հարսնացուի տուն, որպեսզի երկրպագի հարսի նախնիներին: Հարսի ծնողները հյուրընկալում են նրան: Դրանից հետո ամուսնական արարողությունը մոտենում է իր ավարտին:

## ԳԼՈՒԽ ԶՈՐՍ

### ՍԻԱՆ

#### 1. Նշանադրություն

Նշանադրության համար նախատեսված նվերներն են՝ մատանիներ, նշանդրեքի գունձար, կանացի երկու կարմիր քաթանե խալաթ, երկու գոտի, երկու հագուստի ճամպուրկ (դրամեջ պետք է լինի բամբակե միջադիրով բաճկոն), հին ավանդության համաձայն՝ տատիկի բամբակե փափուկ միջադիրով բաճկոնը պետք է սերունդ սերունդ անցնի: Աղջկա ընտանիքը տղայի համար պետք է մի զույգ նոր կոշիկ պատրաստի: Նաեւ պետք է առկա լինի փոքր նվերների վեցնյակ, ներառյալ՝ վեց ջին միս (դանակի միայն մեկ կտրվածքով արված), վեց ձուկ՝ թեփուկներով (դեղին քրոկեր), վեց շիշ գինի, վեց ջին կոնֆետ (կամ վեց տուփ), վեց փաթեթ արիշտա (կարմիր թելով կապած), եւ վեց ջին անուշեղեն (կամ վեց տուփ): Ոսկեղենի ընտրությունը կախված է անհատական նախասիրությունից, եւ դրանք նախապես ընտրվում են հարսի կողմից:



#### 2. Հարսին ընդունելը

Սիանում հարսի ընդունելության համար պատրաստում են չորս նվեր: Դրանք են՝ ծխախոտ, գինի, միս եւ լոտոսի արմատներ, որոնց անվանում են «չորս նվերներ» կամ «չորս ուղարկվելիքներ»: Ծխախոտի եւ գինու հետ կապված կոնկրետ պահանջներ չկան, սակայն միսը մի քիչ առանձնահուկ է: Միս գնելիս դու պետք է մսավաճառին տեղյակ պահես, որ այդ միսը «չորս նվերի» համար է նախատեսված: Հին ավանդույթը պահանջում է, որ միսը պետք է մեկ անգամ կտրված լինի, կշռի մոտ վեց ջին՝ չորս կողոսրերով եւ եռաշերտ մաշկով. սա այնքան առանձնահատուկ է, որ

դրան անվանում են «սրտի թելերից միս»: Ըստ արձանագրված հետազոտությունների, շատ ընտանիքներում նորածին աղջիկը ծնվելիս կշռում է մոտ վեց ջին, եւ մսի այդ վեց ջինը համարվում էր մոր մի մասնիկը: Մոր համար հեշտ չէ նրան դաստիարակել, իսկ այժմ նա պատրաստվում է ամուսնանալ, նրա ամուսինը պետք է խորհրդանշական ձեւով ետ վերադարձնի այդ վեց ջին միսը:

Դիմավորող մարդկանց խումբը առավոտից պետք է դրսում սպասի: Որպես կանոն, դիմավորող մարդկանց մեքենաների թիվը պետք է կենտ լինի, եւ դրանցից մեկը պետք է գեղեցիկ տոնական զարդարված լինի: Ճանապարհ ընկնելիս նրանք պետք է հրավառություն անեն՝ մեկը նորասակների հաջողության պատվին, մյուսը՝ ժողովրդին իմաց անելու նպատակով: Եթե նրանք գյուղում դարպասի մոտ հրավառություն են անում, դա նշանակում է, որ հարսանքավորները ժամանում են: Այդ ժամանակ, հարսի հարազատներն ու ընկերները փակում են դուռը: Նրանք չեն բացում, մինչեւ նվեր չեն ստանում: Հարսանքավորները հարսի տան դարպասի մոտ կրկին հրավառություն են կազմակերպում: Հարսի ընտանիքը նրանց համար թեթեւ նախաճաշ է պատրաստում: Մի քիչ ուտել-խմելուց հետո հարսնածուները սպասում են, որ դուռը բացեն եւ հարսին հասցնեն հարսի մեքենայի մոտ: Սովորաբար փեսան հարսին ձեռքերի վրա է տանում մեքենայի մոտ: Որոշ վայրերում ասացվածք կա, որ մինչեւ իր ամուսնու մոտ գնալը հարսի ոտքը չպետք է գետնին դիպչի:

### 3. Հարսանիք

Երբ հարսնառ գնացող մարդիկ հարսի տուն են հասնում, գործի են դնում ականջ խլացնող պայթուցիկները: Երբ նորահարսն իջնում է, նա պետք է ցատկի դարպասի առջեւ դրված հրե ամանի վրայով, հուսալով, որ իրենց կյանքը այնքան բարգավաճ կլինի, ինչպես բարձրացող կրակը: Չինացիների մոտ միշտ եղել է տարբեր բաների անունից հաջողություն մաղթելու սովորույթը:


Նույնիսկ ուտելիս օգտագործվող ձողիկները ավելի խոր իմաստ են արտահայտում. այն խորհրդանշում է երջանիկ կյանք եւ, որքան հնարավոր է շուտ, լավ որդի ունենալ: Եթե տաս զույգ ձողիկ իրար հետ միասին դնեք, դա կնշանակի կատարելության գագաթնակետ: Արդի հարսանիքներում, տորթ կտրելու արարողության ժամանակ, նորասակները ձողիկները ձեռքներին կտրում են քաղցրություն ու երջանկություն մարմնավորող տորթը, ինչը խորհրդանշում է՝ «նրանք մեկընդմիշտ միասին կլինեն եւ շատ շուտով լավ որդի կունենան»:

# ԳԼՈՒԽ ԶԻՆԳ

## ՈՒՀԱ

### 1. Մեծ նվերների ընծայելը

Մեծ նվերների նվիրելը նշանավոր արարողություն է: Տղան պատեհ առիթ է ընտրում եւ հարսանեկան նվերներով ու հարսանեկան գումարով այցելում է հարսի ընտանիքին: Հարսանեկան գումարը ներփակվում է ծրարում, եւ գումարի չափը տարբեր անձանց մոտ տարբեր է: Հարսանեկան նվերների թիվը պետք է զույգ լինի, ինչը մեծահոգության իմաստ ունի: Հարսի ընտանիքը ոչ բոլոր հարսանեկան նվերները պետք է ընդունի. նրանք դրանց մի մասը պետք է ետ վերադարձնեն եւ իրենց կողմից փեսայի համար նվերներ պատրաստեն:



### 2. Անկողին պատրաստելը

Անկողինը օգտակար է նրանց առողջ պահելու եւ նրանց ամուսնությունը ներդաշնակ դարձնելու համար: Ավելին, այն գործիք է հետագա սերունդներին ապահով ծնունդ տալու համար, այնպես որ, այն հատուկ ուշադրության է արժանի: Տղան պատրաստում է մահճակալը, իսկ աղջիկը տղային է ուղարկում բոլոր անկողնային պարագաները՝ որպես իր օժիտի մի մասը: Հենց որ պահը գա, նրանք կընտրեն մի բախտավոր մարդ, որպեսզի հարսանիքից մի քանի օր առաջ մահճակալը մի հարմար տեղ դնի: Նախքան հարսանիքը այդ բախտավոր մարդը պատասխանատվություն է ստանձնում մահճակալ պատրաստելու գործում. նա մահճակալի երկայնքով տարածում է խսիրը, սավանը, վիշապ եւ փյունիկ վերմակը, բադի փետուրներից պատրաստած բարձերը եւ անկողնու ծածկոցը,

այնուհետ ցրում է բազմաթիվ հարսանեկան աղանդներ, ինչպես, օրինակ՝ կարմիր արմավ, շուշաններ, լոնգամ/մշտադալար ծառի քաղցր, հյութեղ պտուղ/ եւ այլն: Հարսանիքի գիշերը նորապսակները մտնում են իրենց հարսանեկան սենյակը: Մահճակալի վրա մի փոքրիկ երեխա պետք է ուտի հարսանեկան աղանդներից. դա ցանկություն ու մաղթանք է, որ պեսզի զույգը լավ տղաներ ու թոռներ ունենա:

### 3. Հարսնացուի գլուխը զարդարելը

Հարսանիքի նախօրյակին երկու կողմերը հարմար ժամանակ են ընտրում այս արարողությունն անցկացնելու համար, որը տեղի է ունենում հարսի տանը՝ բախտավոր անձնավորության միջոցով: Մինչ պահը կմոտենա, նոր զույգը պետք է հագնի բոլորովին նոր մնչազգեստներ եւ ներքնազգեստներ, լուսամուտի մոտ ընտրի մի սեղան, որտեղից տեսանելի կլինի լուսնի լույսը:

Այնուհետեւ նորապսակները վառում են վիշապամոմեր եւ փյունիկամոմեր եւ խնկարկում են խնկավետ գավազանն ու պատրաստում են երեք թաս բրնձե պուդինգ, դրանց մեջ լցնելով լոտոսի սերմեր, կարմիր արմավներ, ինչպես նաեւ պատրաստում են տապակած միս ու հավ: Այս ամենն ավարտելուց հետո նրանք պետք է անկեղծորեն երկրպագեն աստծոն: Ավելին, նրանք պետք է պատրաստեն քանոն, հայելի եւ մկրատ՝ անսալով կորովամտություն եւ ժառանգություն: Ապա մի բարեկեցիկ կին կսանրի հարսի վարսերը, ասելով՝ «Սանրիր մեկ անգամ երջանկության համար, երկու անգամ՝ մինչեւ կյանքի վերջ նվիրված զույգ մնալու համար, սանրիր երեք անգամ եւ կունենաք շատ տղաներ ու թոռներ»: Այնուհետեւ նա մի կարմիր թել է կապում հարսի գլխին եւ բարձր ձայնով ասում. «Բարձրացիր»,- իսկ հետո հարսը ոտքի է կանգնում:

### 2. Հարսին դիմավորելը

Ամբողջ հարսանեկան արարողության մեջ հարսին դիմավորելը համարվում է իրարհաջորդ ցնցող դեպքերի գագաթնակետը: Փեսան իր ընկերների ուղեկցությամբ կլոր ծաղկեփունջը ձեռքին գնում է հարսին դիմավորելու: Երբ նրանք հասնում են հարսի տան մոտ, նրանք պետք է ամեն ինչ անեն, որպեսզի դռնից ներս մտնեն, որի բանալին հարուստ կարմիր ծանրոցներն են: Երբ փեսան հաջող ներս է մտնում, հարսի օգնականները նրանց հյուրասիրում են աղանդերով: Երբ դուռը բացվում է, հարսին դուրս են հանում եւ հանձնում են հարսի հորը, այնուհետեւ նրա

հայրը աղջկան հանձնում է փեսային, եւ հանդիպման արարողութիւնը պաշտոնապէս սկսվում է: Նորապսակները պետք է, նախ, երկրպագեն երկինքն ու երկիրը, ապա նախնիներին, որից հետո պետք է ծնկի գան եւ ողջունեն հարսի ծնողներին եւ պատվեն նրանց թեյով:

## ԳԼՈՒԽ ՎԵՑ

### ՇԵՆՅԱՆ

#### 1. Հարսանիքի մեքենայի դուրս գալը



Փեսան իրեն ուղեկցող մեծահասակների, կուսական տղաների, օրիորդների եւ այլոց ուղեկցությամբ հարսի մեքենայով գնում է հարսի տեւեից: Ընդհանրապես, հարսի տուն գնալիս մարդկանց թիվը պետք է կենտ լինի, իսկ վերադառնալիս թիվը պետք է զույգ լինի:

#### 2. Հարսի մեքենայի հայտնվելը հարսնացուի տան մոտ

Փեսացուն թակում է մուտքի դուռը: Ներս մտնելուց հետո նա խոնարիվելով ողջունում է հարսի ծնողներին: Հետո նա թակում է երկրորդ դուռը: Այդ ժամանակ հարսի ընկերներն ու հարազատները դռան մոտ կանգնած խոչընդոտում են նրա ներս մտնելուն եւ սկսում են նրան նեղել: Ներս մտնելուց հետո փեսան ծնկի գալով՝ հարսին մի ծաղկեփունջ է հանձնում եւ նրանք մեկը մյուսին ամրացնում են կորսածները /ծաղկեփունջ/ (սովորաբար ձախ մասում՝ կրծքի մոտ):

Այդ ամենից հետո նրանք համտեսում են հարսանեկան արիշտա (սովորաբար այդ արիշտայի մեջ դնում են երկու հատ խաշած ձու եւ երկու հատ ուտելու ձողիկ): Ավելի ուշ հարսն ու փեսան հարսի ծնողների, բարեկամների եւ ընկերների հետ միասին լուսանկարվում են: Այնուհետեւ փեսացուն վերցնում է հարսին եւ տանում է դեպի հարսի մեքենան:

### 3. Հարսի մեքենան շարժվում է փեսայի տուն

Հետեւելով հարսի մեքենային՝ մյուս մեքենաները, որոնց մեջ նստած են հարսի ծնողները, հյուրերը, հարազատներն ու ընկերները, ուղղություն են վերցնում դեպի փեսայի տուն: Երբ հարսն ու փեսան իջնում են, հրավառություն է սկսվում: Հարսնացուն փեսայի մորն է տալիս ծաղիկները, այնուհետեւ նա ծնկի է գալիս փեսայի ծնողների առաջ եւ կոչում է նրանց՝ Մայրիկ ու Հայրիկ: Այնուհետեւ հարսն ու փեսան հարսի մեքենայի մոտ փեսայի ծնողների հետ միասին լուսանկարվում են:

### 4. Հարսնասենյակ այցելելը

Հարսնասենյակ մտնելուց հետո նորապսակները ջուր են խմում, որի մեջ դարչնագույն շաքար է: Հարսնացուն նստում է հարսանեկան մահճակալի վրա, եւ լուսանկարվում է իր ամուսնու հետ միասին: Այնուհետեւ նրանք հրավիրում են իրենց բարեկամներին ու ընկերներին՝ հարսնասենյակի մեջ միասին լուսանկարվելու:

### 5. Մեծարելն ու չորս նվերները

Մեծարելիս հարսն ու փեսան պետք է որոշ կարգերի հետեւեն. առաջինը՝ հարսի ընտանիքը, հետո՝ փեսայինը. ազգականները՝ առաջինը, հետո՝ գործընկերներն ու հարեւանները, ավելի ուշ դասընկերներն ու ընկերները: Նման հաջորդականությամբ նրանք պատվում են նրանց ծխախոտներով կամ ծաղիկներով. երբ նրանք պատվում են հարսի կողմը ծխախոտներով, փեսացուն վառում է ծխախոտը, իսկ նորահարսը ցածր ձայնով ներկայացնում է: Երբ որ հերթը հասնում է փեսայի կողմին, դերերը փոխվում են: Երբ զույգը վերջացնում է մեծարելը, փեսայի ծնողներն ու եղբայրները բոլոր հյուրերին պատվում են գինով՝ հետեւելով նույն նախկին հաջորդականությանը: Խնջույքի ժամանակ, եթե որոշ հյուրեր հեռանում են, հարսն ու փեսան նրանց մինչեւ դարպասի մոտ ճանապարհում են: Փեսայի ծնողները հարսի կողմից եկած երեխաներին որոշ հարսանեկան գումար են տալիս այդ առիթով: Երբ հարսի ծնողները պատրաստվում են հեռանալ, փեսայի ծնողները նրանց են հանձնում չորս նվերները. մի կտոր միս (երկու կողոսկրերով ու կաշվով), ձուկ, մի փաթեթ կարտոֆիլի լապչա, եւ մի քանի գլուխ սոխ՝ կապված կարմիր մետաքսե թելերով:

## ԳԼՈՒԽ ՅՈԹ

### ՉԵՆԴՈՒ

#### 1. Նշանադրություն

Նշանադրության ժամանակ երկու կողմը պետք է որոշ նվերներ պատրաստի:

Պրն. Նվերը առաջինն է, ով պատասխանատու է հարսանեկան բոլոր նվերների առաքման գործում: Մինչ հարսի տուն մեկնելը, նրանք, նախ, պետք է երկրպագեն իրենց նախնիներին, հուսալով, որ բոլոր նախնիները նորապսակներին կօրհնեն, որպեսզի նրանք երջանիկ, ուրախ ու բախտավոր լինեն: Այնուհետ պրն. Նվերը այդ բոլոր նվերները կտանի մեքենայի մեջ, որից հետո փեսան այդ նույն մեքենայով ամուսնարարի հետ կշարժվի դեպի հարսի տուն: Մինչ ճամփա ընկնելը փեսան պետք է շատ կարմիր ծանրոցներ պատրաստի, օրինակ, մի քանի ծանրոց՝ իր համար դարպասը բացելու համար եւ այն ընկերների, որոնք հարսի համար ջուր են տանում, որպեսզի նա իր երեսը լվանա եւ նման բաների համար:

#### 2. Նվերներ ներկայացնելը

Հարսանեկան նվերների միջոցով փեսան իր երախտագիտությունն է հայտնում հարսի ծնողներին, շնորհակալություն հայտնում, որ բազմաթիվ զրկանքների գնով դաստիարակել են իր կնոջը: Բացի այդ, դա ցուցադրում է փեսայի ֆինանսական կարողությունը: Շատ ընտանիքներ նախընտրում են շքեղ ու թանկարժեք նվերներ պատրաստել, եւ յուրաքանչյուր նվեր բարության ու բավարարվածություն խորհուրդ ունի իր մեջ:

#### 3. Հարսանեկան գործընթացները

*Ցորեն շաղ տալը:* Հարսն ու փեսան, ամենքը բռնում են կարմիր մետաքսե գնդակի մի ծայրը, ցանկալով դուրս շարտել չար բաներն ու երջանկություն փնտրել: Հարսանյաց սրահ մտնող զույգի հետ միասին ընտրված լավագույն մարդիկ եւ հարսնաքույրը զույգի առջեւ նստում են ցորեն, ընդդեմ, կարմիր արմավ, մետաղադրամներ եւ այլն. նստում են

այնքան ժամանակ, մինչև զույգը հասնում է բեմահարթակ:

*Ձեռքեր լվանալը ոսկե լազանում եւ օրհնություն կատարելը:* Ընտրված լավագույն մարդիկ եւ հարսնաքույրը բերում են երկու լազան, որպեսզի նորապսակները լվանան իրենց ձեռքերը: Լվանալուց հետո, նրանք սրբում են սրբիչներով: Այդ ամենից հետո, զույգը շրջվում է՝ թղթե լույսերը ձեռքներին, հայացքները դարձնում են ներկաների կողմն ու նրանց հետ ցանկություններ մաղթում:

*Հարսանեկան նվերներով փոխանակվելն ու խոնարհվելը առ երկիր ու երկինք:* Հարսն ու փեսան փոխանակում են հարսանեկան մատանիները, ինչը խորհրդանշում է նոր կյանքում նրանց միավորվելը: Այնուհետև հարսն ու փեսան վարում են խոնարհվելու արարողությունը:

*Գինով միավորվելը:* Դրված է լինում երկու բաժակ, որոնք կապված են թելով, եւ նորապսակները վերցնում են բաժակներն ու այդպես թելով կապած՝ խմում են գինին: Երկու բաժակները խորհրդանշում են, որ այդ զույգը երկու կողմերն են, թելով կապելը նշանակում է, որ նրանք կապված են ամուսնությամբ: Այդ կոմբինացիան հավաստում է, որ այսուհետ այդ երկու կողմը միավորվելու է: Այդ ամենն օրհնվում է, որպեսզի նորապսակները հավերժ փոխադարձաբար հարգեն ու սիրեն միմյանց:

*Վարսեր ուլորելը:* Հարսնաքույրը հարսի մազերից մի փունջ մազ է կտրում, իսկ լավագույն մարդը կտրում է փեսայի մազերից: Հաջորդիվ այս երկու բարակ փնջով վարսերը միասին ուլորում եւ դնում են այն մի փոքր պայուսակի մեջ. դա մի արարողակարգ է, որը հավաստում է, որ այդ պահից ի վեր նրանք զույգ են դարձել:

*Մետաքսե գնդակ նետելը:* Այն հյուրերը, որոնք ցանկանում են ստանալ այդ մետաքսե գնդակը, միասին հավաքվում են հարսնաբեմի մոտ: Նորահարսը մեջքով շրջվում է նրանց կողմը եւ նետում է գնդակը: Նա, ում կիսջողվի բռնել գնդակը, կհասնի իր երազանքին եւ կարժանանա լավ բախտի:

## ՄԱՍ ՅՈԹԵՐՈՐԴ

# ԲՆՈՐՈՇ ԱՍՈՒՍՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ ԶԻՆԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ԳԼՈՒԽ ՄԵԿ

#### ՋԱՅԵՐՈՎ ԱՍՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ



Զինաստանում՝ ժուան ազգային փոքրամասնությունում, լայն տարածում է գտել ջահերով ամուսնությունը: Նման շրջաններում պսակադրվելիս բազմաթիվ ուրախ ծեսեր են կազմակերպում, սակայն այս տեսակ արարողությունը նախատեսված չէ ցերեկվա համար: Նրանք պետք է սպասեն մինչեւ մութն ընկնի, եւ վառեն ջահերը, որպեսզի

տոնեն: Աստիճանաբար ժողովուրդն անվանեց այն «ջահերով հարսանիք»:

Ժուան ազգության մոտ հարսանիքի գիշերը փեսացուն իր հետ բերում է քսանից երեսուն ջահակիր օգնական: Նրանք երգելով քայլում են դեպի հարսի տուն: Երբ նրանք մոտենում են հարսնացուի գյուղին, փեսան նախ, հարսնաքրոջ հետ միասին պետք է փոխերգական ոճով երգ կատարի: Սովորաբար փեսան հաղթում է, որից հետո նրանք մի խելացի տղա են ուղարկում, որպեսզի մտնի գյուղ եւ մոտենա հարսի տան դռանը: Աղջիկները կանգնում են նրա ճանապարհին եւ երգելով հարցեր են տալիս: Մինչնա ներս կմտնի եւ հարսին կողջունի, նա պետք է հարցերին ճիշտ պատասխանի: Նորահարսը քսան-երեսուն կույսերի ուղեկցությամբ դուրս է

գալիս եւ նրանք փեսայի տուն գնալու ամբողջ ճանապարհին, որտեղ անց է կացվում հարսանեկան արարողությունը, երգում են: Երբ նորապսակները մտնում են հարսնասենյակ, երիտասարդները շարունակում են երգել, մինչեւ հաջորդ օրը լույսը բացվի:

Այս հատուկ երգելու ձեւի շնորհիվ նրանք միմյանց ճանաչում ու հասկանում են, ընկերանում, հետո նրանցից ոմանք կարող են սիրահարվել:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

### ՀՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՅՅՈՎ ՆՇԱՆԱԴՐՎԵԼԸ



Ամուրիության գաղափարը՝ ամբողջ կյանքի ընթացքում չամուսնանալ, դեմ է Հուի ազգության սկզբունքներին: Անկախ նրանից՝ իման, թե հասարակ մարդ, ամեն ոք պետք է գտնի իր կեսին եւ ինչ-որ տարիքում ամուսնանա:

Երկու կողմերի համաձայնության գալուց հետո, ինչեւէ,

նրանք պետք է միմյանց ծանաչեն ազատ սիրո միջոցով կամ ծանոթացման շնորհիվ, նրանք պետք է «որքան հնարավոր է շուտ թեյ պատրաստեն»:

Թեյի նշանադրություն կազմակերպելու օրը սովորաբար լինում է Ջումայի օրը, կամ ուրիշ այլ օր՝ շաբաթվա ուրբաթ օրը: Փեսայի ընտանիքը պետք է պատրաստի զանազան բարձր կամ միջին որակի թեյեր, որոնք հայտնի են Հուի ժողովրդի շրջանում՝ հոտավետ թեյ, կանաչ թեյ, Թուո /բուսական/ թեյ եւ այլն: Ավելին, նրանք պետք է պատրաստեն նաեւ դարչնագույն շաքար, սպիտակ շաքար, ընկույզի միջուկ, չամիչ, խուրմա, գետնանուշ եւ այլն: Այնուհետեւ նրանք այս նվերները պետք է լցնեն փոքր կարմիր կապոցների մեջ, յուրաքանչյուր փաթեթ պետք է կշռի մեկ ջին՝ որպես երջանկության խորհրդանիշ: Բացի այդ, փեսայի ընտանիքը պետք է երկուսից երեք նմանատիպ նվեր-ծանրոցների հավաքածու գնի եւ փեսան իր ու իր ծնողների անունից դրանք ուղարկի հարսին: Հարսի ընտանիքը պետք է նրանց հյուրասիրի շաքարով ու թեյով: Միջոցառումից հետո երկու կողմը բոլոր ազգականների եւ ընկերների վկայությամբ միմյանց բարեմաղթանքներ եւ օրհնանքի խոսքեր են հղում: Դրանից հետո նշանադրությունը համարում են կայացած, եւ նրանք միմյանց խոստանում են, որ այսուհետ նրանք իրենց զուգընկերօջը չեն փոխի կամ ամուսնանա ուրիշի հետ, եթե հատուկ իրավիճակներ չառաջանան:

## ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

### ՀՐԱՊՈՒՐԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ ԼԻՍՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՄՈՏ

Լիսու ազգությունը հիմնականում բնակություն է հաստատել Հունան նահանգի արեւմտյան եւ հյուսիս արեւմտյան մասերում, մասնավորապես Լանկանգ, Նու, Զինշա գետերի երկու կողմերի գետահովիտներում եւ սարալանջային տարածքներում: Լիսու ազգության աղջիկների ու տղաների համար միմյանց հետ շփվելու ամենահայտնի ձեւը ավանդական երգեցողության ոճով հաղորդակցվելն է: Լիսու ազգության համար տարածված մի ասացվածք կա. «Եթե լավ ձայն չունես, լավ կին բաժին չի հասնի»: Սրանից կարելի է եզրակացնել, թե երգ երգելը ինչքան կարեւոր դեր է խաղում տղաների ու աղջիկների սիրո գործում:

Երիտասարդները միմյանց ճանաչում են փառատոների, հարսանիքների, բերքի տոների, հասարակական հավաքույթների, բիզնես գործարքների եւ այլ գործունեությունների միջոցով: Եթե նրանք սիրահարվում են իրար, նրանք առիթ են փնտրում իրար հետ երգելու: Կան սիրախոսության մի քանի եղանակներ: Օրինակ, ամենահին ձեւը «սիրեցյալիդ գտիր լողափին» ձեւն է: Երբ գալիս է Հեշի փառատոնը, Լիսուի երիտասարդները Ֆուգոնգ շրջանում միասին հավաքվում են Նու գետի ափին, օգտագործում են հրեական տավիղներ, բամբուկե ֆլեյտաներ եւ այլ գործիքներ նվագելու, պարելու եւ միմյանց հետ շփվելու համար: Նրանք միմյանց հետ խմբվում ու զվարճանում են, եւ առիթ են փնտրում սիրած մարդ որոնելու համար:

Եթե այնպես ստացվի, որ նրանք սիրահարվեն, կան նախկինում իրար հետ ծանոթ եղած լինեն եւ ցանկանան ամուսնանալ, երիտասարդ տղան փոս կփորի լողափի մոտ, հետո կխնդրի իր ընկերներին, որպեսզի փոսի մեջ սիրող սրտի վրա ավագ լցնեն: Հետո երիտասարդները նրան թողնում ու հեռանում են, եւ տղան հեռացնում է ավագը, որպեսզի իր բաղձանքը ցույց տա աղջկան: Թեեւ էությանը հեզ ու քնքուշ են, սակայն մեր օրերում աղջիկներն իրենց կոպիտ ու խիզախ են պահում: Սովորաբար նրանք յոթ կամ ութ ընկերների հետ միասին են գործում, հարկադրաբար քաշում ու հրում են տղային ավագոտ փոսի մեջ: Անկախ նրանից, թե ինչքան ուժեղ է տղան, նա չի կարող փախչել սիրո ծաղրանքից:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՍ

### ԼԱՅՈՒ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱԺԱՆՎԵԼԻՍ ՅՅՈՒՐԵՐԻՆ ՈՒՏԵԼԻՔ ՅՐԱՄՅՆԵԼԸ



Լահու ազգության երիտասարդները հիմնականում իրենց սիրած էակներին փնտրում են փառատոներում ու հավաքույթներում: Պահանջներն իրենց սիրեցյալներից հետևյալն են. տղաները պետք է ունակ լինեն տքնելու, չարչարվելու, կուտակելու, ոլորելու, որսորդություն անելու եւ

պետք է լինեն ազնիվ ու աշխատասեր, իսկ թե ինչպիսի տեսք կունենա տղան, այնքան էլ կարելու չէ: Աղջիկները պետք է կարողանան գործել, կարել, եւ պետք է լինեն ջանասեր ու բարի, իսկ թե գեղեցիկ է նա, թե ոչ, կրկին այնքան էլ էական չէ: Եթե տղան սիրահարվում է, նա պետք է աղջկա համար մալայան արմավենի օգտագործի, որպեսզի նրա համար ոտքի ու պարանոցի շրջանակներ պատրաստի, աղջիկը նրա համար գունավոր թելերով պետք է գոտի պատրաստի, որպեսզի իր զգացմունքներն արտահայտի: Այնուհետեւ երկու կողմերը կարող են միմյանց հետ շփվել: Որոշ ժամանակ անց, եթե նրանք իրար համակրեն, տղան իր ծնողներին պետք է ասի, որպեսզի նրանք հրավիրեն ամուսնարարին՝ ամուսնական առաջարկի համար: Սովորաբար նրանք պետք է երեք անգամ առաջարկություն անեն. առաջին անգամ նրանք պետք է բերեն մի տուփ թեյ, մի տուփ ծխախոտ եւ մի շիշ գինի: Երկրորդ անգամ նրանք պետք է բերեն երկու հատ թեյնիկ՝ թեյ եռացնելու համար, երկու տուփ ծխախոտ եւ քսան գավաթ գինի: Երրորդ անգամ նրանք պետք է բերեն մի փաթեթ մահուդ, տասներկու կիլոգրամ ձավար եւ երկար կանաչ հագուստ, եւ այս անգամ նրանք կարող են ընտրել հարսանիքի օրը: Լահույում մարդիկ սովորաբար հավատարիմ են իրենց ամուսնությանը:

Անկախ նրանից գնում են նրանք ձկնորսության, թե որսորդության,

Նրանք միշտ միասին են դուրս գալիս եւ միասին էլ վերադառնում են եւ հազվադեպ են իրարից հեռանում: Եթե նրանք պատրաստվում են բաժանվել, նա ով բաժանության մասին առաջարկություն է անում, պետք է մեծ երեկոյթ կազմակերպի եւ հյուրասիրի իրենց հյուրերին, փոխարենը հյուրերը նրանց նվերներ հանձնելու կարիք չեն ունենում: Այս սովորույթը պատժի մի տեսակ է նրա համար, ով ցանկանում է բաժանվել: Ըստ լահույան ասացվածքի՝ սա կոչվում է՝ «ամուսնանալիս երեկոյթ չեն անում, իսկ բաժանվելիս երեկոյթ են կազմակերպում»: Ամուսնալուծվելիս այդ երկու կողմը պետք է լարի մի ծայրից բռնեն, այնուհետեւ ընտրեն մի վկա, որպեսզի այդ լարը մեջտեղից այրի: Դրանից հետո նրանք կարող են հեռանալ եւ այլեւս երբեք իրար չտեսնել: Կամ այս արարողությանը կարող են հյուրընկալվել առաջնորդները, այդ դեպքում երկուսից յուրաքանչյուրը ձեռքին մի մոմ է բռնում եւ նրանց մոմերը կտրում են մկրատով: Հենց այդ ժամանակ էլ արարողությունը ավարտվում է: Ընդհանրապես Լահու ընտանիքները շատ ամուր են, ուստի ամուսնալուծություններն այստեղ շատ հազվադեպ են պատահում:

## ԳԼՈՒԽ ԶԻՆԳ

### ՅՈՒԳՈՒ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅԱՐՍԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՐԳԵԼԸ



Յուզու ազգությունը մեծ կարեւորություն է տալիս ամուսնությանը, ուստի նրանք շատ հաճախ շքեղ են տոնում իրենց հարսամիքները: Հարսամիքը տեւում է երկու օր: Առաջին օրը հարսամիքը նշում է հարսի կողմը, իսկ երկրորդ օրն ավելի ճոխ ձեւով՝ փեսացուի: Սովորաբար հարսամիքների ժամանակ պետք է երաժշտություն

հնչի, ուստի այդ երկու կողմը պետք է նախապես երգիչներ պատրաստեն: Եվ երբ հարսը պատրաստվում է հեռանալ իր ծնողներից, նրանք պետք է երգեն ավանդական Հրաժեշտի երգը՝ նրա մորեղբայրների գլխավորությամբ: Երկրորդ օրը, երբ հարսնացուն հասնում է փեսայի տան մոտ, փեսացուի ընտանիքը ճանապարհի երկայնքով երկու խարույկ է վառում հարսի համար, որպեսզի նա անցնի դրանց միջով: Այնուհետեւ փեսան երեք նետ է արձակում՝ առանց գլխիկի, որպեսզի հարսին չվնասի, ինչը խորհրդանշում է, որը զույգը միմյանց կսիրի եւ միասին կծերանան: Նետահարումից հետո փեսան կոտորում է աղեղը եւ դեն է նետում այն, այնուհետեւ մի ծեր մարդ գցում է այն կրակների մեջ եւ այրում: Միայն դրանից հետո հարսը կարող է այդ տուն ոտք դնել: Այդ ժամանակ փեսայի տան տերերը հյուրերին կհյուրասիրեն ոչխարի միս, գինի եւ այլ ավորժալի ուտելիքներ: Երգիչները կերգեն Սանամեյք, որն արտացոլում է Լահու ազգի ամուսնական ավանդույթները, այնուհետեւ կանցնեն կենաց-երգերին:

Հարսանքահացի ժամանակ երկու կողմի երգիչները կսկսեն փոխերգական ոճով երգել: Նրանց երգերը հիմնականում երկու ուղղվածություն ունեն. մեկը՝ իրար շնորհավորելն է, մյուսը՝ հարս ու փեսայի միջեւ հարց ու պատասխանը:

Հարսի կողմը փեսայի կողմից պահանջում է սիրել ու հոգ տանել հարսին, մինչդեռ փեսայի կողմը պարծենում է, որպեսզի հարսի կողմին ազատի մտահոգություններից: Բացի այդ, այնտեղ ներկա են լինում լավ պատրաստված ծաղրանմանակողներ, որոնք պարողիայի միջոցով քննադատում են այդ երկու կողմերի թերությունները, ինչը զվարճության մոր շունչ է հաղորդում: Երկու կողմերը կշարունակում են այդպես երգել մինչեւ կեսգիշեր:

## ԳԼՈՒԽ ՎԵՑ

### ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՄՈՆԴՈԼԱՑԻ ԶՈՒՅԳԵՐԻ ՀԱՄԱՐ



Եթե մոնղոլացի տղան սիրահարվում է մի աղջկա, նա պետք է հրավիրի ամուսնարարին, պատրաստի սպիտակ շաքար, թեյ, սոսիսներ և այլ պարագաներ, որոնք ծածկված են սրբիչով և խորհրդանշում են եռանդ, քաղցրություն և ներդաշնակություն, որպեսզի իր համար ամուսնական առաջարկություն անի: Եթե աղջիկը ընդունի դրանք, դա կնշանակի, որ նա կարող է շարունակել: Ավելի ուշ տղան անձամբ իր ծնողների հետ առաջարկության համար կբերի հադա /ավանդական ծիսակարգի համար նախատեսված շարֆ, օգտագործում են Տիբեթում և Մոնղոլիայում/, կեֆիր, շաքար և այլն: Սովորաբար ամուսնության օրը նշանակում են միայն մի քանի անգամ առաջարկության գնալուց հետո:

Երբ աղջիկն ընդունում է ամուսնական նվերը, փեսայի ընտանիքը պետք է հարսի համար երեք անգամ գինի ուղարկի: Եթե հարսի կողմը ընդունի այդ ամբողջ գինին, դա կնշանակի, որ նրանց ամուսնական գործընթացը հաջող ընթացքի մեջ է: Երբ մոտենա նրանց հարսանիքի օրը, փեսան կրկին պետք է հարսի համար նվերներ ուղարկի, և սովորաբար այդ նվերները լինում են՝ մի ամբողջ ոչխար, գինի, թեյ և հադա: Հարսնացուն պետք է ջերմորեն հյուրընկալի նվեր-ուղարկողներին: Նրանք միմյանց հետ բաժակ են բարձրացնում, լավ խոսքեր ասում և միասին երգում են, որպեսզի տոնեն այդ առիթը:

Երբ երդոջի մոնղոլ փեսան իրեն ուղեկցող մարդկանց հետ հասնում է հարսնացուի տուն, հարսի ընտանիքը պատվում է նրանց՝ որպես ամենապատվավոր հյուրերի: Նրանք ուրախ ու երջանիկ իրար հետ ուտում, խմում, երգում ու պարում են: Այդ ժամանակ փեսայի ընտանիքի գլխավոր

րը փեսացուի հետ միասին առանձնանում ու գնում են դեպի հարսի սենյակ: Մինչ նրանք նստած են հյուրերի աթոռներից, հարսի ընկերները նրանց հյուրասիրում են ոչխարի խաշած վիզ եւ փեսային առաջարկում, որ այդ վիզը մեջտեղից երկու մասի բաժանի, որպեսզի ստուգեն նրա ուժն ու հաջողության հասնելու կարողությունը: Փեսացուին ջղայնացնելու համար հարսի ընկերները ոչխարի կոկորդի մեջ վաղօրոք խրում են փայտ կամ պողպատե ձող: Եթե հավաքվածներից փեսային ուղղություն ցույց տան, նրանց օգնությամբ նա կհասկանա այդ հնարքը եւ կհեռացնի այդ փայտիկը կամ ձողը, այնուհետեւ հեշտությամբ կկոտրի վիզը: Որոշ փեսաներ, չեն կռահում այդ խաղի հնարքը եւ մեծ ուժ են գործադրում. քրտնում են, բայց դեռ ապարդյուն, ինչը նյարդայնացնում է նրան եւ ամոթալի դրության մեջ դնում: Այդ ժամանակ հարսնացուի ընկերները ծաղրում են փեսային մի քիչ կծու, բայց սիրալիր խոսքերով:

## ԳԼՈՒԽ 3ՈԹ

### ԴՈՆԳՍԻԱՆԳ ԱԶԳՈՒԹՅՈՒՆ. ՀԱՐՍՆԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԲԱՐՁԵՐՈՎ ԿՈՎԵԼԸ

Դոնգոսիանգ ազգի մեջ հարսանիքը նման է հանդիսավոր ճաշկերույթի: Հարսանիքի օրը երկու ընտանիքները շատ ուրախ ժամանակ են անցկացնում: Նրանց հարազատները, ընկերները, հարեւանները բոլորը միասին հավաքվում եւ հանձնում են իրենց նվերները: Տոնահանդեսի ժամանակ մատուցվող ուտելիքները հիմնականում բոված ալյուրից պատրաստած տարատեսակ ուտելիքներ են, ոչխարի միս, հավ եւ այլն: Ճաշկերույթին նրանք ծխախոտ կամ գինի չեն նախատեսում: Հարսանիքի օր նշանակելու մասին երկու կողմերը կարող են միմյանց հետ ազատ քննարկումներ անել: Հարսանիքները հիմնականում նախատեսում են աշնանը՝ բերքահավաքից հետո, կամ ձմռան ազատ օրերին, ընտրելով ուրբաթը՝ որպես բարեհաջող օր, որը Ջուլայի օրն է: Իրենց հարսանիքի օրը նրանք մի քանի պարզ իսլամական ծեսեր են անցկացնում: Երբ փեսացուն պատրաստվում է հյուրընկալվել հարսի տանը, հրավիրում են իմամին /մահմեդական կրոնավոր/ եւ խնդրում, որպեսզի երկու կողմի ամուսնությունը վավերացնի, այնուհետեւ նա ընթերցում է Նիկա, ինչը նշանակում է, որ նա հանդիսանում է ամուսնության գլխավոր վկան եւ նրանց ամուսնությունը հասարակության շրջանում ճանաչելի կլինի: Երբ իմամը վերջացնում է Նիկա ընթերցելը, հարսանիքի վկան պարզում է ափսեի մեջ դրված ընկույզներն ու արմավները շուրջբոլոր կանգնած մեծերին ու երեխաներին, ինչը խորհրդանշում է այն հույսը, որ նրանք շատ շուտով կարող են երեխաներ ունենալ: Երբ հարսնացուն հասնում է փեսայի տուն, իր եղբոր թեւը բռնած պետք է իջնի հարսանեկան սեղան աթոռից, ապա բակ մտնի: Հարազատներն ու ընկերները հավաքվում են միասին եւ Հալի երգելով տոնում են: Հյուրերից մեկը պետք է գլխավորի Հալի աղաղակման գործընթացը, իսկ ամբոխը հետեւի նրան: Նրանք ռիթմի հետ ձեռքերով ծափ են տալիս, ոտները իրար միացրած՝ ասես ձի հեծած պտտվում են աջ ու ձախ: Գիշերաժամին նրանք նաեւ հարսնասենյակում մի լավ հունից հանում են նորապսակ զույգին:

Հարսնասենյակում բարձեր նետելն ու նրանց նյարդերի հետ խաղալը շատ հետաքրքիր է: Խռնված մարդիկ վերցնում են նախօրոք պատրաստած բարձերն ու դրանք նետում են հարսի ուղղությամբ, ով մահճակալի

մի անկյունում շալերով փաթաթված է: Նրա ընկերները պաշտպանական գիծ են կազմում եւ բարձերը որսալով՝ նորից դրանք ետ են շարտում: Նրանք ծիծաղում ու գոռում են, ինչը շատ աշխույժ է: Այնուհետեւ հարսի ընկերները նրա քողը հեռացնում են եւ ամբոխի առջեւ հանդիսավոր կերպով բացում են նրա դեմքը: Միեւնույն ժամանակ նրանք բացում են տուփերն ու ցուցադրում են թանկարժեք օժիտը:

Միայն լռին գիշերում, ձայները մարելուց հետո, հարսն ու փեսան կարող են վայելել իրենց քաղցր գիշերը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՆԱԽԵՐԳԱՆՔ. ԿՈՒՅՐ ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ.....4

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ԿԱՏԱՐՅԱԼ ՄԻՈՒԹՅՈՒՆ.....4

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ԱՍՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՈՒՆ ՀԱՐՑՆԵԼԸ.....10

ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՔՈՒՄ.....14

### ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ՀԱՐՍՆԱՑՈՒՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՄՈՐ ՏՆԻՑ.....18

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ՈՒՂԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՓԵՍԱՑՈՒԻ ՏՈՒՆ.....23

ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ.....28

ԳԼՈՒԽ ՉՈՐՄ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԳԻՇԵՐ.....32

### ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ. ՀԱՐՍՆԱՑՈՒԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ԱՍՈՒՍՆՈՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՆ ԻՐ ՄՈՐ ՄՈՏ.....37

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ՀԱՐՍՆԱՑՈՒԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՍՈՒՍՆՈՒ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ.....37

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ԵՐՐՈՐԴ ՕՐԸ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ.....40

### ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՍՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ.....45

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ԱՍՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....45

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ՀԱՏՈՒԿ ԱՍՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....50

### ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՍՈՒՍՆԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ.....55

ԳԼՈՒԽ ՄԵԿ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՐԳԵԼՔՆԵՐ.....55

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՎԵՐՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔՆԵՐ.....57

ԳԼՈՒԽ ԵՐԵՔ	
ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՆՎԵՐՆԵՐ ՏԱԼՆ ՈՒ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ.....	59
ԳԼՈՒԽ ՉՈՐՍ	
ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՏՈ ՀԱՐՍԻ՝ ՏՈՒՆ ՎԵՐԱՂԱՌՆԱԼՈՒ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ.....	61
ԳԼՈՒԽ ՀԻՆԳ	
ՏԱԲՈՒՆԵՐ ԱՍՈՒՄՆԱՐԱՐԻ ԳՈՐԾՈՒՄ.....	63
ԳԼՈՒԽ ՎԵՑ	
ՉԻՆԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԵՐԻ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ.....	65
ԳԼՈՒԽ ՅՈԹ	
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ.....	67

**ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ**

ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՏՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ.....	69
--	----

ԳԼՈՒԽ ՄԵԿ	
ՊԵԿԻՆ.....	69
ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ	
ՇԱՆՀԱՅ.....	71
ԳԼՈՒԽ ԵՐԵՔ	
ԹԱՅՔԵՅ.....	73
ԳԼՈՒԽ ՉՈՐՍ	
ՍԻԱՆ.....	75
ԳԼՈՒԽ ՀԻՆԳ	
ՈՒՀԱ.....	77
ԳԼՈՒԽ ՎԵՑ	
ՇԵՆՅԱՆ.....	80
ԳԼՈՒԽ ՅՈԹ	
ՉԵՆԴՈՒ.....	82

**ՄԱՍ ՅՈԹԵՐՈՐԴ**

ԲՆՈՐՈՇ ԱՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	84
---	----

ԳԼՈՒԽ ՄԵԿ	
ՋԱՀԵՐՈՎ ԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ.....	84
ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ	
ՀՈՒՒ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԵՅՈՎ ՆՇԱՆԱԴՐՎԵԼԸ.....	86
ԳԼՈՒԽ ԵՐԵՔ	
ՀՐԱՊՈՒՐԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ ԼԻՍՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՄՈՏ.....	87
ԳԼՈՒԽ ՉՈՐՍ	
ԼԱՀՈՒ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱԺԱՆՎԵԼԻՍ ՀՅՈՒՐԵՐԻՆ ՈՒՏԵԼԻՔ ՀՐԱՄՑՆԵԼԸ.....	88
ԳԼՈՒԽ ՀԻՆԳ	
ՅՈՒԳՈՒ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՐԳԵԼԸ.....	90
ԳԼՈՒԽ ՎԵՑ	
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՆԴՈԼԱՑԻ ԶՈՒՅԳԵՐԻ ՀԱՄԱՐ.....	92
ԳԼՈՒԽ ՅՈԹ	
ԴՈՆԳՍԻԱՆԳ ԱԶԳՈՒԹՅՈՒՆ. ՀԱՐՍՆԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԲԱՐՉԵՐՈՎ ԿՈՎԵԼԸ.....	94

ԴՈՆԳ ԶԻԱՆԳ

# ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Անգլերենից թարգմանությունը՝  
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ

Չինարենից անգլերեն թարգմանությունը՝  
Չժան Դիի

Ստեփանակերտ 2017

Հրատ. խմբագիր՝ Յ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան  
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի  
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 70x108  $\frac{1}{16}$ : Ծավալը՝ 6.25 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Յ. Հակոբյան

## «ԳեՂարմ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից»- 2010  
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011  
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012  
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,  
Վ.Խոդասեւիչ/ - 2012  
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012  
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012  
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012  
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013  
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014  
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,  
Լ.Ռուբինշտեյն/ - 2014  
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014  
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014  
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015  
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավվածքը»- 2015  
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրը. Պատմվածքներ» - 2015  
Արդի ռուսական վերլիբռ (ամթոլոգիա) - 2015  
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015  
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015  
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015  
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015  
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015  
Ռուս այլախոհական պոեզիա (ամթոլոգիա) - 2015  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ(հատոր 1) - 2016  
Յու Ջիան. «Անձրևից պատսպարվող թռչունը» - 2016  
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից» - 2016

Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016  
Վան Զենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» - 2016  
Լյուդմիլա Պետրուշենսկայա. «Սեր. երջանկություն. ռեքվիեմ» - 2016  
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016  
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան» (անթոլոգիա) - 2016  
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016  
Իձիյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը,  
դաոսիզմը, քրիստոնեությունը և չինական մշակույթը»- 2016  
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ(հատոր 2 և 3) - 2016  
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017



Ոգի-Նաիրի  
Vogi-Nairi

Էլ. հասցե՝ [vogi.nairi@mail.ru](mailto:vogi.nairi@mail.ru)

հեռ.։ +37497252323